




drawn by V. R. A. R. ©

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՀԱՅԿԱԶ	Երգանկութիւն
Վ. ԹԵՔԵԱՆ	Բանաստեղծութիւններ
* * *	Պիերոյական ջրապոռոյտներ
Ե. ԶԱՐԵՆՅ	Ափիլիէս, քէ Պիերո
Ն. ՏԵՐ ՍԱՐԳՍԻԱՆ	Հանրային պարտէզ
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Հիւրընկեր
»	Քամին շատախօս
Պ. ՀԵՐԵԱՆ	Մաւաղապաշտ ոգի
»	Որովեհտեւ
Ս. ՊԵՏԻՅ	Սպասելով Կոստան
Ք. Հ.	Անկեղծի թատրոնին գլուխ-գործերը
* * *	Համագաղա Նորհատեան
Կ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ	Ե. Զարեհի «Երկիր Նայիրի» եւ «Երեւանի ռազմիչ տնից» գործերը
Մ. ՂԱԶԱՐԵԱՆ	Մի լուսանկարի հետքերով
Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ	Տանկահայերի հառաչանքը
»	Կարիւնի կոտորածը
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Յ. Մանուկի «Կռուկ ուտի՞ր կու գաս» հատորը
ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ	Մայքլը Ալլէն Կրտսերի «Իհպի Արարատ» հատորը
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Ա. Մարտիրոսեանի «Բանաստեղծութիւններ»ը
* * *	Նշաններ

2000

Բազմ

ԱՅՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. ՅԱՐԻ. ԹԻԻ Զ ԺՅԵՐՈՒԱՐ 1979 ԳԵՐԳՐԻԺ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ

Հետագայ գրութիւնը ապարանին մէջ գտնուող Արամ Հայկազի պատմութիւններու նոր հատորին առաջին հատորն է, որուն անունով կ'ըզուած է նաեւ հատորը, — «Երբեմնիքիւն».

Սահմանափակ թանկանքներով լեցուն եւ հետեւորար երջանկութեան զի պատմաւորն ունեցող գրողէն մը, Արամ Հայկազ, որուն գրականութիւնը սակայն իր տարրերը կազմեց կեանքի մայրութիւնները բարեխառնող գեղաներէն, լուսանկարութեան եւ զուարթախոսութեան մաշուր սկիւրէն, դառնալով վիպութիւններէն մէկը կեանքը վերանուստեմուցելու մեր տոռլ ընդգրկն:

Համազգայինի զՎահէ Սէթեանի ապարանին թանկանքով «Երբեմնիքիւն» հատորին ապագրութիւնը տարածած է արդէն եւ շուտով կը գրուի ընթերցողին արժանազութեան տակ:

Երջանկի մարդ մըն եմ ես: Զկարծէք, թէ շատ մը ուրիշ մարդերէ աւելի պատմաւորներ ունիմ երջանկի ըլլալու... Հաւանաբար ինձմէ աւելի թախտաւորներ շատ կան. կան նաեւ ինձմէ աւելի նըւազ երջանկի ըլլալու պատճառ ունեցողներ... Աշխարհի վրայ ի՞նչ բան հաւատար է բաշխուած, որ երջանկութիւնն ալ հաւատար բաշխուած ըլլայ... Արեգակը, երկինքէն իջող ձիւնն ու անձրիւք, նոյնիսկ խնկը հովերը անհաւատար չէ՞ն բաժնուած: Գիտեմ նաեւ, թէ ինչպէ՞ս անամալ երկինք, նոյնպէ՞ս ալ անվիշտ անձ ու կեանք չկայ: Ձուր է խառնուած մեր երջանկութեան պինիին:

digitised by A.R.A.R.@

164 - 91770

Այսուհանդերձ, գինովի մը պէս, որ միշտ խմելու պատճառ
մը կը գտնէ, ես ալ երջանիկ ըլլալու պատճառ մը կը գտնեմ:

Տարիներ առաջ, Նշան անուն դրացի մը ունէի: Գինով ու ան-
հունօրէն բարի մարդ մը: Կուսակցական էր: Շատ կը հետաքրքրուէր
ազգային գործերով: Կը հաւատար, թէ ազգային նաւը անսպառնով
ջուրերու մէջէն խաղաղ ծովեր առաջնորդելու ընդունակ մարմինը
միայն իր պակասած կուսակցութիւնն էր: Ու եթէ ազգային դո-
ծերու ղեկավարութիւնը ուրիշ ձեռք անցնէր, աներկբայօրէն ազգը
պիտի երթար գէպի կործանում:

Ամէն րոտութիւնէ ետք, իր սիրած, պաշտած ու պատկանած
կուսակցութիւնը շահէր կամ կորսնցնէր, գինով կը գտնէի գինք:
Եթէ շահած ըլլար իր կուսակցութիւնը, կը խմէր՝ տօնելու համար
յազթանակր. եթէ, Աստուած մի՛ արասցէ, կորսնցնելու ըլլար — ինչ
որ ազգային աղէտ մը կը համարուէր — կը խմէր՝ ամոքելու հա-
մար իր խորունկ ու անմար գիշոր:

Եւ որովհետեւ իր գինով եղած պահերուն երջանիկ էր, ու-
րեմն իր երջանիկ եղած օրերուն ու պահերուն ընդհանուր գումարը
բարձր էր մեր ունեցածէն:

Արեւելքէն թէ Արեւմուտքէն եկած հեքիաթ մը կայ, ուր, ան-
ցորդ մը, անծանօթ գիւղի մը մէջ գնացքին ապաստած պահուն, ծանձ-
րոյթը փարատելու համար, կ'երթայ թափառիլ կայարանին մօտ
գտնուող գերեզմանատան մէջ: Կարդալով գամբանաքարերուն ար-
ձանագրութիւնները՝ կ'ազդի, տեսնելով, որ այդ գիւղի մարդերը
չա՛տ կարճ կ'ապրին... «Երկու տարի»․ «Ձորս տարի»․ «Ութ շա-
քաթ»․ «Ձորս օր», եւայլն: Բացատրութիւն մը գտնելու անկալու-
թեամբ կը հարցուփորձէ գերեզմանապահը: Ան կը պատասխանէ,
թէ քարերուն վրայ արձանապրում օրերուն կամ տարիներուն թիւը
որեւէ՛ կապ չունի քարերուն տակ պառկած յաւիտենական քունով
ննջողներուն տարիքին հետ...

— Հապա թ'նչ...

— Այդ թիւերը՝ մեռնողներուն ապրած երջանիկ օրերուն ընդ-
հանուր գումարը կը ներկայացնեն, — կ'ըլլայ պատասխանը:



Հիմա, ես ալ, կը խորհիմ, որ եթէ օր մը մեռնելու ըլլամ,
ու մէկը մեռնարկէ վերայիշեալ սկզբունքով քար գնել տալ վրաս,
ապրած երջանիկ օրերուս գումարը ըլլալու է բաւական բարձր, նա-
խանձելի՛ ըլլալու չափ բարձր:

Ապագային այս գործը ընել ստիպուած մարդոց հաշիւը գիւ-
րացնելու համար, սկսած եմ օրագրութիւն պահել, ու ապրումս իւ-
րաքանչիւր երջանիկ օրուան գիմաց խաչանշել:

Կրնայ ըլլալ, որ ձեր մտքին մէջ Հարց ծագի, թէ ի՞նչ տեսակ
օրեր բարենիշի արժանի կը համարեմ: Մեր նախամօր՝ Եւայի դրախ-
տէն արտաքսուելէն ի վեր, — ի՞նչ չտես Աստուած՝ և. Մէկ խնձորի՞
համար — աշխարհի վրայ կա՞յ իրական երջանկութիւն:

Ես համոզուած եմ, թէ կայ: Երջանկութիւնը հոգեկան միջակ
է: Այդ անունով անասուն գոյութիւն չունի: Ձի՛ տեսնուիր, չի՛ շո-

չափուիք, բայց անպայմանօրէն դոյութիւն ունի: Օրինակի համար, երջանկութիւն է՝ երբ ամիսներէ ի վեր տունդ հիւր գտնուող շառա-
խօս զոքանչդ կը սկսի իր ճամբորդական պայտասակին փոշիները առ-
նել... Երջանկութիւն է՝ երբ առտու կնոջդ ժայնը կը քաշուի եւ
բժիշկը կ'աւետէ, թէ հազիւ մէկ ամիսէն, կամ՝ աւելի լաւ, քառա-
սուն օրէն կը բացուի... Այն ատեն կրնաս խաղաղ սրտով բանալ օ-
րագիրդ ու խաչանշէլ դալիք այդ բոլոր 40 օրերը...

Ըսի արդէն, թէ երջանկութիւնը հոգեկան վիճակ է: Երբ առ-
տու կանուխ արթննամ ու անկողնիս հանդիստին մէջէն, առանց
սալքերս բանալու, լսեմ կաննեխի մը կամ ցախաբոխի մը երգելը,
առարժանաւ մը պարտէզին կամ տանա կատարին վրայ սուլելը, եր-
ջանիկ կ'ըլլամ, որովհետեւ կը գիտնամ, թէ օդը պայծառ է ու եր-
կինքը կ'ապոյտ: Ուրիշ մը, իմ տեղս, անտարբեր այդ երգին ու կա-
պոյտին, թերեւ թշուառ պղծ՝ առտու կանուխ թռչուններուն կող-
մէ քունէն արթնցումը ըլլալուն համար:

Մարտի թաց ու մշուշոտ առտու մը, երբ արթննամ ու պա-
տուհանէս դուրս դիզուող դեղին մշուշին վրայ իյնայ նայուածքս,
կ'ըսեմ ինքզինքիս, թէ զգարունը մօտ ըլլալու է, ու շուտով պիտի
ծաղկին պարտէզիս մանրակները: Նոյնիսկ անոնց բուրումը առնել
կը կարծեմ ու ատենակերս կը թրթռան...

Ուրիշ մը, նոյն պատկերին ու նոյն պայմաններուն մէջ, հա-
ւանաբար քսէ՝

— Օ՛, Առտուա՛՛ իմ, ի՛նչ անտանելի օր ու օդ...



Տարիներ տառջ, ամուսնանալէ ու երկու մատղաշ ձագեր ու-
նենալէ ետք, երբ դեռ անոնք շատ փոքր էին, մահացու կերպով հի-
ւանդացայ: Բնականաբար, դիտակ վիճակիս, հիւանդանոցի անկող-
նիս մէջ մռայլ էի ու թշուառ, մտահոգ: Հիւանդագահուհիս, իր-
լանտացի կապուտաչուի, գիրուկ, նուիրուած ու խորապէս հաւա-
տացեալ աղջիկ մը, իր կարեւրին կ'ընէր օրերս հնարաւոր չափով
քաղցրացնելու, տանելի դարձնելու համար:

Գարնան դէմ էր, լաւ կը յիշեմ, առաւօտ մը, ներս՝ սենեակս
մտաւ, բացաւ պատուհանիս փեղկերը, որոնցմէ արեւը ներս խու-
մեց, դուարթ «կօւտ վարմիկ» մը նծուց ինծի, ցանոտ փոքրիկ զիթը
ճմուռ, ժպտեցաւ լայնօրէն ու բաւալ, թէ դուրսը դարուն է: Ետնիք-
ներուն վրայ ազանիները կը սիրաբանին, փառքի սթոունները, բո-
լո՛րը, արդէն արեւ խնդրեցով գրաւուած են ու ծառերու մորճերը,
ռուած, վսղը միւս օր կը պայթի՛ն:

Վերմակս ու բարձը շտկեց ու վազեց դուրս՝ նախաճաշս բե-
րելու:

Երբ դուրս ելաւ, ինծի թուեցաւ, թէ հիւանդի խուցիս մէջ ին-
կած արեւուն ճառագայթը իրեն հետ դուրս տարաւ: Հազիւ տխրելու
ժամանակ էի ունեցած, երբ կերակուրիս ավաւտով վերադարձաւ,

Թ. յունիս

զայն տեղաւորեց առջեւ, վերձակով ծածկեց ուսերս եւ, աչքերուս
մէջ նայելով՝ ըսաւ.

— Շուտով պիտի աղէկնաս :

— Ինչէ՞ն գիտես :

— Ա՛ն ըսաւ :

— Անը ո՞վ է :

— Սուրբը: Առտու, գործի դուլէ առաջ, հանդիպեցայ եկե-
ղեցի եւ աղօթեցի :

— Ու զան՞ ըսաւ քեզի, թէ պիտի բուժուի՞մ :

— Այո՛ :

Անցած օր է. գիտեմ, թէ ժպտեցայ այդ քաղցր ու բարի աղ-
ջըկան միամիտ հաւատքին վրայ: Ո՞վ գիտէ, թերեւս ալ, ներքնա-
պէս հաւատացի՞ իր բերած բարի լուրին...

Ի՞նչ լաւ բան է հաւատք ունենալը, մտածեցի: Բռնեցի իր
փոքրիկ, սիրուն, սիրտարար ձեռքը ու գորովով համբուրեցի:

Տարակոյտ չյայտնեցի Սուրբին ըսած «պիտի բուժուի՞ն»...
Ինչո՞ւ պաննել այդ աքանջիկի աղջկան կուրծքին տակ գրուած հա-
ւատքը, երբ անոր տեղ դնելու աւելի լաւ բան մը չունէի...

Պահ մը լուս խորհելէ ետք, չեմ գիտեր ինչո՞ւ, հարկ տեսայ
բացատրութիւն մը տալ.

— Ինծի՛ նայէ, սիրելի՛, սիրելի՛ էմմա, բարե՛ր աղջիկ, մա-
հէն վախճալու համար չէ, որ տխուր եմ, հաւատա՛ւ Հաւատա՛՛
եթէ Գաբրիէլը այսօր զայ գիտ նախասահմանուած տեղը, «վերջ կամ
«վարձ տանելու, «վաղը եկուր» չեմ բռնը... Բայց կ'ուզեմ դեռ քա-
նի մը տարի ապրիլ, որ գաւակներս, որոնք դեռ փոքր են, անչափա-
հաս, որբութիւն չճանչնա՞ն... Ես բաւականաչափ վայլած եմ որ-
բութեան թշուառութիւնն ու բարիքները... Այդ բաներուն համը գի-
տե՞մ... Կ'ուզեմ, որ անոնց խնայուի: Այդ է ուզածս :

— Անհոգ եղի՛ր. այո առտու, երբ Սուրբին կ'աղօթէի, ան
ըսաւ ինծի, թէ շուտով պիտի բուժուիս ու երթաս տուն :

— Եթէ այդ օրը զայ, եթէ տուն երթամ, պիտի կարօտնամ
քեզի, ու երբեմն դամ քեզ տեսնել :

— Ա՛, կը մոռնա՞ս... Բոլորն ալ այդպէս կ'ըսեն՝ ու յետոյ...

— Յետոյ ի՞նչ :

— Յետոյ կը մոռնա՞ն :

— Էմմա՛...

— Այո :

— Էմմա՛, անո՛ւչ էմմա, ջանի՛կ, բան մը պիտի հարցնեմ քե-
զի. եթէ չես ուզեր՝ մի պատասխաներ. բայց ուրախ պիտի ըլլամ,
եթէ պատասխանես :

— Եւրթ (հարցում), — ըսաւ էմմա կարճ ու կտրուկ :

— Գիտեմ, որ ամէն առտու գործի դուլէ առաջ՝ եկեղեցի
կ'երթաս աղօթելու, — ըսի՝ իր ձեռքը արիւս մէջ առած, — Հիմա
գիտեալ ուզածս այս է. հոն բոլոր հիւանդներուդ համար կ'աղա-
թե՞ս, թէ ոչ...

— Մասնաւորներու, — պիտի բռնէի, — չձգեց որ աւարտեմ,
ափսէն առաւ ու, թեթեւ մը կարմրած՝ փախաւ դուրս :



Շատ տարիներ ետք, տօնական օր մը, ամէնքով, այսինքն՝ կնոջ ու զաւակներու հետ, քաղաքէն դուրս գտնուող ծովափնեայ ճաշարան մը դացեր էինք։ Ձուրերուն վրայ նայող պատուհանի մը քով դրուած քառակուսի սեղանի մը շուրջ, գէժ դիմաց նստած, որոշեցինք, թէ ի՞նչ պիտի ուտենք։ Մեզմէ իւրաքանչիւրը տարբեր բան ընտրեց։ Պատուհանէն ներս խուժող օդին մէջ ծոփու եւ խոտի բուրում կար։ Ազտպրեցինք մեր ճաշը ու շիշ մըն ալ ընտիր գինի։ Խցանք բացի ես։ Լեցուցի բոլորին բաժակները ու, զաւակներուս դռնաբանով՝ ըսի։

— Այ մեծցա՛ք, ձագերս... Այսօր, կաթի տեղ, կրնաք գինի խմել, — բաժակս վերցնելով՝ մօտեցուցի դէմքին, որ շնչեմ խաղաղի հիւթին թթուաշ բուրումը, — գիտէ՞ք, զաւակներս, երբ ես հագիւ մեր տարիքն էի, դիշեր մը, մեր քաղաքին մէջ հրդեհ ծագեցաւ. հայրս ու եղբայրներս, որոնք դեռ աշխարհի շորս ծագերուն չէին ցրուած կամ սրածուած, ըստ սովորութեան, հօրս հետ վազեցին կրակը մարելու եւ, ի հարկին, հակելու իրենց խանութներուն վրայ։ որ թուրքերը, պատահութենէն օգտուելով՝ չաւարէն անոնց պարանակութիւնը։ Քանի մը ժամ ետք, վերադարձան ու վերտան անկողին մտնելէ առաջ, հայրս, վար, գետնատան մատանը դրկեց եղբայրներէս մէկը, որ երթայ ու հոն գտնուող մեծ տակաւնէն փարչ մը գինի բերէ վեր։

— Արա՛մ, դուն ալ դնա՛ հեալ, որ լաճան բռնես, — ըսաւ ինծի։

Մութ-կարմիր, գրեթէ սեւին տուող գինի մըն էր։ Լեցուցինք փարչը, ու մէկ-մէկ քիչ ալ՝ մեր փորը։

— Երբ վեր երթանք, լուր չտա՛ս, թէ վարը մենք համսեւեցինք, — պատուիրեց եղբայրս՝ Լեւոնը, որ յետոյ Ռուսաստան դնաց, ու հոն մեռաւ։

— Ձէ՛, լուր չեմ տար, — ըսի՝ զլուսն ժխտական շարժելով։

Վերը, զուարթօրէն շողակրատելով, բոլորս ալ խմեցինք գինին ու, հանդարտած ջիղերով՝ դացինք անկողին։ Այն օրէն ի վեր, երբ կարմիր գինի խմեմ, կամ անոր բուրումը շնչեմ, այդ գիշերը կու գայ միտքս... Ձարմանայի է, թէ ինչպէ՞ս բուրման նման չբռնուող, չշօշափուող, գրեթէ չբացատրուող բան մը յաճախ կը յամառի կանչած մնալ մեր յիշողութեան մէջ... Ահա կէս դար է ինչ, այդ բուրումը կը յարատեւէ յիշողութեանս մէջ։

Հազիւ պատմութիւնս աւարտեի էի, երբ աղջիկն առաջարկեց, որ խմենք մեր ընտանիքին հին ու նոր անդամներուն կենացը։

Բաժակները զարկինք իրարու։

Յիշատակներ կը խռովէին հողիս։ Յուզումս թաքցնելու համար ոտքի ելայ, ու պատուհանէն դուրս տեսարանը դիտելու պատրուակով, կոնակս դարձուցի իրենց։ Շա՛տ կապոյտ երկինքին վրայ ամպի հեաք իսկ չկար։ Մօյը խաղաղ էր։ Ալիքները ափ կը հասնէին գրեթէ։ ձայները ոտսից կ'որոսային, ու սրբնթաց ելեկարաշարժ մակոյկ մը, պոչին փրփուր կապած՝ գէպի բաց ծով կը սուրար։

— Աշխարհը գեղեցկութեամբ լեցուն տեղ մըն է, — ըսի ինքնիբենս, — կը թուի, թէ Աստուած իր գործը գիտէր՝ զայն կարգի գրած պահուն։

— Մարդ, ո՛ւր գացիր, սեղան հկուր, — ըսաւ Թիկինը։

— Ներողութիւն։

Գինին տաքցուց գլուխս ու բացաւ ախորժակս։

Հանոյտի ճաշէ մը ետք, երբ ծառայողը բերաւ հաշուեցոյցը, տղտաւ, թէ կը հրկարելով, յափշտակեց զայն ու գրաւ գրպանը։

— Ինչո՞ւ գրպանեցիր, աղա՛ս, տուր ինծի, որ գուրս ելած պահուս վճարե՛մ։

— Փափա՛հ, դուք այսօր բոլորդ իմ հիւրս էք։

— Բա՛յց...

— Բայց-մայց չկա՛յ. դուք այսօր բոլորդ իմ հիւրս էք։

— Առաջուց չըսէի՞ր, որ սուղեոց բաներ ապսպրէի՞ր...

Ամէնքով խնդացինք։ Իսկ ես հրջանիկ էի։ Տղտա մեծցած էր։ Վաստակի իբ թեւերը բուսած էին։

Բացի ծոցտետտոս ու, օրուայ թուականին առջեւ, հաստատ ձեռքով մը դրի երջանկութեան խաչանիշը։

Ձեմ գիտեր ինչո՛ւ, գուրգուրանքով յիշեցի նաեւ իրլանտացի կապուտաչուի հիւանդապահուհին, ու որտիս զարկը թեթեւ մը արագացաւ...

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

✠

Հոգեկայան

Ո՞վ ինձ անտիսի
թռչուններ կը գրկէ

Եւ տատանելով
հոգոտ մամբաներէն
իմ ստուերս կ'իջնէ
աշման պատուհանիդ
կարօտի վարագոյրները
պատուելով կ'իջնէ

Ստուերս հեշտահեղձ վիշտի պէս կ'իջնէ

Վերջին ճիչը կոկորդիս մէջ բռնած
ու խեղճած կ'իջնէ
ծալապատիկ կը նստի մաշած զարգի մը վրայ
ու լուսաբորբ աչքերով
մթին էջերը կը դարձնէ կրկին
հետացումներուդ
հեմֆին վրայ անմաշ

Մեր հում վիպապաշտ
մեր մեռած ձայներու ռատայններէն
ստուերս ճամբորդոյ սերմի նման
կը տեղաւորուի
եւ քարերու պէս անհարթ քառերու վրայ
յարաշարժ բազմոսն բառերու վրայ
բազմակերպ աչքեր կը վերածնի

Ստուերներս կը վառին մինչեւ առաւօտ
քու մահաստան սեղանիդ վրայ

Ներկայութիւնս թռչուն է քար է
կործանող բառ է սեղանիդ վրայ
քունէդ երազէդ եւ թախծապարուր
պատուհանէդ ներս
շեղատոյր լռչս է

Կ'արտօնե՞ս արդեօք
 որ ստուերներուդ թրթռումը շինեմ
 Արձակէ՛ մատներդ
 ասի մը տեսիլք ցանէ
 ու շնչէ՛ աշնան թափահարումը

Երգեհոնի հիմնական ձայն է լռութիւնդ
 համալարուած մատներով
 կը յայչիմ էութեանդ ստեղծներուն
 Ժխտապարտը խռնամբներով
 մութ խօսքերով միակից
 կը փոխադրես զիս կեանքիս
 առաջին ծփացող կայանը
 ու կ'ըսես՝ զնա՛

Դուն չես տեսներ թէ կրկնագարձ կայանն է սա

Հառազայթներ կը մանեմ
 հառազայթները մտեռան պարուրածից

Մահը կտպտերից գիշերազգեստ մը կը հագուի
 երբ կը մտածէ՛ քու մասիդ
 մահը ամծամանակ է
 մահը յափտեան կ'ապրի ու կը հառազայթէ
 տրտմութեան պէս ձեռքերուդ պէս

Գիշերը ձայնադարձն է խարշափներու սիրոյ
 ուր մտեա կը շրջի թափնիմաց քերկբանքով
 օր մը ցնորութեամբ օ՛ր լուսերից օր մը
 չշնչելու յայտով

Ես չեմ հաւատար որ կը լռէ՛ երաժշտութիւնը
 կը տարածուի ուրիշ ձայներու մէջ
 խորհրդաբոյր ուրիշ վայրերու մէջ
 կը աւգուի
 ինչպէս երեկոյեան լոյսը՝ աչքերուդ մէջ
 ինչպէս աչքերդ՝ ննջարանի ուրտներուն մէջ
 ինչպէս ննջարանը՝ աչքերուդ մէջ
 եւ ծախքը
 եւ յիշատակը
 եւ սէրը
 տանելու համար ապրելու համար
 կը մարի երբեմն կը մարի

Եւ արիւնդ հեռադիտակը բռնած
կը դիտեն կառուցած տուգանաւոյ անշարժ
հւ երաժշտութիւնը առանց տուգանաւի
այեկեծումը առանց մայրամուտի
հեշտամէքը առանց մեղադրանքի
հւ սէրը անծուխ սէրը
ինքզինք կը ցուցադրէ աւերակերում մէջ վեղարաւոր
ծիսնելոյզի պէս առանց հայեացքի

Միշտ չէ որ ցաւի փաթեթներդ կը ստանամ

Թռչում մը իր քառը կը փնտռէ
որսորդ մը կորսնցուցեր է համբան

Վերջին կայանն է սա
վերջին աշխարհը
զիս դիմաւորէ փարաւոններու ծակած դիմակով
հագուեցուր պարի ցնցոտիներս
հւ իմ երգերու ծննդանիւս բեր
ու կլոր յայտի ջրամաններս
ու բեր տխրութեան իմ ցնցաւներս
հւ այն վանդակը որում մէջ
կաւէ բռնում եմ շինած
դի'ր ծուկներուս մէջ որ
շնչէ էակը

Տեսիլներս կը բացուին
կը տեսնեմ քէ վերջին պայքարը չէ սա
ինքնազարմ հայելիներում վրայ
ոտնափոխերս հեղինք կ'երկարեմ

Յիշէ որ զիս պէտք է դիմաւորել
փարաւոնի հողէ դիմակով
պահ մը հաւատամ ուժին կործանման
տեսնեմ վերյառնումի հառաջալսներու
մէկտեղումը
մթնոջ ծալուող ալիքներու մէջ
վերջին աշխարհն է սա
վերջին աթոռը վերջին զագաղս
վերջին բաժակ մը ջուրը քանձը
աւանդապահ մոմիայի հիւքով

Դեռ ե՞րբ անտիսի
թռչուններ կը հասնին

Թփրտահատ արդէն
 հողի նամբաներէն
 ու ներշնչելով
 ռոկաններէն բառի
 ձեռքերս կը սկսին թաղուիլ
 հողաբոյր սեղանիդ վրայ

Կարմրածամ մայրամուտին
 զնչուհի մը ըսաւ քեզի
 թռչուն մը պահէ ամբողջ մէջ
 ար մատներդ չծանրանան

✱

Ո՞ւր գացեր են լուսասիւնները
 այսօր թաղին մէջ չեն
 լոյսին մատները
 աստղերը շոյելով կը մեռնին
 անվերջանալի հպումներ եւ բուրումներ կային
 ոսկի մանեակ էր յաւիտենութիւնը
 ո՞ւր գացեր են արծաթ աստղէ թաղերը

Մանուշակագոյն թիթեռնիկ
 թերեւս վերադառնա՞մ ժամանակէն անդին
 գոնէ վերջին արարը մեր կեանքի
 վատենեմ շնորհալիօրէն
 երիտասարդութեան մը պէտք ունիս
 ըմբռնելու թէ
 լոյսին մատները
 մութը տենչալով կը մեռնին

Մանուշակագոյն թիթեռնիկ
 արուեստական երգի սահմանները լքէ
 ճեղքեր եւ ճիւղեր կան հարկանքին վրայ
 երթանք փակեմք շրթները անոնց
 արպէսզի մեծմայրս որ պատուանին առջեւ
 նստած գուլպայ կը հիւսէ
 այլեւս չլսէ
 Անցեալ շաբաթ մեծմայրս ինձի համար
 ձեռնոցներ հիւսեց
 տեսաւ որ մատներս այրած էին
 սիրտս ծածկած էի անոնցմով
 ամ չհասկցաւ թէ մատներս կրնան այրիլ
 բաւերու մէջ իրերու մէջ մարդերու մէջ
 եւ իրիկնածամին
 ասորիի պնակները լուալէ ետք
 նստաւ ձեռնոցներ հիւսեց

Մանուշակագոյն թիթեռնիկ իրար կապուած էն
 դուն ամստուեր իսս
 հովտեալած երկինքը
 կանաչ ապակիէ ուկիւննսը
 կարօտի տեսլագաշտի մէջ հմ
 արեւը հովանոցը գոցած
 ամերկրայիմ ամմեղաւթեամբ գիս կը դիտէ
 կը խօսի կարծես թէ կ'ըսէ
 ես մեղաւար չեմ որ պիտի թրջուիս
 որ արմեհներդ ճառագայթներովս պիտի չօծուիմ
 այլ՝ ցրտապատ ազմուկներով անքոնելի
 ա՛ւր գացեր է աստղի հոգին
 յաւիտեանութիւնը
 այդ ուկիւննսը կոտրած ապակիներով
 որուն հայրս երգեր կու տար մանկութեանս
 թաղին մէջ չէ այլեւս

Մանուշակագոյն թիթեռնիկ գիշերանց
 երբոր ձուկերը սկսին փախլ
 ես կը կանչեմ քեզի
 երբ ձկնորսները թեւաւոր երգեր իջեցնեն
 թափուր ուկաններու առջեւ
 ես կը կանչեմ քեզի
 երբ արեւի այրող տօնակները մթնշաղկիմ դատարկ ամպերուս
 եւ մեծմայրս աներազ անգիտակցութեան մէջ մտնէ
 ես կը կանչեմ քեզի
 երբ կապոյտ փէշերուս վարդագոյն կանաչ
 դեղնագոյն ճերմակ գիծերը հալին
 ես կը կանչեմ քեզի
 երբ մարտին Նետտնը իր գողիակոտը մտնէ
 ես կը կանչեմ քեզի
 կը կանչեմ գանազան ճայներով տեղափոխուող ցաւի պէս
 մանուշակագոյն թիթեռնիկ որպէսզի չվախեամք յետոյ
 կ'երթանք կը համբուրենք գերեզմաններու
 տօգոյն շրթները

❖❖

Երագայիմ՝ ինչպէս գուշակները
 ինչպէս գուշակները որ մանկութեան անառա խլիցին
 եւ տարերայիմ՝ ինչպէս Նիցչէն
 որ ցնորածուփ ծովուն մէջ նետեց
 ուղեղն իր հասուն
 իսկ ծովը ինքզինք պարսկեց անհունին
 համաստեղային տրամի ընթացքին
 եւ հանաբեղ՝ Ֆաուստը ինչպէս
 քեզի պէս իմաստուն
 քեզի պէս կեանքի վերջակէտին մօտ
 որ սիրահարուած մնաց
 digitised by A.R.A.R.®

Լոյսը քոյեցաւ բաց պատուհաններէն
 ներազամտութեան բառեր քաթովելով
 եւ հայելիները մթաւքեան մէջ համարուեցան
 երբ կը խեղդուէին
 Միասին ընկղմեցանք հոն ուր ժամանակը սկսաւ
 կը սկսի սէրը ուր դատարկութիւնը կը սկսի
 քաբում համալարում կը սկսի ուր սէրը կը սկսի
 Եւ երազները — ուլունքներ — պահեցին
 մեր ամերում մէջ
 եւ տարեքները — հազմեր — քանդակեցին
 փակ դռներու ետեւ
 եւ իմաստութիւնը — կէտեր — ճեղքեցին
 բառէ ուղեւորներու մէջ
 եւ ուղեւորները շարունակեցին
 քայլաշարիւ
 մինչեւ որ ամենց տալիմ մեր ձեռքերը
 մեր հեւքերը
 մեր սեփական ձայներով արձակեցինք զանոնք

Ամառը հագաւ մազերու զոյնը
 հաղաթափերդ հողին վրայ գրեցին Երգեր
 գիշերներ հոգերէ վերադարձան ձեռնունայն
 եւ գգուեցինք զիրար գաղջ ջուրերու պէս

Լուսնի քափէն փրքած կարագիծ լար մը
 լոյսի աւազանին մէջ մեղմատրոփ նիրհեց

Գտանքարդ դարու
 հեշտափառները ռստրէները ճուկերը
 փակեցին իրենց պատուհանները
 եւ գարմացած իրար պատմեցին քէ

այնտեղ լուսնի լոյսին տակ
 խժալուր ազմակներէն հեռու
 անօրեւան անհագ շրթունքներով քաց
 ծովը լին վրայ մերկ ու աւազուտ
 գրկուած գոյգեր կան դեռ
 երազային ինչպէս գնչու
 տարերային ինչպէս Նիցշէ
 եւ հանճարեղ ինչպէս Ֆաուստ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

ՊԻԵՐՈՅԱԿԱՆ ՀՐԱՊՏՈՅՏՆԵՐ...

«Գիրք համուստարհի»...

Եղիշէ Զարեկի տա Կատարը այն ժեան դերքն է Կոյ գրականութեան մէջ, որ իր տղերգականութեամբ չգերազանցուած պատմութիւն թաւնի, որ սկսուա արարածական իր խանդարութն եւ յիբրայաւ նոյնիսկ անգաղանք թաղուած Հնդկեանի մահէն աւ անգին:

Ձարեցին կանգնել ու զորքին ժամել հետևած մարզիկը գլուխ, որ երկու տարբերակներով լայն քննարկեցու հանկու, առաջին տարբերակին լավի մշ օրինակ, իսկ երկրորդին, հինգ լավագույն, իսկ այդ երկուսի տարբերակներն էլ իրեն ինկած ժամանակը, 1933 Նոյեմբերին իրեն 1934 Նոյեմբերին, առաջին ժամանակին եղու ինկած կանգնել:

«Ինքը ճամապարհին» սուպերհիթերի շարքում առաջինը դարձավ «Երեւանի Գրքեր»-ը՝ 1993-ին, Հայաստանի համաշխարհային կուլտուրային կենտրոնի գաղափարաբան Քոչարյանի կողմից:

ՀՀ այդ տեսչության արտադրանքի իրիշխագիական (գաղափարական) անկայունության մասին, որպես առաջին կէտը կը գլխադրուի Զարեհի Վերլի մասնագործի ինչ առարկաները:

Այդ որոշումով կ'արգելվեի, սպազբուժիչներ արգելեալ տարածքի մէջ կապուած գործել Պանկապարիիչի Հրատարակութիւնը եւ Զորինքը կը հեռացուի Պանկապարի գեղաբնակավայրէն:

Այդ հրապարակումներն են հետևյալ տարի հարց, — 4-րդ հարցի հրապարակումներն են բաշխվող քանակների մասին, — կարողանալ էին համադրել վերադառնալիս հիմնականները Օսման արշավախմբի հետ, թե ինչպե՞ս հարցը զրոյից հասնում էր հիմնականներին և երբ ամբողջությամբ էր իրեն հրապարակումը: Գրիգոր մնաց տեղաբնակ: Երես հարյուր չկար հրապարակումներում ճշտակցվեց երբևէ չկարող հարցում հարց: Բերիայի Հայաստանում զարմույթները պի էր թափում բանակում օգտագործող այդ փառաշու երես հարյուր հիմնականներին հասցվող հարցերին: Կենտրոնը վերադառնում էր, լսելով հարցի Արևելի հիմնականներին և Օսմանի Տեր Գրիգորի մասին միջոցներ հարյուր հիմնականներին հավանականություն մեջ:

Չարնեցի ինչպիսիք, եւ ի Հարկէ ընկուած որոտով, բայց նաեւ ոմնկաւն կառնով կը Հարուանէկ պաշարուր: Ի թիկն աւոյց զերեմբ բառացի Խորզմանութիւնը կը դրէի Մտորեմ Գողթիկ եւ բարդը նամակ ծը, որուն Հիմամբ Անդրիզովաւոր Երկարային Նամանէ կը կառնով յատուկ յանձնարգոյց ծը, Չարնեցի զգրքին բովանդակութիւնը եւ անոր լայն ընծայման խնդիրքը ըննեմաւ Համար:

Ջարնեց՝ ապարանից դուրս հանած քանի՜ մը օրինակներէն մէկը կապտա-
նարա՛ր կը դրէի Մոսկուա թնդող իր արարեամբներէ կարէ Միգալէյանի, խնդրելով յան-
նել զայն Անտանայա Միկոյանին, ա՛յն յոյսով, որ Միկոյան ինչպէ՛ս արարեալ լսածու՜մ մը աս-
արարողանէ հարցին։

Այս կապակցությամբ շնորհակալ եմ լինում Վրացական Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի և Կոմկուլտի Կենտրոնի 18 Յունուարի 1934 թվականի համարված հեռագրերով օգնությանը։

«Սիրիի կարգն, ուզիզ մի ամիս անաջ դու ինձ գրել էիր համակ, հետագրքոսւելա
Չարեցի գրի միճակով:

[illegible][illegible]

Հետաքրքրական է տեսչա զինակ, թէ զազափարկան ինչ քովանդակութիւն ունէին զուրա Հանուած այդ երեւոյ կտորները, որոնք աղբքան իրաքանցում տեղեկներն ու աստաղանք արժեքին քանտանդին:

Առաջինը, որ Բերբայի դէմ աղբքան էր Համարուէր՝ Ալեքսանդր Միսանիկեանը աղկոյող առ քանտանդին է:

Ե՛ւ, բարձրացիր զագաղից եւ կրկին երեւայ աշխարհիմ,
Անքեր, պրեզիտ, ճեպով կրկին մեր ընթացքը վարիր:
Դու կոչուած էիր լինելու զեկավար երկրի աւ դարի,
Վեզ տրուած էր յսկեայ մի քնկոր լինինեմ վսեմ համեմարից:

Երկրորդը, որ «Եօթը խորհուրդ քաղաք կառուցողներն» խորագրերը կը կրէր, անցաւային արուրթեմը նայելու եւ աղագան անցալի արագան աւանդներով կառուցելու նպատակաւստութեան գովէր էր, որուն Հիմնական միտքը խաւացուած է Եօթը խորհուրդներէն եօթներորդին մէջ:

Եւ եօթերորդ խորհուրդ, որ տալիս եմ ես ձեզ—
կառուցելուց առաջ ձեր քաղաքը,
Այրեցէ՛ք մագաղաքեայ մարմինը ճեղքեալի
Եւ մոխիրը ցրտ հազարամայ
Կառնեցէ՛ք ձեր ազագայ պարիսպների քարին: —
Եւ զագաղը ցրտ մարմարինեայ,
Որպէսզի տարածուի համբաւն ամենուրեք —
Ազագայի քոյոր եկուորների ի տես՝
Փաղաքի յսկեմեղան զանքի մօտ յընէ:
Քանզի մեռնալների մոխիրն է ամենազինդ կիրը,
Ամենազինդ շաղաթը եւ առնուաւորեմ: —
Եւ երանով է գառնում երկիրը երկիր,
Եւ ժողովուրդը — ժողովուրդ, եւ գալիքը — գալիք՝ անշղթաղը եւ անհաւ...

Թէ 1933ին Համաճամփորները ինչ արժէք կու տային կամ չէին տար աղագային քանտանդութեան՝ աստիկա ուրիշ խնդիր է, բայց ոչ մէկ կասկած այն մասին, որ Բերբայի Հայաստանեան գործակալները ճիշդ Հասկացած էին Վիքթ Զանաղարիիչին իրենց զուրա մզած ալա քանտանդութիւնը, որ զերազանցապէս աղագային խորք մը ունի եւ իր վարակիչ յատկութիւններով, խորհուրդով, կրօնիով, քաղաքով կրնար ոչնչացնել քարոզուած տարբեր դասափարաքանութիւնները:

Դուրս մզուած երբորդ կտորը Վիքիլէտ, քէ Պինքոս խորագրուած երկարաշունչ արամափիպերդն է, որ Նիւթ ունի Հանճարեղ Քառերադիրի մը յեղափոխական մեծ շարժում մը պատկերացնող անաւարտ մէկ Քառերադութիւնը, Քատրոն մը, Քատրոնին տեղեկը, յեղափոխութեան մասնակցած Հանդիսատես զանգուածը եւ յեղափոխութեան յաղթանակին մէջ վճռական դեր կատարած Հերոս մը: Քատրոնին տեղեկը կամայական յապուստեմեր կատարած է Հանճարեղ Քառերադիրին դրած առաջին երկու արարին մէջ, նոյն ոգիով անմաք գրած է երբորդ արարը, որուն ներկայացումն անմիջապէս ետք, միջնարարին, իբրեւ ինքնանիւն, կ'ուզէ իմանալ Հանդիսատես զանգուածին կարծիքը: Անհափոխութեան մասնակցած Հանդիսատեսներին ամենք անընդունելի կը դանեն այդ Համահարկեցումը, բայց մեծաքանակութիւնը կը բաժնի յաւանք զիստօր Հերոսի Քառերադութիւնը աւելի քան զանգուածը: Եւ իր տեղը կը պահանջէ Քառերադութեան մէջ: Տնօրէնը, որ նախապէս ապահոված է Հանդիսատես զանգուածին մեծաքանակութեան արամադրութիւնը, անպարտական նոր փաստարկութիւններով, Հեղինախոն արտայայտութիւններով եւ Հեղինակաւոր ճարպիկութիւններով կը զրգոյէ յապուստէս իր Քատրոնին մէջ զորը զերբորդ Հանդէս եկած անձերն ու մեծ զանգուածին ամբողջական արամադրութիւնը եւ, առաջացած քրքիլներուն, արհամարհական անհարկներուն աւ պոռչաւորներուն տակ, զիստօր Հերոսը, որ յեղափոխական փոթորկալի զուպարներուն Անիլէտն էր, Լաիլափոսելով կը վերածուի միջնադարու Երեւոյնին:

Այս է Վիքթ Զանաղարիիչի երկրորդ տարբերակէն զուրա մզուած Վիքիլէտ, քէ Պինքոս արամափիպերդին Նիւթը, զոր զարմեայ ճիշդ Հասկացած էին Քիֆիլիսն ու Բերբայի Հայաստանեան գործակալները, որովհետեւ ինչպէս արդէն կ'աւանգիւր, Զարեկն այլաբանական Հնարքներով ու անուններով կը պատկերացնէր իր ժամանակը, իր ժամանակի անցուղարմներն ու մարդերը:



Շիկացած մթնոլորտում ամպերն է բարձրանում Տրոցկին: Նրան էլ ընդունում են թշնամական բացազանչություններով: Տրոցկին մեղադրում է Գէպէուի վարիչներին, որ կեղծիքներ են կատարում եւ զրպարտիչ տեղեկություններ հաղորդում ընդդիմադիրների մասին: Ու սկսում է յարձակուել Ստալինի վրայ. «Ստալինի այսօրուայ կազմակերպական յաղթափութը, — ասում է նա, — Յախորդում է նրա քաղաքական խորտակման: Ո՛վ էր դնում վերջին տարին Ստալինի պոչից. «Չան Քայ Շին, Ֆէնկ Վայ Հին Վէյը, Պերսէյերը, Հիքսերը, Բէն Թիլէտները, Քուսինները, Ռաֆէսները, Մարտինովները, Կոնստանտիններն ու Ռուսթալովները»:

Պետրովսկի. — Վրդովեցուցիչ ճառ է, մենչեւիկեան ճառ, ուղղակի սարսափելի է:

Ակրիպինկ. — Ի՞նչ զգուշի բաներ էք ասում, Տրոցկի՛:

Երբ Տրոցկին խօսում է իրենց պլատֆորմի մասին եւ ասում, թէ Ստալինը թաքցրել է այն, «ձե՛զ պէտք է քաջանայ» բացազանչում են լորս կողմից:

Ապա սկսում է հարուածել Ստալինին. «Այս խռիարարը միայն կծու կերակուրներ կը պատրաստէ, ասել է Լենինը Ստալինի մասին: Այսօր առաջարկուեց այդպիսի կծու կերակուրներից մէկը՝ մեղադրելով քնդդիմաւորին դատարարեան մէջ»: Եւ երբ յիշում է Լենինի կտակը, որից առաջ է բերում կոորդներ Ստալինի մասին, բարձրանում է անբեւեալայի տղամուկ-խոր:

Ստեփանով. — Սկզբում. — Հին զրպարտություններն է այդ:

Թալպերգ. — Ա՛հ, դու շատախօս, պարծենկոտ:

Պետրովսկի. — Գարշինի՛ մենչեւիկ:

Կալիցին. — Մա՛նր պուրժուա, արժատական:

Չայն. — Մարտո՛վ:

Այս ձեւով շարունակում է իր ճառը Տրոցկին: Ազմուկը հետզհետէ սաստկանում է: Սուլոց: Բացազանչություններ. «Յեղափոխութեան գերեզմանա՛ր, խայտառակութիւն է, կորչի՛ սողունը: Անկցի՛ դաւաճանք»:

Տրոցկին չի յուսահատում եւ շարունակում է. «Այսօր ասում են «հաւրտացի՛ր», իսկ վաղը... (Ազմուկ) ... Կուլակի վէճը չէ... Ծայրայեղ վարիչների յետեւ կանգնած է կենդանացող պուրժուադիան...»

Ազմուկ, բացազանչություններ. «Բաւական է»:

Վորոշիլով. — Հերի՛ք է: Խայտառակություն է:

(Սուլոց: Աւելի եւ ավելի սաստկացող ազմուկ: Սաստիկ ազմուկ): Ու չինչ չի լուում: Նախադասը զանգահարում է: (Սուլոցներ):

Չայն. — «Հեռացի՛ր ամպերից»:

Նախադասը յայտարարում է ընդմիջում: Տրոցկին ամբողջ ժամանակ կարգում է, բայց անկարելի է օրելէ քան հասկանալ: Ժողովի անդամները տեղերից ելնում եւ սկսում են ցրուել:

Ու Տրոցկին չի կարողանում վերջացնել խօսքը...

ԱՔԻԼԼԵ՞Ս,

ԹԵ՞

ՊԻԵՐՕ



ՔԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Խորը ուշադրութեամբ լսում է դահլիճի խօսակցութիւնները եւ տռանձիմ քաջագանչութիւնները: Երբ հիմնականում նրա համար պարզում է դահլիճի տրամադրութիւնը — նա մի քայլ առաջ է գալիս եւ դիմում է համդիսակամներին սառը, անվրդով ձայնով:

Հանդիսականներ: —

Դահլիճում տիրում է լռութիւն:

Ահաւասիկ լսում եմ եւս զրոյցները ձեր, եւ նկատում եմ պարզ, որ մի-երկու Յարգելի անձանց բացառութեամբ — Բոլորդ նո՛յնն էք ուղում, — Այն է՝ որ մենք նրան անգամ հլոյթ չտանք:

Սակայն քանի որ նա, այդ Փանտաստիկ պարոնը, Սպասում է այնտեղ, վարագոյրի ետեւը, եւ մեզ խան-գա-րում է, եւ պահանջում է իր դերը, — Թոյլ տանք նրան՝ Թող գայ, եւ ասելիքն ասի: —

Դառնալով դէպի վարագոյրը:

Է՛յ, ո՞վ կայ այդտեղ. — կանչեցէ՛ք հերոսին: —

ԲԱՅԱՌԱՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՀԼԻՃՈՒՄ

— Թող կարէ՛ի: — Պէտք չէ՛: —
ժամանակ չկա՛յ: —
— Շարունակեցէ՛ք ներկայացումը... —

— Ո՛հ, թող զա՛յ: — Թող զա՛յ: —
 — Մենք պահանջում ենք...
 — Թող զա՛յ ու գնա՛յ: — Ի՞նչ կը
 կորցրենք: —
 — Թերեւս մի քիչ գումարձանանք է՛լ...
 — Թէ ինձ հարցընէք —
 — Ձուք ենք կորցնում մենք
 ժամանակը...
 — Ախ, դալու է նա — հերոսը ի՛նքը...
 — Էլի՞... — Ձեռք ուզո՛ւմ: — Թող
 զա՛յ: — Թող կորչի՛: —
 — Կանչեցէ՛ք, թող զա՛յ: — Ձէ՛,
 հարկաւոր չի՛...

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Արագ դառնալով դէպի վարագոյրը,
 կրկնում է հաստատ, հրամայող շեշտով:

Է՛յ. ո՛վ կայ այդտեղ, բեմի ետեւում,
 Կանչեցէ՛ք նրան, թող զա՛յ, թող
 խօսի՛, —
 Եւ տեսնենք, թէ այս հանճարեղ դարում
 Որքա՞ն է տեւում
 Կեանքը պաթետիկ, թղթէ հերոսի...

Դանիիմը քնդում է գուարթ ծիծա-
 ւից: Բռնի ետեւից լսում են հապենդ
 ոտնաձայներ — եւ տես բացում է վա-
 րագոյրի մէջտեղի ծախք եւ դուրս է գա-
 լիս Հերոսը կամ Գլխաւոր Անձը, որ մօտ
 քառասուն տարեկան, քարճառասակ,
 աստղակաթ սև մօրուքով եւ դերասանա-
 կան քրկար մեզերով մի մարդ է, հա-
 զիմ սեւ, ամթեւ ամօրեւանց եւ գլխիմ
 սև, լայնեզր, քաշեալ գլխարկ:

ՀԵՐՈՍԸ

Գլխարկը սիրալիք բարձրացնելով եւ
 բարեւելով համդիսականներին:

Օ, ահա եւ ես,
 Հանճարագոյն մեր հեղինակի
 Հանճարեղ երկը

Գլխաւոր անձ, կամ հերոս մեծ: —

Դանիիմում մի-երկու ծափահարու-
 քիւն, քրքիջ, ծիծաղ, ազմուկ, եւ այս
 ազմուկի միջից յանկարծ հնչում է մի
 քարամկ կանացի ձայն:

ՄԻ ԿԱՆԱՑԻ ԶԱՅՆ

Ա՛խ, նա իսկապէ՛ս հերոս է եղել...
 Կա՛մ հերոս է նա, կամ յայտնի երդիչ...

ՄԻ ԲԱՄԲ ԶԱՅՆ

Ինչի՞ց երեւաց. — այծի մօրուսի՞ց,
 Թէ՞ սրունքների կլորութիւնից...

Դանիիմը քնդում է գուարթ ծիծաղից:

ԱՅԼ ԲԱՅԱԳԱՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ

— Բայց իրօ՛ք նա քիչ նման է կարծես
 — Հերոսի, կամ այլ գլխաւոր անձի...
 — Յամենայն դէպս պատկանելի է
 — Իր արտաքինով... — Ոչինչ առանձին
 — Ձե՛մ տեսնում նրա արտաքինի մէջ...
 — Ինչո՞ւ, — լա՛ւն է շատ... — Դէ՛մքը
 բարի՛ է...
 — Բայց լսենք նրան... — Արտաքինը —
 Հէ՛լ: —

Դանիիմում տիրում է լռութիւն:

ՀԵՐՈՍԸ

Հանդիսականներ: — Օ, այրեր
 արդո՛ւյ: —

Բեմի ետեւից եւ լսում էի
 Մեր Տնօրէնի գրոյցը ձեզ հետ —
 Եւ կարո՞ղ էի արդեօք միայն գոհ...
 Ի՞նչ խօսք, որ նա մեծ հմտութիւն ունի
 Միամիտ մարդկանց համոզ!

կամ թող փշելու նրանց աչքերին...
 Ամբողջ երկու ժամ ետ լսում էի,
 Թէ ինչպէս նա ձեզ, Հանդիսականներ, ^{Հանդէպ...}
 Համոզում էր, Թէ Հեղինակը մեր
 Իր բոլոր Թէ՛ Հին, Թէ՛ նոր երկերում
 Իբրեւ Թէ միայն անգոյն, դիմազուրկ
 Դէմքեր է կերտում, նկարագրում...
 Որ սրանով է իբրեւ Թէ մեր մեծ,
 Հանճարեղագոյն Հեղինակը միշտ
 Տարբերուել բոլոր Թէ՛ Հին եւ Թէ՛ նոր
 Հանճարեղագոյն ողբերգուներին...

— Ողբախոսութիւն կոպիտ Տնօրէնի
 — Ժշմարիտ է ասում : — Միայն անդէժ
 — Որոտուիլականէ՛ր կային արարուածում ^{երբորդ...}
 — էլէ՞, օրիորդ, էլէ՞... — Բոլորը
 — Ու Թշնամի մարդկանց յերեւոյնք է ^{խորթ}
 — Թողէ՛ք շարունակի...

ՀԵՐՈՍԸ

Պատգայ :

Սա ի՞նչ է, արդոյ Հանդիսականներ, ^{Հանդիսականներ}
 Եթէ ոչ — Հեղինակը ու ծաղր կրկնակի
 Հանճարեղագոյն մեր Հեղինակի
 Հասցէին : — Այո՛ : — Վերջընենք Թէկուզ
 Մենք նրա վերջին, այսօրուայ երկի
 Բովանդակութեան առանցքը միայն. —
 Օ՛, ի՞նչն է միակ
 Գաղափարը, կամ խորհուրդը, որ նա
 Դրել է երկում իր այս վիթխարի. —
 Պարզ չէ՞ ձեզ միթէ, որ դա — մեր դարի
 Եւ մեր պայքարի
 Պաթո՛սն է վսեմ ու Հերոսական : —
 Տեսնո՞ւմ է՞ք սակայն
 Դուք նման մի բան
 Մեր Տնօրէնի բեմադրութեան մէջ...
 Օ, ո՛չ : — Նա միայն ողբալի ու խեղճ
 Որոտուիլական է ասպարէզ հանել, —
 Եւ մեր Վարպետի յղացումն այսպէս
 Խառնաճաղարար Հիմքից կործանել...

Հանդիսականներ :
 Մեր Տնօրէնը այստեղ ձեզ ասաց,
 Որ իբր անմահ Հեղինակը մեր
 Ողբերգութիւնն այս թողել է կիսատ.
 Որ իբր նրա առաջին երկու
 Արարն է միայն նա ինքը դրել,
 Որ իբր նրա Հանճարեղ երկում
 Ձկայ ո՛չ մի մեծ, Հերոսական դէր...
 Իրեն առարկող Հանդիսականին,
 Որն, ինչպէս ասաց, իր զոյգ աչքերով
 Տեսել է, դուռած Հենց ի՛ր սեղանին.
 Մեր Հեղինակի ձեռագիրը ողջ —
 Նա խնդրեց անցնել սենեակն իր եւ անդ
 Խնդրի էութիւնն ընդմիջտ ստուգել...
 Այսպէս նա ասաց, այրե՛ր, — եւ դուք էլ
 Իւ Հարկէ, իսկոյն Հաւատացի՛ք արդ
 Խորամանկամիտ պայմանին Հմուտ...
 Ձէ՛ք ենթադրում սակայն արդեօք դուք,
 Որ կարող է այդ ձեռագիրը լոկ
 Աղճատուած, խաւած պատճէնը լինել
 Մեր Հեղինակի երկի Հանճարեղ...
 Ձէ՛ք ենթադրում, որ Հարկ է գոնէ
 Մեր մեծ Վարպետի անփոփոխ, անեղծ
 Ձեռագիրը, կամ պատճէնը ճարել...

ԲԱՅԱԳԱՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՀԼԻՃՈՒՄ

ՏՅՈՒՇԻՆՆԵՐ :

— Սո՛ւտ է : — Սխալ է այդ : — Ձեր
 կարծիքո՛վ է լոկ
 — Այդ ամէնը այդպէս : — Ի դո՛ւր
 խօսքեր : —
 — Ա՛խ, նա ուզում է լոկ, որ ասէ
 — Մրցականներ չայնն սրբնթաց...
 — Ժշմարիտ է ասում... —
 Անհաբընթաց

Ի՞նչ կ'ասէք սրան, արդոյ Տնօրէն : —

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Ո՛չ ձեռագիր է եղել ինչ-որ մեծ,
 Եւ ո՛չ էլ կորել : —

Ո՛չ մի ձեռագիր, լո՞ւսն էք, երբե՛ք
 Ո՛չ կրճատել ենք եւ ո՛չ էլ փոխել: —
 Երկու արարի ձեռագիրն է լոկ
 Մեր հեղինակը թղթերում թողել —
 Եւ նրա թողած ձեռագիրն — անեղծ,
 Անխախտ փրճակում մենք բեմ ենք
 Հանել: —

ՀԵՐՈՍԸ

Իսկ չկա՞ն արդեօք ձեռագրում այդ
 Պակաս էրեսներ, կամ արարուածներ՝
 Կրճատուած, կիսատ...

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Օ, ի հա՛րկէ, կան: — Կիսից սկսած
 Կան արարուածներ, անմշակ տեղեր: —
 Բայց, ինչպէս գիտէք, նա թէկուզ
 կիսատ,
 Սակայն՝ հիմնական գծերով լրիւ
 Ու ամբողջական մի գործ է թողել: —

ՀԵՐՈՍԸ

Կրկին գիմելով համդիսակամներին:

Ուրեմն այսպէ՛ս: — Ինչպէս լսեցի՞ք՝
 Մեր Տնօրէնը ինքն է՛լ է պնդում,
 Որ ձեռագրում կան պակաս էջեր,
 Կիսաւարտ տեղեր... Մնացածը դուք
 Կորոզ էք, ինչպէս հարկն է,

Հասկանալ...
 Ձեռագիրն, աւա՛ղ, կորած է անդարձ...
 Հարկ կա՞յ էլ թափել անխմած

Չանքեր...

Մեզ երբեք է օ, դժուար թէ այն
 Յաջողութի դանել, կամ վերականգնել...

Մնում է ուստի մեզ հեղինակի

Կեանքի բովանդակ գործից ելնելով —

Փորձել համոզել ու ապացուցել,

Որ նրա վերջին գրուածքում իրօք

Եղել է մի մեծ, հանճարեղ հերոս...

ԲԱՅԱԿԱՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՀՆԻՃՈՒՄ

— Բաւական է: — Վե՛րջ: — Շա՛տ էք
 երկարում: —

— էլ ի՞նչ ապացոյց, Փանոսաստիկ

պարո՛ն...

— Բայց չէ՞ որ նա կայ... — Եթէ կայ

— ապա

— Իրաւացի է... — Այ՛նքեղ սկզբունք...

— Նման հերոսներ շուկայում թափած

— Ինչքան կամենաք... Սխալում էք

դուք:

— Տնօրէնն ի՛նքն էլ կարծես ընդունեց,

— Որ ձեռագիրը... — Մի՛թէ... —

Այդպիսի

— Պնդում նա չարեց: — Բայց ինչո՞ւ

լոկ

— Երբ հերոսն արաւ իր ականարկը

նուրբ...

— Ի՞նչ անէր. — նրա վղակոթին տար

— Եւ չպրտէր դո՛ւք... — Դո՛ւք

չպրտել, դո՛ւք...

— Շա՛տ է երկարում... —

Շարունակեցէ՛ք

— Ներկայացումը... Եւ ինչէ՛ք: —

Հոսթիլն: —

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Հանգստացէ՛ք, այրե՛ր: —

ՀԵՐՈՍԻՍ

Ձեզ մնում է արդէն

Երեք բոպէ միայն: —

ՀԵՐՈՍԸ

Հանդիսականներ: —

Մի փոքր անդորր — եւ էս կ'աւարտեմ: —

Ո՛րն է այս երկի բովանդակութեան

Առանցքը: — Օ, դո՛ւք, ասացէ՛ք
խնդրեմ՝
Ի՞նչ է կամեցել հեղինակը մեր
Ասել իր երկով հանճարեղափայլ.
Թէ երկու խօսքով կամենանք մենք այդ
Ասել, — ասլա մենք պարզ պիտի
ասենք,

Որ առանցքը այս հոյակապ երկի
Մեր հերոսական պայքարն է վսեմ
Ընդդէմ աշխարհի կործանուող ու հին.
Եւ հարց եմ տալիս ես ահա կրկին՝
Ի՞նչ տեսաք այսօր բեմի վրայ դուք. —
Մարդկային մի հոգ, անդէմ
բազմութիւն,
Որ շնչին, զաճաճ առաջնորդների
Ղեկավարութեամբ, անիմաստ ու կոյր,
Ինչպէս մի նախիր — զնում է անմիտ
Ննքն էլ չգիտէ, թէ ինչո՞ւ եւ ո՞ւր...

ԲԱՅԱԳԱՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՀՆԻՃՈՒՄ

— Ա՛յ քեզ Աքիլլէս... — Այդ ո՞նց թէ
խակի
— Ինքն էլ չգիտէ, թէ ինչո՞ւ եւ ո՞ւր...
— Օ, ի՛նքդ ես անմիտ... — Եւ դու
ի՛նքդ ես կոյր...
— Իսկ Առաջնորդի ուղի՞ն անյողողդ,
— Որով բազմութիւնն ընթանում է յար՝
— Օ, ի՛ր իսկ ընտրած առաջնորդների
— Ղեկավարութեամբ հմուտ ու
արդար...
— Սա ծա՛ղր է, ծա՛ղր է մեր հեղինակի
— Եւ մեր հասցէին... — Մա՛ղր է
կրկնակի...
— Յանդուգն լուսա՛նք...

ԱՅՆ ՓՈՔՐԱԹԻՒՆ ԶԱՅՆԵՐ ԴԱՀՆԻՃՈՒՄ

— Ձէ՛, ճի՛շդ է ասում: —
— Ովքե՛ր են նրանց առաջնորդում,
ո՞վ...
— Թո՛ղ առէ՛ք ասի իր խօսքը —
յետո՛յ...

— Եւ ե՛րբ է արդեօք պատմութիւնն
հոսում,
— Իբրեւ պղտոր գետ... — Առա՛նց
վիթխարի
— Այրերի... — Առա՛նց հերոսների
մե՛ն...

ՆՈՅՆ ԿԱՆԱՅԻ ԶԱՅՆԸ

Նա ճի՛շդ է ասում. — Նրա աչքերի
Եւ զարմանալի համակրելի
Դէմքի՛ց եմ ես այդ եզրակացնում...

ԱԶՔԵՐԸ ԹԱՐԹՈՂ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԸ

Օ, ոչի՛նչ, ոչի՛նչ չե՛մ հասկանում ես...
Ճի՛շդ է ասում արդեօք... Օ, ասացէ՛ք
խնդրեմ...
Թէկուք ոչինչ չունեմ Տնօրէնին
ընդդէմ —
Բայց տառանում եմ քիչ... Օ՛,
ասացէ՛ք խնդրեմ...

ԲԱՄԲ ԶԱՅՆՈՎ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԸ

Լո՛ւր, յի՛մար Թարթո՛ղ: — Ես քեզ
գիտե՛մ...

ՀԵՐՈՍԸ

Հանդիսականե՛ր, — յարգելի
այրե՛կ, —
Ինչո՞ւ էք յուզում իմ խօսքերից
դուք: —
Օ, մի՛տք արէ՛ք, մի՛տք, — չէ՞ք
տեսնում արդեօք
Որ ձեզ համա՛ր եմ
եւ այստեղ ուսում նախատինք ու
թուք: —
Թո՛ղ առէ՛ք սակայն,
Որ բերեմ ես իմ փաստը հիմնական: —
Օ՛, մի՛տք արէ՛ք դուք, մի՛տք արէ՛ք
միայն. —
Ըստ հեղինակի մտայղացման՝

Հանճարեղազոյն ողբերգութեան մէջ
կատարում են վեհ, ամենի ու մեծ
Դէպքեր վիթխարի ու աշխարհացունց.
Ոտքի են ելնում, մոլուցքով լեցուն,
երկու ինքնաբաւ աշխարհներ տարբեր...
Հասկանում էք դուք. —

Որպիսի՜ հսկայ մտայնացում —
եւ ի՞նչ գոսնելի, դաճած տիպարներ...
Գրո՛ւ մեծազոյն Տրովադայի դէմ,
Գրո՛ւ մեծազոյն ու չտեսնուած —
Համաշխարհային զոյամբաւ Հրկէզ, —
եւ ո՛չ մի Աբելլ, կամ ոչ Գատրիլէս...
Հասկանում էք դուք. — նման

վեհազոյն,
նման Հոյակա՛պ, պատմական գործեր, —
եւ ո՛չ մի Աբելլ, որ ուժը փորձէր,
կամ երկրորդական մի Այաքս թէկուզ...
Այս ի՞նչ է. — անմահ մեր հեղինակի
Հանճարն է արդեօք այսպէս սպասուել.
Թէ՞ դաճածների ստոր դաւերի
եւ խարդախութեանց հետեւանքով է
Սպասուել նրա ինքնութիւնը վեհ...
Օ, պարզ չէ՞ միթէ, որ հեղինակի
Հանճարեղազոյն, Հոյակապ երկից
Հանուած է մի մեծ, կենսարոնական
դեր —

եւ ահա — առանց այդ կենսարոնական,
Դիւանոր անձի, կամ մեծ հերոսի —
Ողբերգութիւնը դարձել է մի սին,
Անօղեական Փարս... Եւ պարզ չէ՞, որ
մեր

Տնօրէ՛նն է այդ ամէնը արեւ...

Օ, ի՞նչպէս, ի՞նչպէս չէ՞ հասկանում
դուք,

Որ Տնօրէ՛նն է աշխատել այդպէս,
Որպէսզի այսօր դո՛ւրս չպրտի մեզ
Ողբերգութիւնից այս հերոսական —
եւ դերը մեր վեհ ու անանձնական
Յանձնի անբանաբար դործող անձերի...
Եւ ի՞նչպէս, ի՞նչպէս, տեսնելով երեք
Անիմաստ արար — ա, յարգելի՛ք, դուք
Ձեզ հարց չտուիք. — կարո՞ղ էր արդեօք
Մեր Վարպետը իր երկում հանճարեղ
Թոյլ տալ այսպիսի թերիմացութիւն...
Կարող է՞ր արդեօք նման Հոյակապ
Նիւթ վերցնելով, մեր հանճարը նուրբ
Դէմքեր տալ՝ չնչին ու անդէ՛մ այսքան,
եւ քարակտրներ — այսքան

դիմազուրկ...

Կարո՞ղ էր արդեօք նման վեհազոյն
եւ աշխարհացունց մի նիւթ ընտրելով —
Իր ողջ պիեսում նա շտալ թէկուզ
Մի ալքի ընկնող պերսոն, կամ հերոս,
Որ իր հանճարով, գիտութեամբ,
խելքով,
Բնաւորութեամբ շիտակ ու արի —
Մի փոքր դոնէ քարձրանար այդ հոծ
Բազմութիւնների անդէմ նախիրից...

Հերասի այս խօսքերից յետոյ դաւ-
լիմում քարձրանում է անասնի աղմուկ:
— Բայց Տնօրէնը կարգի է հրաւիրում
հանդիսակցներին եւ դիմում է հերո-
սին սառը, հեզմակամ տոնով:

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Ձիներ՝ այդ հենց ինքնե՛րդ էք այդ մեծ,
Այդ անզուգական հերոսը, պարոն: —

Դանիմը քնդում է քրքիջից: —
Բայց Հերասը, չկորցնելով իրեն, քաղա-
զանքում է պաքստիկ ձայնով:

ՀԵՐՈՍԸ

Օ՛, այո՛, այո՛, — հենց ե՛ս եմ, որ
կամ...

Այդ ի՛նձ է քննել մի ձեռք պիեսից —
եւ հեղինակի երկն հերոսական
Դարձրել մի Փարս՝ անիմաստ ու սին...

Ամբողջ դանիմը կրկին քնդում է
քրքիջից: — Եւ կրկին Տնօրէնը կարգի է
հրաւիրում բոլորին եւ մի քայլ առաջ
գալով ասում է հաստատուն, անայլալլ,
անկիրք ձայնով, որի մէջ զգացում է
սակայն խորը, զուսպ, անդրդուելի մի
պաքստ:

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Հանդիսական այրե՛ր ողջախոհ: —
Ինչպէս տեսնում էք դուք — դաւլի՛ն
ամբողջ

Թնդում է զուարթ քրեիկը...
Ակներեւ է, որ մեր հերոսն անկող —
Ձուարճալի է քիչ...
Բայց քրեիկը թողնենք մենք մի կողմ
Իւ հերոսին՝ մեր այս վերամբարձ
Տանք հասարակ մի հարց: —

Դառնալով Հերոսին:

Դուք որքան էլ այստեղ վերամբարձ,
Տափանկանի չափով, մեր արխայիկ
Վարպետների լանդով բարբառեցիք վսեմ
Հերոսների մասին, — սակայն խնդրեմ
ասե՛ք. —
Այդ ինչպիսի՞ արդեօք հերոսի,
Կամ գլխաւոր անձի դեր է եղել երկուս
Քիչ մի ֆական մեր դերը, որ մի-երկու
Անհատներից բացի — մեր բացակայ
լինելը
Ձի նկատել ոչ-ո՛ք: — Առացե՛ք: —

Հերոսը լուռ է:

Աւելորդ էք ուրեմն, — այնպէս չէ՞: —

Հերոսը լուռ է: Դառնալով եւս տի-
նիլ է մեռելային լուսքին:

ԱԶՔԵՐԸ ԹԱՐԹՈՂ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԸ

Վա՛յ, ինչ ճիշդ ասեց Տնօրէնը մեր...
Բայց ի՞նչպէս ի՛նքս չէի մտածել
Այդքան հասարակ, սարբակուն մի
բան...

ՆՈՅՆ ԿԱՆԱՅԻ ԶԱՅՆԸ

Սակայն, այնուհանդերձ, նա իսկապէ՞ս
Հերոսի է նման, կամ գլխաւոր անձի...

ՆՈՅՆ ԲԱՄԲ ԶԱՅՆԸ

Թէ սիրում էք այդքան դուք նրան —
Գնացէ՛ք հետն — առանձի՛ն...

Զուարթ քրեիկ:

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՅՐԷՆԸ

Հանդատացէ՛ք խնդրեմ: — Ուրեմն
այսպէ՛ս. —
Ինչպէս տեսնում էք դուք՝ զաւելիճն
ամբողջ,
Մի-երկու մարդու բացառութեամբ,
Համամիտ է, որ ուռնից ինքնակոչ
Հերոսների անգամ
Թատրերգութիւնը մեր — հիանալի մի
երկ է:
Հարց եմ աւելի ուրեմն. — էլ ո՞ւմ է
հարկաւոր
«Հերոսական» այս երգը...
Եւ առացէ՛ք խնդրեմ. — այդ ի՞նչ, այդ
ի՞նչ
Տարօրինակ հերոս է, կամ գլխաւոր անձ,
Առանց որի պիտեւր չի կարցընում ոչինչ —
Եւ չա՛հում է անգամ չափազանց...
Պարզ չէ՞ ուրեմն, որ միանգամայն
Հնարովի լեզունդ է այդ դերը,
Կամ աւելորդ մի բան: —
Օ, դատեցէ՛ք ինքեկդ. — Եթէ մենք
Օրինակի համար Շէյքսպիրի
«Լիր Արքայից» հանենք
Դերը Արքայ Լիրի —
Ի՞նչ կը մնայ արդեօք էլ նրանից...
Օ՞, պարզապէս ոչի՛նչ: — Բայց
ինչո՞ւ: —
Որովհետեւ այդ երկն իսկապէս
Կառուցուած է այնպէս,
Որ պաթետիկ հերոս է պահանջում: —
Այնտեղ իրօք առանցք է կենտրոնական
հերոսը,
Որի շուրջն է դառնում գործողութիւնն
ամբողջ, —
Սակայն միայն թերո՛ւսը
Կարող է պահանջել, որ այսօր
Մեր հանճարեղ, մեր մեծ հեղինակի
երկում,
Որ բազմութեանց պաթոսն է
քնարերգութ —

Գործողութիւնն ամբողջ դառնայ մի
 Կենսաբանական անձի, կամ հերոսի
 շուրջը...

Որտեղից էլ դալիս այս անուրջը...
 Օ՛, խեղկատակ մարդիկ, ողորմելի՛ր,
 Ժամանակից, դարից, հեղինակի ողուց
 եւ մնացած այլեւր անիմաստ,
 Որոնց համար դեռեւս մեր կենքը մի
 Հոմերոսեան հեքիաթ է, կամ միայն
 Հերոսներ յանդուգն խաղաղութիւն...

Եթէ այդ խեղճ մարդիկ
 Հասկանալին մի սրահ ճշմարտութիւնն
 այս մերկ —

էլ կ'ասէին արդեօք, որ իբր մենք
 Գուրու ենք նետել մեր մեծ հեղինակի
 երկից

Մի միթիւրի, մի մեծ, առանձնակի մի
 դեր, —

Եւ ոչ-ոք, բացի իրենցից
 Ձի՛ նկատել խաղախ այս արարմունքը
 մեր...

Օ, ծաղր է սա միայն եւ անիմաստ
 մարմանը...

ԲԱՑԱԳԱՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՀԼԻՃՈՒՄ

— Օ, ծաղր է սա միայն եւ անիմաստ
 մարմանը...
 — Հեղինակի երկում ո՛չ մի նման հերոս,
 — Կամ գործող անձ չկայ: — Դո՛ւրս
 անել, դո՛ւրս: —

ՀԵՐՈՍԸ

Յանկարծ գլխի ընկնելով, որ արդէն
 սարսուղ է:

Օ, ո՛չ, ո, ո՛չ, ո, ո՛չ, հանդիսականնէ՛ր,
 Ես բոլորը դեռ ձեզ չառացի...
 Այս ամէնից բացի...

ԲԱՑԱԳԱՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՀԼԻՃՈՒՄ

— Ձե՛նք հաւատում եւ — Կորէ՛ք: — Մեզ
 հերոսներ պէտք չե՛ն: —
 — Դուք ինքնակոչ հերոս էք: —

Հեղինակի երկում
 — Այդպիսի դեր չկայ: Մենք անասուն
 Հօ չե՛նք...
 — Ծարունակեցէ՛ք ներկայացումը...

ՄԻ ՔԱՆԻ ԱՆՎՍՏԱՀ ՁԱՅՆԵՐ

— Բայց չի՛ լինի այսպէս... — Նա
 երկընթից
 — Հօ չե՛ք ընկել... — Նրան հեղինակն
 է ծնել...
 — Ի՞նչ իրաւունք ունէք հեղինակի երկից
 — Օ, հերոսներ ամբողջ շարունակ
 դուրս...

ԱՅԼ ԲԱՉՄԱԹԻՒ ԶԱՅՆԵՐ

Որ միանգամայն խլացնում եմ այս
 անվստահ ձայները:

— Հեղինակի երկում ո՛չ մի նման հերոս
 — Կամ ժգու՛ն անձ չկայ... — Դո՛ւրս
 անել, դո՛ւրս:

ՀԵՐՈՍԸ

Արդէն կորցրել է հաւատարմաշու-
 բիւմը եւ սկզբում շփոթում է իր խօսե-
 լու տասվանկանի շափը:

Տեսնո՞ւմ էք, տեսնո՞ւմ էք, տեսնո՞ւմ
 էք, տեսնո՞ւմ էք,
 Որքան անգո՞ւթն է, որքան անգո՞ւթն է
 մեր Տնօրէնը...
 Նա ի՛նձ, հանճարեղ մեր հեղինակի
 Գլխաւոր անձի՛ս, որին ի՛նքը մեր
 Մեծ հեղինակն է իր պիեսի մէջ
 Տուել հոյակապ, անդուգական դեր, —
 Տուել է թէ՛ սիրտ, թէ՛ միտք, թէ՛ հոգի,
 Հանճար մեծադոյն, որ էլ ո՛չ ոքի

Ձի տրուած այս մեծ ողբերգութեան
մէջ —
Նա դո՛ւրս է նետում ողբերգութիւնից,
Իբրեւ լաթ անսկզբ... Առանց դաշու
Եւ հասկանալու, որ հեղինակի
Հանճարեղազոյն ողբերգութիւնը
Առանց ինձ — ահա դարձել է մի Փարս...
Այնպէս չէ՞, արդոյ Հանդիսականնե՛ր,
Դարձել է — մի Փարս...

Գալիլիեոյ ծիծաղ:

Իսկ դո՛ւք, յարգելի
Հանդիսականնե՛ր, — չէ՞ք տեսնում
միթէ,
Որ խարում են ձեզ եւ ճաղրի հանում, —
Դուք ի՞նչպէս, ի՞նչպէս չէք հասկանում
այս...
Օ, ժամանակնե՛ր... Բայց ո՛չ, երեւի
Ձեր իրաւունքը դուք չէ՛ք հասկանում...
Հասկացէ՛ք, ելէ՛ք, պահանջէ՛ք դուք ձեր
Իրաւունքն՝ այսպէս ուրուած
դեմնահար... —
Ձե՛ր որ գասական մի ողբերգութեան
Մուտքի համա՛ր էք դուք տոմսեր առել —
Եւ ո՛չ թէ չնչին մի Փարսի համար...

ԲԱՅԱԳԱՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՀՆԻՃՈՒՄ

— Բաւական է: — Վե՛րջ: — Նա
Թատրոնը մեր
— Շփոթում է մի բալագանի հետ...
— Դո՛ւրս արէք դրան... Ձայնից
զրկեցէ՛ք: —
— Առանց նրան էլ Թատրերգութիւնը
— Գործ է հոյակապ... —
— Ներկայացումը... —
Շարունակեցէ՛ք...

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Հանդիսականնե՛ր, — Այժմ պարզ է ձեզ,
Որ պարտքը այս,

Որ հեղինակի գործը հանճարեղ
Ողբերգութիւն է երբեմն համարում,
Իսկ երբեմն — Փարս, —
Ո՛չ մի կապ չունի մեր հեղինակի
Թատրերգութեան հետ: — Ուստի մենք
Նրան
Կարող ենք անել առաջարկ մի լուրջ: —
Փանի որ նրան, աւա՛ղ, չյաջողուեց
Դառնալ մի հսկայ, վիթխարի հերոս, —
Կարող ենք նրան խորհուրդ տալ միայն,
Որ նա իր սիրած ամպուան փոխէ, —
Օ՛ր, մոռանալով նախապէս սակայն,
Որ երբեմն ա՛յլ երդ է ներբողել: —
Մեր բեմի համար հարկաւոր է մի
Ընդմիջումներ խեղկատակ — հերոս, —
Այսինքն, արդոյ Հանդիսականնե՛ր, —
Մի լաւ... Պէտքո՛ւն:

Հերոսիմ:

Ուղում է՞ք, պարս՛ն: —

ԲԱՅԱԳԱՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՀՆԻՃՈՒՄ

— Հա՛-հա՛-հա՛... — Իրո՛ք հանճարեղ
խորհուրդ...
— Այդ իրո՛ք նրա դերն է խեղկական...
— Ընդմիջումներ խեղկատակ —
հերո՛ս...
— Ե՛ւ սքանչելի, ե՛ւ... հերոսական...
— Այդ դերը նրան իրո՞ք սազում է...
— Շարունակեցէ՛ք ներկայացումը...

ՀԵՐՈՍԸ

Տեսնելով, որ այլևս անխորշ է
արեւ փորձ շահելու, Գալիլիեոյ համա-
կրաւորը — յուսանատօրէն բռնում է մա-
զերը եւ արտասանում համարեա՛ ինքն-
իրեն:

Ի՞նչ էին ուզում նոքա ինձանից,
Եւ ի՞նչ էր, որ ես նոցա շտուի...
Օ, դաւե՛ր, դաւե՛ր, — մո՛ւթ,

ստորաքա՛րշ,

Մարդկային գծում ուղեգում նստած,
Փոքրի՛կ, գետնաքա՛րշ գտնաճների պէս
Բոյն դրած դաւեր... Օ, բա՛խտ իմ,
բա՛խտ իմ...

Ա՛խ, թէ գտնէի ես հեղինակին,
Մի պահ թէ գոնէ բարձրանար նա իր
Անդրէ՛րիմեան ահռելի քնից
Եւ տեսնէ՛ր իր մեծ ողբերգութիւնը
Պարսի վերածած... Եւ տեսնէ՛ր իր մեծ,
Միակ հերոսի վախճանն այս ախուր, —
Տեսնէր իր սիրած հերոսին այսպէս՝
Մենակ, հալածուած,
Ծաղր ու ծանակի ենթակայ դարձած,
Դարձած ուրուակա՛ն, գոսնելի ստուե՛ր,
Հասած այնպիսի՛ մի եղի գրութեան,
Որ ի՛նքը անգամ դժուարանում է
Հաւատալ իրեն... Օ՛, ողբերգութի՛ւն...
Եւ չէ՞ սա արդեօք մեր ժամանակի
Ողբերգութիւնը միակ արդարեւ,
Որ իր խորութեամբ եւ վսեմութեամբ
Գերազանցում է անգամ Վարպետի,
Օ՛, անգամ նրա՛ բոլոր հոյակապ
Ողբերգութեանցը...

Օ, դո՛ւ, էսքի՛ն,
Եւ դո՛ւ, Սոֆոկլէ՛ս աստուածաբանքար,
Եւ դո՛ւ, մեր անմահ ողբերգու
Վերջին, —
Վէ՛ր ելէք, յառնէ՛ք ժառուսն խաւարից,
Եւ վար հայեցէ՛ք, եւ տեսէ՛ք ահա
Վերջին հերոսի վախճանը ճշգրիտ...

Հերոսի այս մեծախօսութեան ծա-
մանակ դաշիւնում տիրում է անասելի
ազմուկ, ծիծաղ, բացազանցութիւններ,
այնպէս որ ոչ ոք չի լսում նրա արտա-
սանած բառերը: — Եւ յանկուծ այդ
անասելի խառն ազմուկի միջից ենչում է
մի պատմեցելական հեշուձ ձայն:

Մի ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՀԵՁՈՒՆ ԶԱՅՆ

Արգո՛յ Տնօրէ՛ն, թո՛յլ տուէք խնդրեմ
Մեր ողբերգական հերոսի մասին
Մի բալլադ ասեմ: —

ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Խնդրե՛մ, օ, խնդրե՛մ: —

Բեմ է վազում մի գանգրահեր, պայ-
ծառ պատմի: — Ամբողջ դաշիւնը լռում
է եւ հետաքրքրութեամբ սպասում է, քէ
ինչ պիտի ասի նա:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՊԱՏԱՆԻՆ ԵՐԳՈՒՄ Է

Լինում է, չի լինում
Մի անգոյ հերոս,
Աքիլլէ՛ս Հեռւմ,
Հիմա — Պիերօ: —
Պիերօ՛,
Պիերօ՛, —
Պիերօ՛, —
Մի իսկական Պիերօ:

Երբ դեռ Տրոյադի
Կռիւն էր գնում, —
Թղթէ՛ր ասղաւարտ էր
Նա գլխին կրում, —
Պիերօ՛,
Պիերօ՛,
Պիերօ՛, —
Մեր այօրուան Պիերո՛ն...

Իսկ այօր արդէն,
Այդ նո՛յն ասղաւարտով
Նա աւելորդ մա՛րդ է,
Ընդմիջումի հերոս, —
Պիերո՛ն,
Պիերո՛ն, —
Պիերո՛ն,
Մեր ողբալի՛ Պիերոն...

Երիտասարդի երգերու ժամանակ
համդիսակամները հետզհետէ հաճախում
են երգի գուարթ չիքմով, եւ վերջում
համարեա՛ւ տմբողջ դաշիները ձայնակ-
ցում է նրան, —

Կախուելով վարագոյրի եզրերից :

Կա՛ց, կա՛ց, կա՛ց...

ՔԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Պիեթոն,
Պիեթոն,
Պիեթոն,
Մէր ողբալի՛ր Պիեթոն...

Հաստատ, անյողդողդ : —

Վարագոյրը բա՛ց : —

ՔԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆԸ

Հերոսին :

Սխալակալ վերջացա՛ւ : —

Դառնալով բնմի կողմը : —
Վարագոյրը բա՛ց : —

Դաշիների բուռն ծաղիստարութիւննե-
րի ներքոյ բացում է վարագոյրը, եւ
Հերոսը, որ յուսահատօրէն կառչել է
վարագոյրի եզրերից, ընկնում է յատա-
կին : — Բեմի վրայ, շարժուելով աջից
դէպի ձախ, առաջանում է Առաջնորդի
բանակը, որ չնկատելով Հերոսին, առ-
նաստակ է անում նրան, — եւ սկսւում է
Հանճարեղ Հեղինակի յետմահու թառ-
սերգութեան վերջին, վնասկան արա-
բը : —

ՀԵՐՈՍԸ

Սկսւած է. — 1929 Ապրիլի 29ին, Թիֆլիսում.
Աւարտւած է. — 1933 Յունիսի 16ին, Նաքում :

Ն Ա Ջ Տ Է Ր Ս Ա Ր Գ Ի Ս Ե Ա Ն

Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն Պ Ա Ր Տ Է Ջ

Յետմիջօրէ էր: Մայթին վրայ արձանացած գէմքով աղջիկ մը, գիրքերու տրցակը թւերուն մէջ սեղմած՝ հանդարտօրէն կը յառաջանար: Ինքնաշարժներու աղմուկը եւ մերթ Ենդ մերթ դինք հրող մարդիկը ոչ մէկ կարեւորութիւն կը ներկայացնէին անոր: Կը քալէր առեղծոածային ուժով մը, ինքնադիտակցութիւնը կորսնցուցած մարդու մը պէս, որ իրեն շատ ծանօթ ճամբաներէն կը քալէ՝ առանց մեծ ճիգի, աներեւոյթ ձեռքի մը հպումով:

Դէմքը կը բոցամուէր պրաւութեամբ: Հոն չկար շարժում, գիծերու փոփոխութիւն, ակնարկի խլրտում: Աչքերը երկարող պարապին նետած, մեղմ շնչառութեամբ, ամբողջական ծանրութեամբ կը քալէր Շողիկ:

Դպրոցէն կը մերադառնար, քննութեան անհեռիչ, ուր քիչ առաջ մեծ թիւով աշակերտներ, ոտքի կանգնած, շնչասպառ, կը կարգային պատէն կախուած թղթիկը, որուն վրայ յիշուած անունները ճակատագրական անհիշատարձ մը կը բանային իւրաքանչիւրին դէմ: Հիմա աչքերուն դէմ կը պատկերանար անուններու ցանկը ու, ճամբու մթնոլորտէն վերացած՝ կ'ապրէր ամէն կողմ երկարող, պարող, թաւալող ու ինկող անուններուն հետ, որոնք կը պրաւէին ճամբան, եւ այն պատր, ուրկէ կախուած թղթիկի կտորը կը զարնուէր ճակտին, յիշեցնելով այն պահը, երբ Շողիկ անոր դէմ կանգնած էր ժամերով, յոյսի, հրճուանքի, յուսահատութեան եւ վախի այեկոծ պահեր ապրելով, մինչեւ ա'լ աչքերը յոգնած էին շրջել մանր գիրքերուն վերայ, ու ինք անդրադարձած էր, թէ ձախողած է:

Կեցաւ: Գլուխը անշարժ էր: Մտածեց երթալիք վայրին մասին, այս անդիտակից ու ինքնաբերական քայլերը կրնային ուղղել քայլերը դէպի իրեն շատ ծանօթ վայրեր միայն, որոնցմէ խոյս տալ կ'ուզէր հիմա ամէն զնով: Ձախողութենէն ծնած սարսափը, ուրիշներու հետաքրքիր հարցումներուն պատասխանած վայրկեանին՝ պիտի զարնուէր դէմքին ու, ամէն անգամ ձախողած ըլլալու իրականութիւնը կրկնելով՝ բան մը պիտի գործուէր հոգիին մէջ, եւ պարտուած մարդու գիմանկարը պիտի կրէր իր երբեմնի զուարթ դէմքին վրայ:

Դիրքերը ափերուն մէջ ուժգին սեղմեց, գորովով ու ատելութեամբ խառն կիրքով, ճիշդ այնպէս՝ ինչպէս իր գողտր դէմքը պիտի պարփակուէր տղու մը ափերուն ուժգնութեան մէջ, ուր յաճախ կարելի չէր զանազանել սէրն ու ատելութիւնը:

Նայեցաւ ճամբուն, ուրեց փոխել իր ուղին:

Կը դնուէր անծանօթ, տարօրինակ վայր մը, առօրեայէն դուրս, շտեմարան վայր մը, կարմիր թռչուններով, կանաչ երկինքով ու սրճադոյն խոտերով տեղ մը, ուր մարդիկ ծաղիկներու գլուխներ ունենային ու ձուկներու թւեր, սիրամարգի նման երկար ու պերճախօս պոչերով, եւ աղուհսի խնդուքով պարէլին օդին մէջ, «Մէյրի փոփինդեան հովանոցի մը ներքեւ...»

Շողիկի դէմքը կենդանութեան նշաններ ստացաւ: Մեղմ ժպիտ մը սահեցաւ աչքերէն: Ի՞նչ հրաշալի պիտի ըլլար տեսնել այդ վայրը ու գէթ վայրը

կեանքի մը համար ապրիլ այդ տարօրինակութիւնը, ժողովուրդի գինք գետնին կապող դառն կոկիծը: Հիմա անոր աչքերուն մէջ կը վառէր անծանօթ աշխարհ մը տեսնելու հեռանկարէն ծնած խլրտումը: Երթալով կը զգար փողոցի տաք ներկայութիւնը, մարդոց խուճապահար վաղքը ու մթնոլորտը կը պարէր հրեռանքի ալիքներու մէջ, իսկ կեանքը հետզհետէ բարձրացող վերելիկի կերպարանք կը ստանար:

Դէպի աջ տանող ճամբուն մուտքին լայն դուռ մը կը բացուէր: Շողիկ աչքերը կեդրոնացուց հոն դուռած յայտարարութեան վրայ.

«Հանրային Պարտէզ»

Անունը զրաւութեամբ մը կը զարնուէր դէմքին: Ամէնուն պատկանող, ամէնուն սեփականութիւնը դարձող սեղ մը պէտք է ըլլար անիկա: Ուղեց մտնել ու նստիլ: Մտաւ լայն դուռնէն ներս ու հանդիպեալ աթոռի մը վրայ: Հանրային ութնո մը, հանրային թուշտներ, հանրային ծաղիկներ եւ ինք, հաւանարար, հանրային ներկայութիւն մը այս հանրային պարտէզին մէջ:

Մտածեց ու ժպտեցաւ լայն ու վարակիչ ժպիտով մը:

Գիրքերը նետեց նստարանին, իր ու անոնց միջեւ հեռաւորութիւն մը ստեղծելու մտադրութեամբ: Անոնց մէջ կոտորած էր իր երէկը ու վաղը առնորդութեամբ կը բացուէր: Կը մնար միայն ներկան, նստարանին վրայ հանդիպած այս պահը, որուն մէջ կարելի չէր խտացնել ո՛չ մէկ միտք, ո՛չ մէկ մէկ նպատակ ու ոչ մէկ ցնորք, ինք իր մէջ երկարող աննպատակ պահ մը միայն:

Երբեխաներ կը խաղային ցայտաղբիւրին շուրջ, նստարաններուն վրայ հանգչած էին մարդիկ, ոմանք իրարու քով, ուրիշներ՝ առանձին: Զուարճանքի՞ պահ էր այս, թէ հանգիստի: Ինքնամոռացութեան թէ ինքնագիտակցութեան վալու նպատակով էր, որ մարդիկ ինկած էին այս հանրային պարտէզը, որ կ'ընդունէր բոլորը անխտիր: Երկարեցաւ աթոռին վրայ, մէկ ոտքը նետեց միւսին վրայ ու թեւերը տարածեց նստարանի կոնակին: Այլքերը փակեց ու փորձեց տեսնել տարօրինակ այն աշխարհը, զոր երազած էր քիչ առաջ, կարմիր թուշտներով, կանաչ երկինքով ու սրճագոյն խոտերով աշխարհը, ուր մարդիկ ծաղիկներու գլուխներ տաննային եւ ձուկերու թեւեր...

Երբ Շողիկ աչքերը բացաւ, նստարանին վրայ, իրմէ քիչ անդին նստած էր երիտաւոր մը: Անմիջապէս դիտեց անոր դէմքը, վախնալով, թէ իրեն ծանօթ դէմք մը ըլլայ: Բայց ոչ: Անծանօթ էր:

Տղան մօտեցաւ քիչ մը:

Զարմանալի, խորհեցաւ Շողիկ, հաւանարար հանրային պարտէզին մէջ մարդիկ տեսակ մը մօտիկութիւն կը զգան:

— Բարեւ, — ըսաւ անծանօթը ժպտուն:

Աղջիկը նայեցաւ անոր դէմքին ու յանկարծ բարձրաձայն խնկաց: Փըխրուն ծիծաղը կը վարնուէր պարտէզի վառ ծաղիկներուն ու ցայտաղբիւրէն հոսող զուլալ ջուրի կարկային հետ ձուլուելով կը գունաւորէր մթնոլորտին մեղկութիւնը:

Տղան զարմանքով նայեցաւ իրեն ու աւելի մօտեցաւ:

— Անունս Արամ է, քօ՛ւկդ, — հարցուց:

— Անտանէ գիւ ինչ որ կ'ուզես, — պատասխանեց Շողիկ զուարթ դէմքով, ու իրեն այնպէս թուեցաւ, թէ օրը կ'ընդունէր մըն է, որ կը քաշենք երկար ու բարակ պարանով մը, մեր խօսքերու անհեթեթութեան եր-

կայնքին, մինչեւ որ զգուած, յոգնած՝ Թօթափենք մեր բառերը ու ի յնանք լռութեան գիրկը:

— Սեղա կը կանչեմ քեզ, — ըսաւ Արամ:

— Թերեւս սիրած աղջկանդ անունն է, — ըսաւ Շողիկ՝ զգալով, թէ մթնոլորտէն թեթեւութիւն մը կը փոխանցուի իրեն ու ամէն բան կը կորսործուի իր նշանակութիւնը:



Արդէն երեկոյ էր: Անդին, փողոցին մէջ ծայր տուած խուճապը հետքահետքէ կը խեղդուէր լոյսի վերջին շողերուն մէջ: Հանրային պարտէզը կը պարպուէր, իւրաքանչիւր մեկնող իրեն հետ լուս բան մը կը տանէր այդ փոքրիկ աշխարհէն ու աշխտեղ, նստարանին վրայ հանգչած՝ Շողիկ կը մնար անշարժ, մինչ Արամ, քովը նստած՝ կը հետեւէր իր շարժումներուն:

Իրիկնամուտը, ամայացող պարտէզը եւ դատարկուող փողոցը ոչ մէկ անդրադարձ կ'ունենային Շողիկի վրայ: Որոշած էր նստիլ հոն երկար, շատ երկար, մա'նաւանդ՝ որ ատանմին չէր, իրեն կ'ընկերանար Արամը, զոր ճանչցաւ քիչ առաջ, եւ որուն ներկայութիւնը կու դար լեցնել հանրային պարտէզի ամայութիւնը:

Նայեցաւ տղուն:

Անոր հարցական նայուածքին տակ կարելի էր նշմարել լուռ հետաքրքրութիւն մը:

Արդէն ամէն կողմ դատարկուած էր:

— Ուշ է, — ըսաւ Արամ:

— Գնա՛, — պատասխանեց Շողիկ զայրացած, սակայն իր առաջարկէն ստորափած նայեցաւ Արամին, որովհետեւ ամայութիւնը սոսկում կը պատճառէր:

— Հետո եկուր, — առաջարկեց Արամ՝ ոտքի ելլելով:

Աղջկը դիտեց այդ անծանօթ տղուն պատկերը, ու զգաց, թէ անոր ներկայութիւնը կը հեռացնէր զինք առօրեայէն, դիտեց հանրային պարտէզը, ու հոն տարածուած մթութիւնը ծաւալուն ամայութեան զղանցութիւնը փոխանցեց իր փչրուած հոգիին:

Գիրքերը գրկելով ոտքի ելաւ:

Անոնք անցան լոյսերով ողողուած մայթերէն: Մտան ստորերկրեայ սրահ մը, ուր նուազախումբին ստեղծած աղմուկին ծանր հեւքը կը հանգչէր ժարդոց հոգիներուն վրայ ու, վարակելով բոլորը՝ կը դարձնէր զանոնք ժառ մը իրմէ, իր աղմուկէն, իր շարժումէն, իր չափականութենէն, իր սպառումէն:

Շողիկ նստաւ ու աչքերէն փայլատուող ժպիտը փարեցաւ ցնցուող մթնոլորտին: Կը դիտէր շուրջը ու սրահին մէջ խլրտող պարը կը հրապուրէր զինք ու կը վարակէր պարելու ջերմ տենդով:

— Պարենք, — առաջարկեց Արամ՝ ոտքի ելլելով:

Շողիկ մտաւ այդ խառն աղմուկին մէջ ու սկսաւ շարժիլ: Կը պարէր ամբողջ մարմնով, պարին հետ ներդաշնակելով միաճն ու երեւակայութիւններ, որոնք կու դային խտանալու այդ սանձարձակ ու ամբողջական երկունքին, որ կը ցնցէր սրահը, ու իւրաքանչիւր շարժումի հետ կը խեղդուէր պատկեր մը, չոր իրականութիւն մը, անցեալի յուշ մը, թարմ կսկիծ մը, ու ամէն բան մոռցած կը վերադառնար սեղան, ուր, գիրքերու տրցակին կից՝

խմելիքի լիցյուն գաւաթը կը սպասէր իրեն՝ ծարուա լըթունքի մը նման։

Ժամերը կը խորանային ցնցուղ գիշերուան մէջ ու պարսաւաճը կը հստանար ծուխով, մարդով, շարժումներու ծանրութեամբ ու գաւաթներու դառարկութենէն վերացած խորհուրդով։ Իւրաքանչիւր շարժումի հետ երկնային հրճուանք մը կը զծագրուէր Շողիկի այրող գէճքին վրայ ու ան կը պարզէր իրեն գէճ ու կը պարէր տեղ մը իր գոյութիւնը իմաստաւորելու մեծ ճիգով, բան մը նուաճելու հրճուանքով ու քանի՜ կ'երկարէր գիշերը, ա՛յնքան ուժգին կը դառնար պարը։

— Երթանք, — բռաւ Արամ յանկարծ։

Աղջիկը նայեցաւ տնոր նուազուն աչքերուն ու շարունակեց պարել։

— Ուշ է, — ըսաւ Արամ ու փափաքեցաւ, որ գաղբի այս անհասկնալի արամը, որուն մէջ ինք ազամայ կը տարուբերէր։

— Պարէ՛, — հրամայեց Շողիկ վճռակամ ու այդ վայրկեանին տղան փոքրացաւ անոր դէմ, դարձաւ ոչինչ, ոչինչէն վար բան մը, որ իր գէճ կը կանգնէր վախով, տատամսումով, երկմտանքով, իր անձէն այնքան հեռու այդ տղան, որուն ներկայութիւնը ալ ո՛չ մէկ նշանակութիւն ունէր իրեն համար, այնքան ատեն, որ ան հեռու էր իր ներաշխարհի վերլուարումները ընդունելու կարողութենէն, եւ հեռու իրմէ ա՛յնքան, ա՛րքան հեռու էին իրեն շատ մօտիկ թուացող մարդիկ։ Ձղաջ, թէ ատանմին է պարսաւաճին ջերմութեան մէջ, ատանմին՝ պարին մէջ, կեանքին մէջ, քննութեան սենեակներու ու ժախողութեան վարադոյրներու ետին։

Երբ դուրս եկան պարասրահէն, գիշերը արդէն կը նիւրհէր։

Շողիկ մտածեց իրեն սպասողներու մասին, բայց ոչինչ, ինք պիտի քալէր փողոցին մէջ, այսպէս, մինչեւ իր քայլերուն հետ մարէին հոգիին խլրտումները։

— Ո՛ւր է տունդ, — հարցուց Արամ։

Աղջիկը նայեցաւ տնոր ու հեզնական ծալիւով մը պատասխանեց։

— Հանրային պարտէզը։

Եւ իր քայլերը կ'ուղղուէին հոն, մինչ հոգին կը շնչէր գիշերուան լռութենէն ծնող վեհութիւնը։

Արամ զայրացած կ'ընկերանար իրեն, զգալով, թէ իր ներկայութիւնը կորսնցուցած էր երբեմնի իմաստը Շողիկի համար։

Հանրային պարտէզը լռու ու ամայի էր։

Շողիկ հանդարտօրէն ինկաւ նստարանի մը վրայ, գիւրքերը տեղաւորեց մօտը։

Արամ տեղաւորուեցաւ քովը։

Լուրթիւն էր ամէն կողմ։ Արամին թեւերը կը տարածուէին Շողիկի շուրջ ու օրուան կուտակած թոյնը կը սողար անոնց աջող շրթներուն վրայ ու գիշերը կը խորտակուէր հանրային պարտէզի նստարանին վրայ։

Առաւօտուն, Շողիկ իրեն հետ ատանմինն տարաւ արեւածագի միայնակ շողերը։

ՆԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Հ Ի Ր Ո Շ Ի Մ Ա

Այն իրիկուն,
 Մեղադրանք լուսնի տակ քաղաքում,
 Փակ շրթներիդ լուսնի մեջ՝
 Մեր բաժանման ճամբարն վրայ քայլ մ'էր նետում.
 Մինչ հայնացիդ մէջ խոնար ժամանակը կաթիլ-կաթիլ կը հեկեկար,
 Մեր ստուերները գրկած՝ երբ մայրէ մայր կը քալէինք միասին,
 Արցունքիդ մէջ հաշիւն աշուն հղէց-հղէց սուլեցին
 Երգը տամուկ գիշերում,
 Հոն՝ ուր գայեր խոսքում
 Մոռցում էր մըն էր վաղուց...

Ու դուն, անխոս շրթներդ պոկում գիշեր մը համբոյր՝
 Յալիչտակում անխոս,
 Հիւրոշիւմ...

Քոչի



Քամին շատախոս
 Մտաւ լուսնի իմ անհեղինակներս
 Ու գիշերը ողջ մեծ գրուցեցինք,
 Ես ու խնկր քամին,
 Թէ մեր դրացի վարդապետ Ռամիւս
 Շրթնակներ ունի խորոշիկ նման,
 Որ երբ պրկուին ու բացավանք՝
 Հարկ է աք քամին
 Շրթներու խոնար խոսքերն անբարեա
 Խօլաբար տանի
 Ու խնկր մատներով
 Իր կրակներէն մերկացնէ Ռամիւս...
 Յետոյ՝ խոսքերու մոխիր շրթներով՝
 Կեղծերային ծով անգրութեամբ,
 Մարմնէ առ մարմն
 Համբուրէ Ռամիւս,
 Որ աշուհներու
 Տարիներու խուլ մոխրադաշտին մէջ,
 Ռամիւս միշտ վառի
 Խորոշիկ նման...

ՓԱՆՈՍ ԶԵՐԱՆԵԱՆ

ԾԱԻԱԼԱՊԱՇՏ ՈԳԻ...

Առաճգակամ, անհանգարտ,
Ալիժուփ ու անհաշիւ
Եւ անձաբձակ այս ոգին՝
Ով որ ճգեց արիւնիս
Թող գայ, ըլլայ տէր անոր,
Դաշնաւորէ քող գոնէ
Շփոթեմք խուսմամբոյս,
Որ մարմինն իմ
— Իբրեւ անպէտ սահմանափակ
Զղարճնէ գոհ մը գուր
Իր աննշան քմայքին
Ժաւաղապաշտ այս ոգին...

ՈՐՈՎ ՀԵՏԵԻ

Միլանի այս հոգն տհարկու
Եւ քաղթեքու բոյրն զգլխիչ
Առին-տարին զիս այնտեղ,
Ուր անհատնում մեղան կար
Եւ քաղթ անհամար:

Ուշ էր, շատ ուշ, երբ ուզեցի
Ըլլալ փոքր եւ յարախ,
Ա՛հ, անհատնում մեղան կար
Եւ քաղթ անհամար...

Այս հոռոճիկ,
Այս սոսիճնճ,
Բայց չկրցայ ես անջատուիլ անոնց լուծէն խելագար,
Որովհետեւ,
Ա՛հ, անհատնում մեղան կար
Եւ քաղթ անհամար:

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ



Ս Ա Մ Ո Ւ Է Լ Պ Է Ք Է Թ

Իրլանդացի գրագետ Սամուէլ Պերկին Հե-
տադայ Թատերախաղը, որ կը համարուի իր գե-
լուի-գործը, գրուած է Փրանսերէնով եւ ա-
պա Հեղինակին կողմէ Թարգմանուած է անգլի-
րէնի:

Հայացման ներկայ աշխատանքը կատարուած
ատեն նկատի առնուած են միանգամայն երկու
գտարբերակներն, թէ՛ Փրանսերէն բնագիրը եւ
թէ բնագրի մը ուժը ունեցող Հեղինակային Թարգ-
մանութիւնը:

Հակառակ այս բնախնդիր վերաբերումին,
Թարգմանական այս աշխատանքը կրնայ զերծ մը-
նացած չլլալ թերութիւններէ աւ նուազումնե-
րէ, աշխուսահեանքիւ վստահ ենք, որ ընթերցողը
մեծ բաւարարութեամբ մը պիտի Հետեւի յառա-
ջապահ Թատրոնի այս դասական յաղթանակին...

ՍՊԱՍԵԼՈՎ ԿՈՏՈՅԻՆ

Ա Ն Ձ Ն Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԷՍԹՐԱԿՈՆ
ՎԼԱՏԻՄԻՐ

ՓՈԶԶՈ
ԼԱՔԻ

ՏՂԱՅ ՄԸ

Ա Ռ Ա Զ Ի Ն Ա Ր Ա Ր

Գաւառական ճամբայ մը: Մառ
մը:

Իրիկուն:

Էսթրական, գետինն նստած կը
փորձէ հանել կօշիկը: Զայն կը
քաշէ երկու ձեռքերով, հեռա-
լով: Տեղի կու տայ սպառած, կը
հանգչի քիչ մը՝ հեռավոր, կը
վերսկսի: Նոյն խաղը:

Կը մտնէ վլատիմիր:

ԷՍԹՐԱԿՈՆ (հորէն տեղի տալով)։— Ը-
նելք օշինչ կայ:

ՎԼԱՏԻՄԻՐ (առաջանալով կտրուկ, հաւ-
տատ քայլերով, սրունքները լայն

բացած)։— Կը սկսիմ հարց տալ ա-
նոր: Երկարօրէն ընդդիմացած եմ
այդ մտածումին, ինքս ինձ ըսելով.
Վլատիմիր, խելքդ գլուխդ հաւաքէ:
Դեռ ամէն բան չես փորձած: Եւ ես
վերսկսայ պայտարը: (Կ'անփութիւի՝
մտածելով պայտարին մասին): Դառ-
նալով էսթրականին)։ Ուրեմն դարձ-
եալ հոռ ես:

ԷՍԹՐԱԿՈՆ։— Կը կարծե՞ս:

ՎԼԱՏԻՄԻՐ։— Ուրախ եմ քեզ վերստին
տեսնելով: Կը կարծէի, թէ վերջնա-
կանապէս մեկնած ես:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ես եւս :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Դարձեալ միասին : Ինչպէ՞ս տօնել այս վերահանդիպումը : (Կը մտածէ) : Ոտքի ել, որ ողջագուրեմ քեզ : (Ձեռքը կ'ընկալէ Էսթրակոն) :

ԷՍԹՐԱԿՈՆ (զրգոքով).— Քիչ ետք, քիչ ետք, ո՛չ հիմա :

Լուսինն :

ՎԼԱՏԻՄԻՐ (վերադարձած, սառնօքով).— Կարելի՞ է արդեօք հասկենալ, թէ՞ Պարոնը ո՛րք անցուց գիշերը :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Փոսի մը մէջ :

ՎԼԱՏԻՄԻՐ (ապշահար).— Փոսի՞ մը : Ո՛ր :

ԷՍԹՐԱԿՈՆ (առանց շարժումի).— Հոն :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Եւ քեզ չծնծեցի՞ն :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Այո... Բայց ոչ շատ :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Միշտ նո՞յն մարդերը :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Նո՞յն մարդերը : Ձեռքդ տիր :

Լուսինն :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Երբ մտածեմ այդ մասին... Ժամանակէ մը ի վեր... Հարց կու տամ ես ինծի... Ի՞նչ կըրնայիք ըլլալ գուն... Առանց ինծի... (Վնասկանօրէն) : Դուք հիմա ուրիշ բան պիտի չըլլայիք, եթէ ոչ փոքր ոսկրակոյտ մը, ոչ մէկ կասկած այդ մասին :

ԷՍԹՐԱԿՈՆ (խայթած).— Եւ յետո՞յ : ՎԼԱՏԻՄԻՐ (ննջած).— Ասկա շատ է մէկ մարդու համար : (Լուսինն, զուարթօրէն) : Միւս կողմէ՛ ի՞նչ շահ կայ ներկայիս յուսահատելու... ահա թէ ինչ կը մտածէի : Այդ մասին պէտք էր մտածել շատ առաջ, 1900-ական թուականներուն :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Վերջացուի : Եւ օգնէ ինծի՝ հանելու համար այս աղտոտութիւնը :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեռք ձեռքի մենք մեզ նետած կ'ըլլայինք Էֆէլի դադաթէն, առաջիններուն կարգին : Այն օրե-

րուն ներկայանալի էինք : Հիմա շատ ուշ է : Նոյնիսկ պիտի չձգեն մեզի վեր բարձրանալ : (Էսթրակոն կը շարժարուի կօշիկին վրայ) : Ի՞նչ կ'ընես :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կօշիկներս կը հանեմ : Նրման բան երբեք պատահած չէ՞ քեզի :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Երկար ասին է կ'ըսեմ քեզի, որ կօշիկները պէտք է հանել ամէ՛ն օր : Լաւ կ'ընէիր դիւ մտիկ ընելով :

ԷՍԹՐԱԿՈՆ (նուաղում).— Օգնէ ինծի :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կը ցուցնէ՞ :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կը ցուցնէ՛ : Ինծի կը հարցնէ, թէ՞ կը ցուցնէ՛ :

ՎԼԱՏԻՄԻՐ (բարկացալ).— Քեզմէ զատ ոչ ոք կը տառապի : Ես նկատի չեմ առներ : Պիտի ուզէի սակայն քեզ իմ տեղս տեսնել, գիտնալու համար, թէ ի՞նչ պիտի ընէիր :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Վերաւորուեցա՞ր :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Վերաւորուեցա՞ր : Ինծի ծի կը հարցնէ, թէ՞ վերաւորուեցա՞ր : ԷՍԹՐԱԿՈՆ (մտնումը շուրջ).— Այդ բոլորը արգելք չեն հանդիսանալ, որ կ'սկսեմ :

ՎԼԱՏԻՄԻՐ (հակելով).— Ճիշդ է : (Կը կրկնուի) : Երբեք պէտք չէ գտնել ասին վրէժը բաները :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ի՞նչ կ'ուզես, որ ըսեմ քեզի, դուն կը սպասես մինչեւ վերջին վայրկեանը :

ՎԼԱՏԻՄԻՐ (երգով).— Վերջին վայրկեանը : (Կը խնկայ) : Երկար է, բայց լաւ է : Ո՞վ բռնած էր ասկա :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ձե՞ս ուղեր օգնել ինծի :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Երբեմն ես ինծի կ'ըսեմ, որ ի վերջոյ պիտի դայ : Եւ այդ վայրկեաններուն կը խենթանամ : (Կը հանէ գլխարկը, կը նայի ներսը, հան կը պտրտցնէ ձեռքը, կը քօթուէ, վերստին կը դնէ գլխուն) : Ինչպէ՞ս ըսել : Աղատագրուած եւ եւ միաժամանակ (կը փնտռէ քաղը) ահաբեկ : (Շեշտով).— Ա-ՀԱ-ԲԵ՛յ : (Դարձեալ կը հանէ գլխարկը, կը նայի ներսը) : Տարօրինակ : (Կը գարնէ գլխարկի ծայրամասին, կարծես

բան մը քափել ուզելով, վերստին կը նայի ներսը, կը դնէ գլխուն)։ Վերջապէս... (Էսքրակում, գերագոյն ճիգով մը՝ կը յաջողի համել կօշիկը։ Կը նայի ներսը, հոն կը պտըտցնէ ձեռքը, վերիվար կը շրջէ, կը բօքուէ, գետին կը նայի, քէ արդեօք որեւէ բան ինկած է, ոչինչ կը գտնուէ, դարձեալ ձեռքը կը պտըտցնէ ներսը, տարտամօրէն դիմացը նայելով)։ Ուրե՛մն։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ոչինչ։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Յո՛յց տուր։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Տեսնելիք ոչինչ կայ։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Փորձէ դարձեալ հազնիկ։

ԷՍԹՐԱԿՈՆ (հենելով ոտքը).— Թող թէ՛ մը ոգ առնէ։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ահաւասիկ ամբողջ մարդը, որ կը մեղադրէ իր կօշիկները, երբ յանցաւորը իր ոտքն է։ (Անգամ մը եւս կը հանէ գլխարկը, կը նայի ներսը, հոն կը պտըտցնէ ձեռքը, կը բօքուէ, կը գարնէ վրան, կը փէշ ներսը, վերստին կը գնէ գլխուն)։ Մասհոգի է։ (Լռութիւն։ Էսքրակում կը քերէ ոտքը՝ խաղցնելով ոտքին մտները, որպէսզի օդը լաւ շրջի մէջը)։ Աւագակներէն մէկը փրկուեցաւ։ (Լռութիւն)։ Պատուաբէր համեմատութիւն մըն է։ (Լռութիւն)։ Կոկո՛ւ։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ի՞նչ։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Եթէ աղախարած ըլլա՜յինք։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչո՞ւ համար։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Օ՛ր... (Կը փնտռէ քառը)։ Հարկ չկայ մանրամասնութեանց մէջ մխրճուելու։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Մեր ձեռած ըլլալուն։

Վլատիմիր լիանագուգ կը խնդաւ. բայց անմիջապէս կը գաղտնիքիմէ, ձեռքերը տանելով դէպի սրունքները, դէմքը կծկուած։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մարդ նոյնիսկ չի համարձակիր խնդալ։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կը խօսիս զրկանքի մը մասին։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Միտիան ժպտել։ (Դեմքին կը ծագի լայն ժպիտ մը, որ կը տեսնուի որոշ ժամանակ աւելի սառի անմիջապէս. ապա յանկարծութեամբ կը մարի)։ Նոյն բանը չէ։ Վերջապէս։ (Լռութիւն)։ Կոկո՛ւ։

ԷՍԹՐԱԿՈՆ (չզայիւն).— Ի՞նչ կայ։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Սուրբ Գիորգը կարգացած է։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Սուրբ Գիորգը... (Կը մըտածէ)։ Ահաւորկ մը պէտք է նետած ըլլամ զբան։

ՎԼԱՏԻՄԻՐ (զարմացած).— Ահաւորկ մը զարմացած։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Զե՛մ գիտեր, թէ անկախ աստուած ունէ՞ր, թէ անաստուած էր։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Զայն կը չփոխուի Բողոքին հետ։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Հնարաւոր է, Կը յիշեմ Սուրբ Երկրին քարտէսները։ Գուհաւոր։ Նա՛տ գեղեցիկ։ Մեռեալ ծովը տօգոյն կազմուի էր։ Հագիւ աւերակներ ծաղկաւ կը զգայի։ Հոն է, որ պիտի երթանք անցընել մեր մեղքալուստիքը, կ'ըսէի ես ինծի։ Պիտի լողանք։ Երջանիկ պիտի ըլլանք։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Դուք պէտք է բանաստեղծ ըլլայիք։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ե՛մ։ (Մտնումընելով իր ցնցոտիները)։ Յայտնի չէ՞ միթէ։

Լռութիւն։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ի՞նչ կ'ըսէի... Ինչպէ՞ս է հիմա ոտքը։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կ'ուռի։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ա՛հ, այո, Երկու աւագակները։ Կը յիշե՞ս պատմութիւնը։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՛չ։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Պատմե՛մ քեզի։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՛չ։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ժամանց մը կ'ըլլայ։ (Լռութիւն)։ Երկու աւագակներէն, մեր Փրկչին հետ միաժամանակ խաչուած։ Մէկը...

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՞ր մէկը։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Փրկիչը, Երկու աւազակներ: Կ'ըսեն, որ մէկը փրկուած է եւ միւսը... (Կը փնտռէ փրկուածին հակաճիշդը...): զատապարտուած:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Փրկուած ինչէ՞ն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Դժոխքէն:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ես կ'երթամ: (Զի շարժի):

ՎԼԱՏԻՄԻՐ.— Եւ սակայն... (Լռութիւն): Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ... յուսամ չես ձանձրանար:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Մտիկ չեմ ընկեր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ չորս տեսարանիչներէն միայն մէկը կը խօսի աւազակի մը փրկուած ըլլալուն մասին, երբ չորսն ալ հոն էին — այսինքն՝ ոչ հետու տեղ մը: Եւ միայն մէկը կը խօսի փրկուած աւազակի մը մասին: (Լռութիւն): Դէ՛, Կոկո, ատեն-ատեն կարծիք մը յայտնէ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Մտիկ կ'ընեմ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձորսէն մէկը: Միւս երեքէն երկուքը բնաւ աւազակներ չեն յիշատակեր եւ երբորդը կ'ըսէ, թէ անոնք երկուքն ալ իսկ ձեռքով նախատեսելի թիւեր:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՞ր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինչպէ՞ս:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ոչինչ կը հասկնամ... (Լռութիւն): Նախատեսելի դո՞ւր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Փրկիչը:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչո՞ւ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Որովհետեւ չուզեց դիտել փրկիչը:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Դժոխքէն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ո՞չ, անո՛ւ Մահէ՞ն:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Թեոթո՞յ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Պէտք է երկուքն ալ դատապարտուած ըլլան:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Եւ յետո՞յ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց միւսը կ'ըսէ, որ երկուքէն մէկը փրկուած է:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Դէ լաւ: Անոնք համաձայն չեն: Ա՛յս է ամէնը:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Հոն էին չորսն ալ: Եւ մէկը միայն կը խօսի փրկուած աւազակի մը մասին: Ինչո՞ւ տեղի անոր հաւատալ, քան միւսներուն:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՞ր կը հաւատայ անոր: ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ամէն մարդ: Ատիկա միակ ընդունուած տարբերակն է, զոր կը ճանչնան:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Մարդիկ կախ... ներ են:

Ծաւ արտայայտող զէմքով մը ոտքի կ'ելլէ, կապալով կ'երթայ դէպի բեմին ժախակողմեան ճուղիսը, կտնգ կ'առնէ, ձեռքերը աչքին հովանի ըրած կը նայի հեռուն, կը վերադառնայ, կ'երթայ դէպի աջակողմեան ճուղիսը, կը նայի հեռուն: Վառիմիր ամօր կը հետեւի աչքով, ապա կ'երթայ ու կը հաւաքէ կօշիկները, կը նայի ամօնց մէջ, վար կը նետէ անմիջապէս:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Պա՛հ: (Կը քֆնէ գետին):

Էսթրակոն կը վերադառնայ բեմին կեդրոնը, կ'ըսէ՝ հանգիստ տեսներուն:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Հաճելի վայր: (Կը վերադառնայ, կ'առաջանայ մինչեւ բեմին ծայրը, ազնաւոր՝ համդիտ տեսներուն): Գեղաժիծաղ տեսարաններ: (Կը դառնայ դէպի Վառիմիրը): Երթա՛նք:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեռք կրնար:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչո՞ւ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կը օգտակար կոտորին:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ժիշդ է: (Լռութիւն): Վատա՛հ ես, որ հոս էր...

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ի՞նչ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Որ պիտի օգտակարին:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ըստե՛, որ ծառին առջեւ ըլլանք: (Կը նային ծառին): Ուրիշ ծառ կը տեսնե՞ս:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ի՞նչ է տեսիլ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կ'ըսեն թէ ուռնի մըն է:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՞ր են տերեւները:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձորցած պէտք է ըլլան:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Վերջ տուր արցունքներուն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Անտուաղն ծաղկումի երգանակը չէ:



ԷՍԹՐԱԿՈՆ.— Ըստ ինձի՝ աւելի տունկ
 մըն է։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Թուփ մը։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Տունկ մը։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— ... մը։ (Կը վերակցի)։
 Ի՞նչ ըսել կ'ուզես։ Որ մենք սխալ
 տեղ եկած ենք։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ան հոս պէտք է ըլլար։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Հաստատօրէն չէր ըսած,
 որ պիտի գայ։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Եւ եթէ չգա՞յ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Կը վերադառնանք վաղը։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Եւ յետոյ վաղայաջորդ
 օրը։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Թերեւս։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Եւ այսպէս շարունակ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Այսինքն...
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Մինչեւ որ գայ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Անգութ ես։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Երէկ արդէն հոս էինք։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ա՛հ, ո՛չ, հոգ կը սխա-
 լես։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ի՞նչ ըրինք երէկ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինչ ըրինք երէ՞կ։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Այո։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ատուած իմ... (Բար-
 կանալով)։ Քեզի հետ կապ ունեցող
 ոչ մէկ բան յստակ է...
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Իմ կարծիքով այստեղ
 էինք։
 ՎԼԱՏԻՄԻՐ (շուրջը նայելով).— Վայրը
 բնառնի՞ է քեզի։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ըսածս այդ չէր։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ուրե՞մն։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Տարբերութիւն չ'ըներ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ամէն պարագայի... այդ
 ծառը (դառնալով համդիտականնե-
 րուն) ... այդ ճաշի՞նք...
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Վստահ ես, որ այս գի-
 շեր էր։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ի՞նչ։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Որ պէտք է սպասէինք։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Շարաթ օր ըսաւ։ (Հռու-
 քիւն)։ Կարծեմ։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Կը կարծե՞ս։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ես պէտք է նոթագրու-
 թիւն մը պահած ըլլամ։ (Կը խա-
 գարկէ գրպանները, ուրկէ կը յար-
 դիմ ամէն տեսակի ամպէտֆ իրեր)։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Բայց ո՞ր Շարաթ օրը։ Եւ
 իսկապէս այսօր Շարաթ է։ Աւելի
 հաւանական չէ՞, որ Կիրակի ըլլայ,
 կամ Երկուշաբթի, կամ Ուրբաթ։
 ՎԼԱՏԻՄԻՐ (խուճապահար նայելով չորս
 բոլորը, այնպէս՝ որ կարծես օրը
 գրաւած ըլլար դաշտանկարին վրայ)։
 Կարելի չէ։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Կամ Հինգշաբթի։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ի՞նչ պիտի բնեք հիմա։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Եթէ երէկ եկաւ ու մենք

Հոս չէինք, պիտի ընդունեիս, որ այս
սօր պիտի չգայ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց դուն կ'ըսես, որ ե-
րէկ գիշեր ժենք եկանք:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կրնամ սխալած ըլլալ:
(Լռութիւն): Քիչ մը լռենք, կ'ու-
զե՞ս:

ՎԼԱՏԻՄԻՐ (նուազում).— Լաւ: (Էս-
քրակում կը մատի գետին: Վլատիմիր
քննիմ վրայ կ'երթնէ կէ ջգայնօրէն,
ատեն-ատեն կանգ առնելով եւ դի-
տելով հետուն: Եսքրակում կը բնա-
նայ: Վլատիմիր կանգ կ'առնէ Էս-
քրակումի դիմաց): Կոկո՜... (Լռու-
թիւն)... Կոկո՜... (Լռութիւն): Կո-
կո՜:

Եսքրակում ընդստ կ'արթնայ:

ԷՍԹՐԱԿՈՆ (կ'արտայայտէ իր կացու-
քեան անբազր սարսափը).— Կը քնա-
նայի: (Յանդիմանակաւ շեշտով):
Ինչո՞ւ բնաւ չիս ձգեր, որ քնանամ:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինքզինքս առանձին կը
զգայի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Երազ մը տեսայ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մի՛ պատմեք:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կ'երազէի, որ...

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մի ՊԱՏԻՄԵՐ:

ԷՍԹՐԱԿՈՆ (շարժում մը դէպի հորի-
զոնները).— Ատիկա կը բաւէ՞ քեզի:
(Լռութիւն): Աղէիս դործ չէ ըրածդ,
Տիտի՛: Որո՞ւ կ'ուզես, որ պատմեմ
իմ մզմաւանդներս, եթէ ոչ քեզի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Թող անոնք մնան անձ-
նական դադտներ: Գիտես, որ չեմ
կրնար տանիլ ատիկա:

ԷՍԹՐԱԿՈՆ (դառնօրէն).— Վայրկեան-
ներ կան, երբ կը մտածեմ, որ աւե-
լի լաւ կ'ըլլար մեզի համար, եթէ
բաժնուէինք իրարմէ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Հետուն պիտի չերթայիր:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Ատիկա շատ գէշ պիտի
ըլլար, իսկապէս շատ գէշ: (Լռու-
թիւն): Այնպէս չէ՞, Տիտի՛, շատ
գէշ պիտի չըլլար: (Լռութիւն): Երբ
մտածես ճամբու դեղեցկութեան մա-
սին: (Լռութիւն): Եւ ճամբորդներու
բարեացակամութեան մասին: (Լռու-
թիւն: Ողորդիչ): Այնպէս չէ՞, Տի-

տի՛:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Հանգարուէ՛:

ԷՍԹՐԱԿՈՆ (կիրճով) Հանգարուէ՛:

... Հանգարուէ՛: Երազում:
Անգլիացիները կ'ըսեն. Հաւանգարու-
ուէ՛: Անոնք Հանգարու մարդիկ
են: (Լռութիւն): Գիտե՞ս պատմու-
թիւնը անգլիացիի մը, որ Հանգա-
րուն գացած է:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Այո:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Պատմէ՛ գայն ինծի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կը բաւէ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Անգլիացի մը գիտնալիս
լով Հանգարուն կ'երթայ: Փոխ-
փաթերնը Հարց կու տայ անոր, թէ
խորտեա՞լ մը կ'ուզէ ունենալ,
թո՞ւի մը, թէ չիկահեր մը: Եսքրու-
նակէ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կը բաւէ՛:

Վլատիմիր դուրս կ'ելլէ: Եսքրա-
կում ոտքի կ'ելլէ եւ կը ետեւի
անոր, մինչեւ քննիմ ծայրը:
Եսքրակում դիմախաղեր կ'ընէ,
նման կոփամարտիկի մը ճիգե-
րուն, որոնք հանգիստանալու ու-
շագորութիւնը կը խլեն: Վլատի-
միր կը վերադառնայ, կ'անցնի
Եսքրակումի առջեւէն, կը կտրէ
քննը, գլխաւիկ: Եսքրակում
հայլ մը կ'առնէ անոր ուղղու-
թեամբ, կանգ կ'առնէ:

ԷՍԹՐԱԿՈՆ (հազարաբեամբ).— Կ'ու-
զէիր Հե՞տս խօսիլ: (Վլատիմիր չի
պատասխաներ: Եսքրակում հայլ մը
կ'առնալայ): Բա՞ն մը ունէիր ին-
ծի ըսելիք: (Լռութիւն: Քայլ մը եւս
կ'առնալայ): Ըսէ, Տիտի՛...

ՎԼԱՏԻՄԻՐ (առանց ետին դառնալու).—
Ըսելիք ոչինչ ունիմ քեզի:

ԷՍԹՐԱԿՈՆ (հայլ մը եւս առաջանա-
լով).— Բարկացած ես: (Լռութիւն:
Քայլ մը եւս առաջանալով): Եւ-
րօղութիւն: (Լռութիւն: Քայլ մը
եւս առաջանալով): Կը հպի ուսե-
րուն: Դե՛հ, Տիտի՛: (Լռութիւն):
Տուր մեռքդ: (Վլատիմիր կը դառ-
նայ անոր կողմը): Ողջագուրէ՛ դիս:
(Վլատիմիր կը կտրւալայ): Ես-

մաս մի՛ ըլլար: (Վլատիմիր կը մեղ-
մանայ: Կ'ողորմուի: Էսքրակոն
կ'ընկրկի): Սխտոր կը հոտիս:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Երեկամենքուս համար է:
(Լուսիւն: Էսքրակոն ուշադրա-
քեամբ կը նայի ծառին): Ի՞նչ պի-
տի ընենք հիմա:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Պիտի սպասենք:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Այո, բայց սպասմա՞ն ըն-
թացին:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչպէ՞ս կ'ըլլայ, եթէ
մենք մեզ կտեսնենք:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Ատիկա պիտի ըլլար
պրկումի միջոց մը:
ԷՍԹՐԱԿՈՆ (ողնաքաշած).— Պրկումի՞,
ՎԼԱՏԻՄԻՐ.— Անոր բոլոր հետեւանք-
ներով: Հո՞ն՝ ուր ասիկա կ'իյնայ՝
կը բուսնին մարդաստան ծաղիկները:
Ատոր համար է, որ այդ ծաղիկները
կը ճշան, երբ փրցնես զանոնք: Ձէ՞ր
գիտես ասիկա:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Անմիջապէս կտեսնենք մենք
մեզ:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Ճիւղէ՞ մը: (Կը մտնեն
ծառին եւ կը գիտեն զայն): Ես պի-
տի չմտնէի տտոր:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Միշտ կտեսնի է փորձել:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Փորձէ՛:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Քեզմէ հոգ:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ո՞չ, նախ զո՞ւն:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչո՞ւ ես:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Դուն ինձմէ աւելի թե-
թեւ ես:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Իրապէս:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեմ հասկնար:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Բայց մտածէ՛ զի՛ն մը,
դէ՛հ:
Վլատիմիր կը մտածէ:
ՎԼԱՏԻՄԻՐ (ի վերջոյ).— Ձեմ հասկը-
նար:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Պիտի բացատրեմ զեղի:
(Կը մտածէ): Ճիւղը... Ճիւղը...
(Բարկութեամբ): Բայց փորձէ՛ հա-
կրնալ:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Այլեւս միայն քու վրադ
կը հաշուեմ:
ԷՍԹՐԱԿՈՆ (նիզով).— Դո՛կո՛, թեթեւ
հիւզը չի կտարիւր — Կոկոն մեռած:
Տիտին ծանր-ճիւղը կը կտարի-Տի-

տին մինակ: (Լուսիւն): Միեւ-
ղէ՞ս... (Ան կը փնտտէ ճիւղը ըս-
ցատրութիւնը):
ՎԼԱՏԻՄԻՐ.— Այդ մասին չէի մտա-
ծած:
ԷՍԹՐԱԿՈՆ (զտած ըլլալով փնտա-
ծը).— Աւելին ընողը՝ կրնայ պա-
կան ալ ընել:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ես զեղմէ աւելի՞
կը կշռեմ:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Դուն կ'ըսես: Ես բան մը
չեմ գիտեր այդ մասին: Երկուքն
մէկը հաւանական է: Կամ՝ մտաւո-
րապէս:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Ուրեմն ի՞նչ ընենք:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Բա՛ն մըն ալ չընենք: Ա-
տիկա աւելի ապահով է:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Սպասենք, թէ ինչ պիտի
բա՛ն մեղի:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՞վ:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Կոտոն:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Համաձայն եմ:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Սպասենք, նախ՝ հարցը
յատակացնելու համար:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Միւս կողմէ՝ թերեւս ա-
ւելի լաւ պիտի ըլլար երկաթը տաքը
տաքին ծեծել:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Շատ հետաքրքիր եմ,
գիտեալու համար, թէ ի՞նչ պիտի ը-
սէ մեղի: Ատիկա մեզ որեւէ յանձ-
նառութեան տակ չի դնիր:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Որոշապէս ի՞նչ բանի հա-
մար կանչեցինք զինք:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Դուն հոն չէ՞ր:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Ուշադրութիւն չըրի:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Դէ լաւ... Մասնաւոր
ուշե՛ն:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Տեսակ մը ազօթք:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Պարզօրէն:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Տարտամ աղերս մը:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Եթէ կ'ուզես:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Եւ ի՞նչ պատասխանեց:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Որ նկատի պիտի առնէր
զայն:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Որ ոչինչ կրնար խոստա-
նալ:
ՎԼԱՏԻՄԻՐ.— Որ պէտք էր մտածէր այդ
մասին:
ԷՍԹՐԱԿՈՆ.— Հանդիստ մտքով:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Որ պէտք էր խորհրդակցէր իր ընտանիքին հետ։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Բարեկամներուն։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Գործակալներուն։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Աշխատակիցներուն։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Տոմարներուն։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Դրամատան հաշիւին։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Որոշում մը առնելէ առաջ։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Բնակարան է։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Այնպէս չէ՞։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Կը կարծես։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Նոյնպէս եւ էս։

Լոռիքիւն։

ԷՍԹՐԱԿՈՆ (մտածոյ)։— Եւ մե՞նք։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Հրամէ՞։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ըսի՛. եւ մե՞նք։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեմ հասկնար։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ի՞նչ է մեր դէրը այս բոլորին մէջ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Մեր դէ՞րը։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Դեռ ժամանակ կայ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Մեր դէ՞րը։ Աղերսողներուն դէրը։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ա՞յդ աստիճան։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Պարտը կը փոփաքի արժեւորել իր պահանջները։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Մենք իրաւունքներ չունենք այլեւս։

Վլատիմիր կը խնդայ, Յախիւնի մտան կը դադարեցնէ յաճկարծ։ Նոյն խաղը, մուտք ժողովուրդ։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Դուն պիտի խնդարեցնէիր, եթէ ասիկա արտօնուած ըլլար ինձի։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Մենք կորսնցուցած ենք մեր իրաւունքները։
 ՎԼԱՏԻՄԻՐ (հատիկ-հատիկ)։— Մենք հրաժարած ենք անոնցմէ։

Լոռիքիւն։ Կը մնան անշարժ, նստելով բազուկները, գլխահակ, ծնրադիր։

ԷՍԹՐԱԿՈՆ (նստադուն)։— Կապուած չե՞նք։ (Լոռիքիւն)։ Հը՞։

ՎԼԱՏԻՄԻՐ (ծնոքը բարձրացնելով)։— Մտի՛կ ըրէ։

Անոնք մտիկ կ'ընեն, արտառնցօրէն քաղաքած։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ես բան չեմ ըսեր։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ըր՛սր՛սր՛դ։ (Մտիկ կ'ընեն։ Էսթրական կը կորսնցնէ հաւանաբանութիւնը եւ գրեթէ կ'իյնայ։ Կը կտռի վլատիմիրի բազուկին, որ կ'որհրայ։ Մտիկ կ'ընեն, իրարու կպած, աչք աչքի)։ Ոչ ալ էս։ (Հանդարտութեան հասաչանք։ Հանդարտութիւն։ Կը ետանամ մէկը միւսէն)։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Վախցուցիր դիմ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Կարծեցի, թէ ինքն է։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՞վ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Կոտոն։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Պա՛հ։ Հովը եղէգներուն մէջ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Կրնամ երդնուլ, որ պոռչտուքի ձայներ լսեցի։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Եւ ինչո՞ւ պիտի պոռար։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձիւնն վրայ։

Լոռիքիւն։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Երթանք։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ո՞ր։ (Լոռիքիւն)։ Այս գիշեր թերեւս իր մօտ քնանանք, տաք կամ չոր քաներով լեցուն փոքրով, յարդին վրայ։ Ատոր համար կ'արժէ սպասել։ Այնպէս չէ՞։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ոչ ամբողջ գիշերը։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Դեռ ցերեկ է։

Լոռիքիւն։

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ես անօթի եմ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ստեպղին մը կ'ուզե՞ս։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ուրիշ բան չկա՞յ։
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Պէտք է ունենամ քանի մը բողկ։
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ստեպղին մը տուր ինձի։ (Վլատիմիր կը խուզարկէ իր գրքապանակը, կը հանէ բողկ մը եւ կուտայ էսթրականին)։ Ենթահակալ եմ։ (Կը խածնէ գայն՝ մըմալով)։ Ասիկա բողկ է։

ՎԼԱՏԻՄԻՐ.— Օ՛հ, ներողութիւն, հար-
ձեցի, որ ստեպղին էր: (Դարձեալ
կը խուզարկէ գրպանները, հոն կը
գտնէ միմիայն բազկ): Աճէ՞քը բողկ
հն: (Միշտ կը խուզարկէ գրպաննե-
րը): Կերած պէտք է ըլլաւ վերջին
ստեպղինը: (Շարունակելով խու-
զարկութիւնը): Սպասէ, կայ: (Կը
հանէ վերջապէս ստեպղին մը եւ կու-
տայ իտալականին): Ահաւորիկ, սի-
րէիս: (Իտալական կը սրբէ գայն
քեւին վրայ եւ կը սկսի ռուտի):
Վերադարձուր ինծի բողկը: (Իտ-
ալական կը վերադարձնէ բողկը):
Դանդաղօրէն կեր: Ուրիշ չկայ:

ԷՍԹՐԱԿՈՆ (ծամելով).— Քեզի հար-
ցում մը բրի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ա՛հ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Պատասխանեցի՞ր ինծի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Լա՛ւ է ստեպղինդ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Քաղցր է:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Աւելի լաւ, աւելի լաւ:

(Լուսփիւն): Ի՞նչ կ'ուզէիք դիտնայ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Մոռայ: (Կը շարունակէ
ծամել): Ատիկա՛ է, որ կը ջղախա-
ցընէ գիւս: (Գոհունակութեամբ կը
նայի ստեպղինին, մտանքաւ ծայ-
րեքով օդին մէջ կը դարձնէ գայն):
Համեղ էր քու ստեպղինդ: (Կը ծծէ
ծայրամասը՝ մտածումներու մէջ
խորատոյց): Սպասէ, սկսայ յիշել:
(Պատառ մը կը խլէ):

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ուրե՛մն:

ԷՍԹՐԱԿՈՆ (լիցքուն քերթով, անակնկալ-
օրէն).— Մենք կապուած չե՞նք:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բան չեմ հասկնար:

ԷՍԹՐԱԿՈՆ (կը ծամէ, կուլ կու տայ).—
Հարց կու տամ, թէ կապուած ենք:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կապուած:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կապուած:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինչպէ՞ս կապուած:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ոտքերէն եւ ձեռքերէն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց որո՞ւ: Որո՞ւ կող-
մէ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Մարդուդ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կոտորի՞ն: Կապուած Կո-
տորի՞ն: Ի՞նչ մտածուծ: Երբե՛ք:

(Շար 1)

(Լուսփիւն): Ո՛չ տակաւին:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Անուշը Կոտե՛ է:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կարծեմ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Զարմանալի: (Տերեւի մը
ծայրով բերնէն կը համէ ստեպղինին
մնացեալ մասը եւ կը դարձնէ վա-
տիմիրի աչքերուն առջեւ), Հետա-
քըրքըական է, որքան ուտես՝ այն-
քան անհամ կը դառնայ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Իմ պարագայիս՝ հակա-
ռակը ճիշդ է:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Այսի՞նքն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Որքան աւելի շարունա-
կեմ, այնքան աւելի կը վարժուիմ
համին:

ԷՍԹՐԱԿՈՆ (երկար մտածումէ մը
ետէ).— Ա՛յդ է հակառակը:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Քառնուածքի հարց է:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Նկարագրի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ուր ոչինչ կարելի է ը-
նել:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Զուր է պայքարը:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մարդ կը մնայ այն՝ ինչ
որ է:


ԷՍԹՐԱԿՈՆ.— Զուր է ինքզինք չարչա-
րելը:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Խորքը չի փոխուիր:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ոչինչ կարելի է ընել:
(Ան կ'երկարէ ստեպղինին մնացեալ
մասը վատիմիրին): Կ'ուզե՞ս վեր-
ջացնել:

Շատ մօտէն կը լսուի ահարկու
գիշ մը: Իտալական գետին կը
ձգէ ստեպղինը: Կ'անշարժանաւ,
յետոյ, յանկարծօրէն, կը խու-
ժեն գէղի ճուլիսները: Իտալա-
կան կէս ճամբան կանգ կ'առնէ,
կը վերադառնայ, կը վերցնէ
ստեպղինը, կը քիտէ գրպանը,
կը վազէ դէպի վատիմիրը, որ
սպասէ իրեն, կրկին կանգ կ'առ-
նէ, կը վերադառնայ, կը վերցնէ
կօշիկը, ապա կը վազէ՝ միանա-
լու վատիմիրին: Վերահաս վը-
տանգէ մը ցնցուելով կը փակին
իրարու եւ կը սպասեն:

ՍԱՄՈՒԷԼ ՊԵՔԷՐ



ԱՆՀԵԹԵԹԻ ԹԱՏՐՈՆԻՆ ԳԼՈՒԽ-ԳՈՐԾՈՑԸ ՍՊԱՍԵԼՈՎ ԿՈՏՈՅԻՆ

Անհեթեթի գրականութիւնը իր որակումը ստացած է ենթադրականացա-
կան այն խոր բխումէն թերեւս, ըստ որում՝ մարդկային ամէնէն անակնկալ
ու անմիջական փորձառութիւնները կարելի չէ սահմանումի ենթարկել:

Արդարեւ, իրենց միջի գիտական տեսութիւններով բանաձեւել յան-
կարծաշաւս ու բոլորովին անպատակ աղէտ մը. մէկ բանաձեւ միայն կու-
տանք տուր՝ — անհեթեթ էր: Ու անհեթեթը անիմաստը չէ, անիմաստին
չէ, տխուրը չէ անպայման, ուրախը չէ, անբացատրելին չէ, աննկարագրե-
լին չէ, անհաւատալին՝ զա՛րձեալ թոյլ բացատրութիւն մըն է: Անհեթեթը
անհեթեթն է պարզապէս: Անսահմանելին:

Ու անհեթեթի գրականութիւնը ընտրած է իր ամենանուրբ որակումը,
որակումին ընդմէջէն իսկ հասկնալի ընծայելով իր անսահմանելի գոյու-
թիւնը:

Աւելին. անհեթեթը, այս պարագային՝ անհեթեթի գրականութիւնը,
չունենալով սահմանում՝ կը մերժէ նաեւ ենթարկուիլ պայմաններու, ու զայն
կարելի չէ սորվիլ, կարելի չէ սորվեցնել. զրոյը զայն կ'ապրի կամ չ'ապրի
եւ չի ստեղծագործեր արդէն, նմանապէս ընթերցողը զայն կ'ապրի կամ չ'ապ-
րի ու չի կարգար:

Առաջին հերթին իսկ ու ամենց տատամսումի կարելի է վերապահու-
թեամբ դիտել այն տեսակէտը, ըստ որում՝ անհեթեթի թատրոնը իմանալի
է միայն բարձր մշակոյթի տէր մարդոց, բառախաղերու եւ լեզուական ըսե-
լաձեւերու վարժ ընթերցողին, ու ասիկա պարզապէս անսր համար, որ ան-
հեթեթի գրականութեան ամէնէն հանրածանօթ կտորին («Սպասելով Կոտե-
յիւն») բեմադրութիւնը Սէն Գուէնթէն բանալին մէջ գտած է առաւել ջերմ
դունելութիւնը, քան Փարիզի եւ Լոնտոնի կարեւոր թատերաբեմերուն վրայ
անոր առաջին ներկայացումները:

Արդարեւ, «Սպասելով Կոտեյիւն» թատերախաղին պարագային աւելի
քան անմիջական է, նաեւ ըմբռնելի, հաղորդականութեան այս ուժգնութիւ-

նը պարզ ա՛յն պատճառով, որ անկա զասականացած կտորն է անհեթեթի թատրոնին, ու աւելորդ է ընդդէմը, որ դասական կտորները ամէնէն շատ տարածուած, ամէնէն շատ խօսուած գրութիւններն են աշխարհի: Բայց արդեօք իր ծնունդէն միայն վեց տարի ետք բանտի թատերասրահին մէջ ներկայացուող այդ թատերգութեան մասին կրնայի՞ն լսած ըլլալ քառորդ դարէ ի վեր հոն գտնուող բանտարկեալները: Ի հարկէ՝ ո՛չ: Ուրեմն վարժութենէ, լսովի զարգացումէ աւելի բան մը զանոնք կապած է այդ թատերգութեան. ներգդացական ուժ մը թերեւս, ու ասիկա այլ բան չէ, եթէ ոչ մարդկային խոր ու խորունկ փորձառութիւնը, այս պարագային՝ բանտի դառնութիւնը ու այդ դառնութեան հետ քայլ պահող ու վայրկեան առ վայրկեան աճող սպասումի անձկութիւնը, յոյսը, անյուսութիւնը ու, այս գոյավիճակներուն զուգահեռ՝ յարատեւութիւնը:

«Սպասելով Կոտոյիմ» թատերգութիւնը իր խորագրին իսկ առաջնորդութեամբ սպասումը ունի իբրեւ թեմա, աւելի հիշող պիտի ըլլար ըսել՝ ունի այն կարմիր թելը, որ կը ձգուի գիրքին ամբողջ ընթացքին, որովհետեւ անհեթեթի գրականութեան որեւէ կտոր կը մերժէ թեմայի գոյութիւնը, ինչպէս նաեւ գոյութիւնը գրականութեան աւանդական բնորոշումը ընող այլ յատկանիւններու:

Սպասումը, այս պարագային երկարաձգուող, յարաճուն կամ դէպի լրում ձգտող վիճակ չէ, այլ տեսակ մը կայուն գոյավիճակ, տեսակ մը մըթնորոշ, սպերիակերպ, այլեւ արարք, գործողութիւն, երբ հերոսները կ'ըսեն.

ՎԼԱՏԻՄԻՐ.— ...Ի՞նչ ընենք հիմա:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Սպասենք:

Այսինքն՝ սպասումը կեանքը ինքն իսկ է, գոյակցութիւնը «Սպասելով Կոտոյիմ» թատերգութեան հերոսներուն, եթէ բառին աւանդական իմաստով հերոս կայ անոր մէջ: Դիտուած է, որ անհեթեթի գրականութիւնը կը մերժէ նաեւ հերոսի գոյութիւնը, այսինքն՝ գոյութիւնը միտ ու ոտկոյ, ֆիզիքական ու բարոյական թանձրացեալ նկարագիր մասնող գործող անձերու:

Խաթակոնն ու Վլատիմիրը, ինչպէս նաեւ Լաքին ու Փոզդոն ներկայացուցիչներն են մարդկային ընկերութեան: Անոնք չեն պատկանիր ընկերային-տնտեսական որեւէ դասակարգի, այլ խորհրդանիւններն են մարդու խառնըւածքային եւ նկարագրային տարբերութիւնը մասնող տարբերուն:

Առաջին հերթին Խաթակոնն ու Վլատիմիրը զիրար մերժող, սակայն ճակատադրականօրէն իրարու ձգտող խառնուածքներ են, որոնք չեն կրնար իրենց գոյութիւնը շարունակել իրարմէ անկախ, ունին հասարակաց ճակատագիր մը՝ Կոտոն, այսինքն՝ անոր սպասումը, ինչպէս նաեւ աւանդութիւն մը, նախորդ օրուան, օրերու իրենց սպասումին վիճակը: Եւ որքան պերճախօս է զիրար լքելու խորհրդակցութեան անմիջապէս յաջորդող հետեւեալ խօսակցութիւնը երկուքին միջեւ.

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինքզինքս առանձին կը գգայի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Երազ մը տեսայ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մի՛ պատմեր:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կ'երագէի, որ...

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մի՛ ՊԱՏՄԵՐ:

ԷՍԹՐԱԿՈՆ (շարժում մը դէպի հորիզոնները).— Ատիկա կը բաւէ՞ քեզի: (Լուսթիւն): Ազնի գործ չէ՞ քրածող, Տիտի: Որո՞ւ կ'ուզես, որ պատմեմ իմ միգրանցներս, եթէ ոչ քեզի:

Միւս կողմէ՝ Փողոս-Լաքի զոյգը առաջին ակնարկով տարբեր կը թուի Վլատիմիր-Էսթրակոն զոյգէն, ա'յն իմաստով, որ առաջին պարագային, յանձին Փողոսի տէր մը դոյութիւն ունի, եւ անոր ծառայող ստրուկ մը՝ Լաքին, որ ամբողջութեամբ կախեալ է իր տիրոջէ։ Հոս է թերեւս, որ Պեթթ ակնարկութիւն մը կ'ընէ մարդկային ընկերութեան դասակարգային տարբերութիւններուն, սակայն այդ տարբերութիւնը շուտով պիտի խորտակուի, երբ յաջորդ արարին մէջ Փողոսն պիտի կուրնայ, իսկ Լաքին խուլ ու համր դառնայ, իրենց անկարութեան մէջ հաւասարութիւն մը կերտելով։

Այսուհանդերձ, աւելի խորագնին ուսումնասիրութիւն մը իթրակոն-Վլատիմիր եւ Լաքի-Փողոս զոյգերուն փոխարարութեանց կը թելադրէ մեզի, որ Լաքի-Փողոս զոյգը աւելի մեծցուած եւ չօշափելի պատկերացումն է առաջին զոյգին, որովհետեւ Վլատիմիրն ու Էսթրակոնը ներգործական եւ

կրաւորական խառնուածքներ ներկայացնող տիպարներ են, հետեւաբար առաջինը տրոն է, ուղղութիւն տուողը, յիշեցումներ կատարողը, իսկ երկրորդը՝ գործողը ու համակերպող ստրուկը։

Աւելի'ն. կարելի է ըսել, որ Վլատիմիրն ու Էսթրակոնը մէկ անձի երկու տարբեր կարողութիւնները ցոյցացնող միացումն է. Վլատիմիր չափող ու հաւասարակշռուած բանականութիւնն է, մինչդեռ Էսթրակոն անմիջական տպաւորութիւններու ենթակայ ջղային դրութիւնը, հակազդեցութիւններու շարքը։ Թատերգութեան մուտքը յստակօրէն կը պարզէ վերոյիշեալ պատկերացումը։

ԷՍԹՐԱԿՈՆ (նորէն տեղի տալով)։— Ըսելիք ոչինչ կայ։

ՎԼԱՏԻՄԻՐ (առաջանալով հաստատ, կտրուկ քայլերով, սրունքները լայն բացած)։— Կը սկսիմ հուստալ առար։ Երկարօրէն ընդդիմացած եմ այդ մտածումին, ինքս ինձ ըսելով, Վլատիմիր, խօսեմ եղիք, ամէն բան չես փորձած տակաւին։ Եւ ես վերսկսայ պայքարը...

Այլ փաստարկութիւն մըն է հետեւեալ խօսակցութիւնը։

ԷՍԹՐԱԿՈՆ։— Անմիջապէս կախեմք մեծ մեզ։

ՎԼԱՏԻՄԻՐ։— Ճիշդէ՞ մը։ (Անոնք կը մօտենան ծառին եւ կը դիտեն զայն)։ Ես պիտի չվստահեի առար։

ԷՍԹՐԱԿՈՆ։— Միշտ կարելի է փորձել։

ՎԼԱՏԻՄԻՐ։— Փորձէ։

ԷՍԹՐԱԿՈՆ։— Քեզմէ ետք։

ՎԼԱՏԻՄԻՐ։— Բայց ո՛չ, նախ քան։

ԷՍԹՐԱԿՈՆ։— Ինչո՞ւ ես։

ՎԼԱՏԻՄԻՐ։— Դուք ինձմէ աւելի թերեւ ես։

Իսկ վերոյիշեալ դժով աւելի քան յատկանշական է ա'յն երեւոյթը, որ Էսթրակոն առաջին արարի ամբողջ տեսողութեան, չորս անգամ կը մոռնայ, թէ ինչու կը դտնուին հոն, յիշեցումը կը կատարէ Վլատիմիր, իսկ երեք անգամ ալ կը մոռնայ Կոտոյի անունը, այսինքն՝ չի յիշեր իր սպասման առարկան, չի դիտեր, թէ ինչ կը սպասէ։

Բայց միթէ այդ մոռացկոտութիւնը պարծիք մը չէ՞ Պեթթի ձեռքին, աւելի զօրաւոր ձեռով իւրաքանչիւր ընթերցողի յիշեցումը կատարել տալու համար իր անձնական սպասումին, սահմանափակելու ընթերցողը, ստեղծելու մասնակցութեան վայելք, մեկնարանութիւններու այլազանութիւն, այլ

խօսքով՝ իրազործելու անհնթի գրականութեան մէկ տարբեր առաքելութիւնը:

Յուշերու, թելադրելու եւ եղբայրացութիւնը ընթերցողի տրամադրութիւններուն ձգելու այլ ազդակ մը կը հանդիսանայ Լաքիի մենախօսութիւնը: Բարեւէ աւելի՝ ժայնարկութիւններ, խօսքերէ աւելի՝ բացազանչութիւններ արձակող Լաքին մարդկային ենթագիտակցութիւնն է. աւելի շուտ՝ անդիտակից փառատենչութիւնը, որ կրնայ խօսիլ բաներ ու բան չըսել, բայց որ կրնայ նաեւ դպիշի քիչ մը ամէն բանի՝ — գրականութեան, մշակոյթին, մարդական գիտութիւններու, բնութեան, անհունութեան, առեղծուածին...

Վերջիւեւայ մենախօսութիւնը կեանքը, այլ խօսքով՝ ապաստանի դատարկ ժամանակամիջոցը լեցնող ինքնախաբէնութիւնն է, օրինակ, ուսման հետապնդումը, հարցերը փոխափայտելէն ընկալելու անիմատ պայքարը, որ վերջի վերջոյ պիտի յանդի համբացման, մահուան:

Արդէն ամբողջ կեանք մը զօրութեամբ կ'ապրին այդ երկու հերոսները, հաղիւ հարիւր վայրկեան լեցնող իրենց մտորումներով:

Արտաքին աշխարհի հետ բախում մը կայ հոն. Փողոց-Լաքի զոյգին երեւումը:

Վ.ԼԱՏԻՄԻՐ. — Եթէ ապաշխարած ըլլայիմք:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Իմշն՝ համար:

Վ.ԼԱՏԻՄԻՐ. — Օ՛ր... (Կը փնտռէ բառը): Հարկ չկայ մանրամասնութիւններու մէջ մխրճելու:

...

Վ.ԼԱՏԻՄԻՐ. — Սուրբ Գիրք կարդացա՞ծ ես:

Բանաստեղծականութեան-արուեստի-անհրաժեշտութեան կ'ազնարկուի:

Վ.ԼԱՏԻՄԻՐ. — Դուք պէտք է բանաստեղծ ըլլայիր:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ե՛մ: (Մտտնանքով իր ցնցոտիները): Յայտնի չէ՞ միթէ:

Տակաւին կայ սէքը.

«...Մենքայ ծովը տօգոյն կապոյտ էր: Հագիւ իրեն մայած՝ ծառու կը զգայի: Հոն է, որ պիտի եք-ամէ անցընելու մեր մեղալուստները, կ'ըսէի ես իմծի: Պիտի լռա՞նք: Նրջանիկ պիտի ըլլանք»:

Ու կայ նաեւ սեւը.

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ինչպէ՞ս կ'ըլլայ, եթէ մենք մեզ կախնմք:

Վ.ԼԱՏԻՄԻՐ. — Ատիկա պիտի ըլլար պրկուի միջոց մը:

ԷՍԹՐԱԿՈՆ. (ողեւորուած). — Պրկուի՞մք:

Վ.ԼԱՏԻՄԻՐ. — Անոր բոլոր հետեւեմքներով: Հո՛ն՝ ուր ատիկա կ'իյնայ՝ կը բուսնին մարդոյստ ծաղիկներ: Ատոր համար է, որ այդ ծաղիկները կը մշան, երբ փրցնես գանոնք: Ձէի՞ր գիտեր ատիկա:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ամմիջապէս կանխեմք մենք մեզ:

Իսկ այդ բոլորը կան այնքան թեթեւ նշումներով, կան ու չկան, այնպէս՝ ինչպէս կեանքը կայ ու չկայ, երբ մահամերձը կը փորձէ մտապատկերել զայն իր հոգեվարքի պայծառատենչութեամբ օժտուած մէկ վայրկեանին ու կը յիշէ մէկ հատիկ օր մը միայն՝ մեկնաբանուած այսպէս.

ՓՈԶՁՈ (յանկարծ ջղաջրգիւ). — Ձի՛ր քաւիր որքան քունաւորեցիր զիս քու ժամանակի պատմութիւններովդ: Անտանիք է: Ե՛րբ: Ե՛րբ: Օր մը, ատիկա բաւական չէ՞ բեզի համար, օր մը՝ նման արեւի այլ օրերու, օր մը ան համբաւ, օր մը ես կուրցայ, օր մը մենք պիտի խլանանք, օր մը մենք ծը-

նամք, օր մը պիտի մեռնինք: Նոյն օրը, նոյն վայրկեանը, այդքանը քառանկան չէ՝ քեզի համար: (Աւելի մեղմ): Ծնունդ կու տան գերեզմանի հոծիւններէն, լոյսը կը շագայ ատեն մը, ասպա՛ դարձեալ գիշեր կ'ըլլայ...

«Ապաստելով Կոտայի» Թատերգութեան երկու արարները արտաքին ու ներքին ո՛չ մէկ տարբերութիւն կը մատենեն, բացի երկրորդ արարին սկիզբը ծառին վրայ բողբոջած քանի մը կոկոններու երևումէն: Թատերագիրին բացատրութեամբ երկրորդ արարին պահը առաջինին յաջորդն օրն է, իսկ առաջին արարին ժամանակը երբեք չէ բնորոշուած. կեանքի օրերէն օր մըն է անիկա ու անոր յաջորդ օրը, տարի մը ու յաջորդ տարին, դար մը ու յաջորդ դարը, այլ խօսքով՝ դէպի անսահմանութիւն ձգտող շարունակականութիւնը — Թերեւս յիշեալ իմաստով Թելադրական եւ Լաբի խլանալն ու համբաւումը, իսկ Փողոյսի կուրհալը. այսինքն՝ ծերութեան ժամանակաշրջանը: Այլ ու այլ դժո՛վ աւելի յատկանշական է երկրորդ արարին մէջ Լաբիականի աւելի տիրապետող ներկայութիւնը Վրասիմիլի վրայ, երբ յարատեւ ձգտումով Թենէն կը պակսին բանականութեան ուժն ու կարողութիւնը, եւ անմիջական հակադրեցութիւնները կը վարեն կեանքի ընթացքը. այսպէս, մինչ առաջին արարի աւարտին խօսակցութիւնը տեղի կ'ունենայ հեռեւեալ ձևով.

ԷՍԹՐԱԿՈՆ. — Լաւ, երթա՞նք:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Այո, երթանք:

Երկրորդ արարին խօսքերը կը մնան նոյնը, իսկ խօսողներուն տեղը կը ւժլուծի.

ԷՍԹՐԱԿՈՆ. — Լաւ, երթա՞նք:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Այո, երթանք:

Եղբայրացեւէ առաջ, աւելորդ չէ անգամ մը եւս անդրադառնալ «Ապաստելով Կոտայի» Թատերգութեան ե՛ւ հեղինակին, ե՛ւ ընթերցողին համար անխուսափելի յաճախանքի վերածուող սպասումի ազդակին՝ Կոտային, որ բացակայ հերոսն է Թատերգութեան, այն գերբնական ուժը, որ կը վարէ բեմին վրայ կենդանացող կեանքի ամբողջ ընթացքը:

Կոտոն չի դար երբեք, բայց կը զրկէ պատգամաւոր մը, որ անձնաւորուած է մանուկի մը պատկերով:

Արդարեւ, պերճախօս պարագայ մը այդ մտնուելը, որովհետեւ աւանդական դարձած է յոյսն ու լաւատեսութիւնը անմեղ դիմակով մը ներկայացընելու պարագան, այլ միթէ՞ դէ՛շ բանի մը կը սպասէ՞ մարդ երբեւիցէ:

Այլ պարագայ մը, երբ Էսթրական Փողոն կը շփոթէ Կոտայի հետ: Արդեօ՞ք քիչ է թիւը անոնց, որոնք կը կարծեն զտած ըլլալ իրենց փնտռածը, երբ չեն ճանչնար զայն ու տակաւին շատ հեռու են ստկէ:

Ու ամէնէն ուշագրաւ կողմը այս Թատերգութեան այն է տակաւին, որ հերոսները յուսախաբութենէ յուսահատիլ չեն գիտեր — «Վարժաւոր եմ աւար» — երբ Կոտոն ամէն օր կրնայ գալ, ու երբ, մանաւանդ՝ Կոտոն չի դար եւ ամէն ընթերցող իր Կոտոն կ'երեւակայէ, իր կեանքի հանգրուաններուն Կոտոն, որ իր գալուստովն իսկ ծնունդ կու տայ իր յաջորդին, ու Կոտային սպասումը չ'աւարտիր...

Գ. Ճ.

Կարող եմ ասել, որ սեպտեմբերի 1-ին Մոսկվայի շատ քաղաքացիներ, զորք կը յիշէր: Ան տեսած էր կապիտալ, բայց խորհրդով լեցուն թոշակներ, որոնք համար կ'ընէին. Սկիսած էր զննել, բան կը հասկընային և կը կշտանային: Տեսած էր խառնուրդ, որ կըրէր իր խառնուրդը, կարծես Արարիչի զօրք կը թերէր: Տեսած էր Ն. Արարիչի, որ կարծես ժողովարէի նման, ժողովուրդի անհատներէ բերելով մէջ կը համարէր: Տեսած էր Վառլանդը, որ աշխարհի առաջ կը խօսէր, որ ուրիշներու մէջ խառնուրդը սկիզբէն ինքն մէկ ժամանակ մէջ կ'ընէր: Տեսած էր և շատ ուրիշներ, որոնք տարբեր պէս եկած ու անցած էին ևս բան մը թողած: Բայց բոլորի մէջ մէկը մոռնալէն էր մինչև իր հետեւի վերջին վայրկեանը: Այդ՝ Նորհատեանն էր, որ ընտանի էր դարձած:

ԹՈՒՐԷՆ

ՀՀայ յեղափոխականի մը յիշատակները,
Ա. Կատար, էջ 87)



ՀԱՄԱԶԱՍՊ ՆՈՐՀԱՏԵԱՆ

Նոյն Չարեանի հուշերուն գրառումներն արդարեւ չեն համար պատրաստուած էր մեր երիտասարդ աշխատակիցներէն Կարո Թովմանեանի հետազոտ յոգուածը, որ խորագրական կարգ մը դասաւորումներու բերումով վիճակուեցաւ ներկայ համարին:

Արձակագիր Նոյն Չարեանի երկու գլխաւոր գործերուն ներկայացումը ևս ապա գնահատանքը կը հաստատէ յոգուածը, որ, ինչպէս պիտի նկատէ ընթերցողը, պատրաստուած է խզճտօրէն, առարկայական տուեալներու հիմամբ և արժեւորման դուռը չափերով:

Կարօ Թովմանեանի որչա՞ր գրութիւնը շարունակօրէն կ'ընթացան էր, երբ հասաւ հիշարդէն ամառագին տարուան Նոյնի խորհրդի համարը, ուր, չափի զգացումին հետ զիջ աղերս ունեցող հայրենի ճանապարհներէն Ս. Աղաբաբեան տարագրած է Չարեանի գծերը: Երեւանի ուղղիչ տնիցն ազնաւորէին մասին վարկային նորայրութեան մտածանքն ունեւ յոգուած մը, զոր, ինչպէս արդէն նիթագրել կու տայ խորագիրը, անգույն յափազանցութիւններով խնդրիչ հոգ, կնքած է հետեւեալ պարբերութեամբ.

Երեւանի ուղղիչ տնիցն հայ գրականութեան քաջասիկ լուսաւոր էլիւրից մէկն է՝ իսկական ճարտարային քաղաքային, ուր քրքռում է Չարեանի լայնատարած մարդասիրութիւնը:

Սովորականէն ոչ շատ վեր ազնաւոր մը ևս աշխատեալ, ու ատկէ առաջ՝ հայ գրականութեան զանգուշական էջերից մէկը:

Երեւի յառաջիկային ալ տաղանդին պէս բան մըն է՝ յորդուն, գրեզուն...

Ինչ կը վերաբերի Երկրի Նայիրի գլխաւոր գործերին, ինչպէս նախօրէն է ամէնուն, պատմական անձնաւորութիւն մըն է ան, Կարօ նշանաւոր գործերիցէն Համազասկ Նորհատեան, որ Երկրի Նայիրիէն զուրկ ու անկախ վիճակի գոհաւորութեան՝ կ'ազդէ իր ուրիշ ճակատագրէն, համանման՝ իր օրերուն հայ կնաքէին կշտոյթ տուած միւս գէմօ գրուն...

Կ. Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ե Ա Ն

**ԵՂԻՉԷ ԶԱՐԵՆՑԻ «ԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ» ԵՒ
«ԵՐԵՒԱՆԻ ՈՒՂՂԻՉ ՏՆԻՑ» ԳՈՐԾԵՐԸ**

Եղիշէ Զարենցը մեր ազգային հպարտութիւններէն մէկն է: Անոր ազգանունը բազմաթիւ կողմերը դանդաղ, բայց հաստատ քայլերով կ'ազդուին դէպի պարծառացում ու բերեղացում:

Թր ողջութեան ու մահէն երեք տասնամեակ ետք իր գէժ կատարուած հաւածանքները, ինչպէս նաեւ իր բարձր ու հակասական նկարագիրը պատճառ հանդիսացած են, որ կարծիքներու հակադրական տարբերութիւն յառաջանայ անոր նկատմամբ: Ու հակառակ անոր, որ Զարենցի նուիրուած մենագրութիւններ, ուսումնասիրութիւններ ու բազմաթիւ գլոխաւորները զոյգութիւն ունին այսօր, Զարենցի կեանքն ու գրականութիւնը լիովին ու սպասելի կերպով չեն ուսումնասիրուած տակաւին: Այսուհանդերձ, չարենցագիտութիւնը մեծ տեղ կը գրաւէ մեր գրականութեան մէջ:

1920ական թուականները Եղիշէ Զարենցի գրական կեանքին մէջ կը յատկապէս

հարծութիւններով: «Երկիր Նայիրի»ն եւ չեչուին առաւելաբար արձակ ստեղծագործութիւնները: «Երեւանի Երկիր» հարծերը կը պատկանին այս շրջանին:

•••

Վէպ մը չէ «Երկիր Նայիրի»ն, ոչ ալ պոեմ մը, թէեւ վէպի եւ պոեմի կարգ մը հիմնական յատկանիշները զոյգութիւն ունին անոր մէջ: «Պոեմանման վէպ» մըն է, ինչպէս կը կոչէ զայն արդէն Զարենց: Յատակօրէն կարելի չէ գիտնալ, թէ ե՞րբ յղացուած է «Երկիր Նայիրի» երկին գաղափարը: Գիրքի յառաջաբանին մէջ Զարենց կ'ըսէ. «Վաղճւց, վաղճւց մտորում է իմ մէջ մի անհուն ցանկալիք: Վաղճւց ելք է փնտռում կուտակւած մի կարօտ» (Ե. հատոր, էջ 10): Սակայն յայտնի չէ, թէ ե՞րբ է այդ «վաղճուց»ը:

Ըստ Գուրգէն Մահարիի, վէպին գաղափարը յղացուած պէտք է որ ըլլայ 1917-1918-ին, ինչպէս կը վկայէ Ս. Աղաբաբեան իր «Եղիշէ Զարենց»(1) մենագրութեան առաջին հատորին մէջ: «1948-ին, ինձ հետ (Ս. Աղաբաբեանին հետ) անցած զրոյցում Գուրգէն Մահարին ասում էր, որ շորքաւանդի դաս-

ԾԱՆՈԹ.— Այս գրութեան համար օգտագործած եմ 1966-ին Յրեւանի մէջ Հայկական ՍՍՏՖ-ի տնօրէնութեան Սկզբնական հրատարակած Զարենցի «Երկիր Նայիրի»-ի հիմնարար հատորը, որում բովանդակութիւնը կը կազմեն «Երկիր Նայիրի»ն եւ «Երեւանի Երկիր» գործերը: Հատորին խմբագիրն է Ս. Ա. Աղաբաբեան, իսկ ամբողջ տեքստային տարբերութիւնները, ինչպէս նաեւ ծանօթագրութիւնները պատրաստած է Ա. Գ. Զաքարեան:

(1) Սարգիս Բ. Աղաբաբեան, «Եղիշէ Զարենց», Ա. հատոր, Երեւան, հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակութիւն, 1973, էջ 388-389:

տիարակ (1920ին Չարենցը կ'աշխատէր Երեւանի տրանսպորտին մէջ) Չարենցն իրեն այցի եկած պատմահետազոտիչ յայտնել էր, որ շուտով Գոգոյի «Մեռած հոգիներ» պոեմի ոմով ու շնչով վէպ է գրելու՝ նիւթ ունենալով հայ ժողովրդի գլխով անցած վերջին արեւադրոշմները: Մահաբու վկայութեամբ Չարենցն արդէն գրել էր վէպի որոշ հատուածներ եւ որքանոցային համադրումների ժամանակ բարձրաձայն արտասանում էր ենթադրեալ վէպի առաջին մտքը եզրափակող տառը, որը գգալիօրէն տարբեր է յայտնի վերջւածքից:

«Եսկ գրումս մուծ էր, չարկամ մաւախուղ...»

«Երկիր Նայիրի» վէպը գրուած է որոշ ընդհատումներով, 1921ի աշունէն մինչեւ 1924ի աճառը. չրջան մը, որ կը յատկանշուի քաղաքական մեծ տաղանայներով, որոնք իրենց անմիջական անդրադարձը ունեցան անտարակոյտ եզրէն Չարենցի հոգեկան ու մտային աշխարհներուն վրայ: Այսպէս. «Երկիր Նայիրի»ի առաջին մասը՝ «Քաղաքը եւ քնակիւններ», գրուած է 1921ի աշնան, Մոսկուայի մէջ: Առաջին անգամ հրատարակուած է Երեւանի «Նորք» հանդէսին տոալին գիրքին մէջ: Վէպին «Յառաջաբան»ը գրուած է 1921ի Հոկտեմբերին, դարձեալ Մոսկուայի մէջ, այսինքն՝ առաջին մասի աւարտէն անմիջապէս ետք: Երկրորդ մասը՝ «Վէպի Նայիրի», գրուած է 1922ի աշնան. աւարտած է 11 Հոկտեմբերին. առաջին անգամ հրատարակուած է 1923ին, «Նորք» հանդէսի երկրորդ գիրքին մէջ: Վէպի երրորդ մասը՝ «Երկիր Նայիրի» (որմէ նաեւ անուանը վէպին), գրուել սկսած է 1923ի Փետրուարի վերջերուն եւ աւարտած է 1924ի Օգոստոսին, Երեւանի մէջ: Այս մասը «Նորք» հանդէսի խմբագրութեան յանձնուած է 28 Օգոստոս 1924ին, բայց առաջին անգամ հրատարակուած է 1925ին, հանդէսի հինգերորդ եւ վեցերորդ գիրքերուն մէջ:

«Երկիր Նայիրի»ի թանգարանային օրինակի առաջին մասի վերջաւորու-

թեան, Չարենցի ձեռագիրով վէպի ծրագիրը հետեւեալ պատկերը կը ներկայացրէ. առաջին մաս՝ «Ենթադրական», երկրորդ մաս՝ «Պատերազմը», երրորդ եւ վերջին մաս՝ «Յեղափոխութիւնը Նայիրի երկրում», «Վէպիւղ»:

Առաջին երկու մասերու բովանդակութիւնը ըստ էութեան մնացած է նոյնը, սակայն երրորդ մասին առնչութեամբ, Չարենցը չէ նկարագրած յեղափոխութիւնը (Ա. Չաբարեան, «Մամուլագրութիւններ», էջ 512):

«Երկիր Նայիրի»ն առանձին հատորով հրատարակուած է Երեւան, 1926ին Պետհրատի կողմէ: Այստեղ, գիրքին սկիզբը աւելցած է «Երկրորդ հրատարակութեան առթիւ» բաժինը, որ գրուած է 1926ի Յունուարին, Երեւան: Այստեղ, Չարենց կը խօսի վէպին կարգ մը սխալներուն ու թերութիւններուն մասին, որոնք, ինչպէս կը վկայէ Հեղինակը, հետեւեալ են այն իրողութեան, որ վէպը գրուած է երկար ընդմիջումներով ու մաս առ մաս եւ անմիջապէս յանձնուած է տպագրութեան: Այս առնչութեամբ, պատմաբան Աշոտ Յովհաննիսեանի ուղղուած 13 Սեպտեմբեր 1924 թուակիր նամակին մէջ, Չարենց կը գրէ, ի միջի այլոց. «Երկրորդ հրատարակութեան համար ես հիմնովին կը որոնարեմ վէպս, կ'անեմ մի շարք կրճատումներ, կ'անւազանեմ մի շարք հատուածներ՝ աւելի աւտուցիկ դարձնելու աճառը բոլշիւկների արածները — մի խօսքով յոյս ունեմ, որ այդ շտկումներից յետոյ վէպս մի բանի կը նմանի» (Ա. Չաբարեան, «Մամուլագրութիւններ», էջ 514):

Պէտք է ըսել, որ այդ սրբագրութիւնները չկատարուեցան ո՛չ վէպի երկրորդ հրատարակութեան առին, ոչ ալ՝ անկէ ետք:

Նոյն տարին (1926) Մոսկուայի մէջ լոյս ընծայուեցաւ «Երկիր Նայիրի»ի ուղեւորէն հրատարակութիւնը՝ Յակոբ Նալատիանցի թարգմանութեամբ, եւ Մարիետա Շահինեանի խմբագրութեամբ ու յատկաբանով: Անկէ ետք, վէպը արժանացած է հայերէն, ռուսերէն ու վերացերէն հրատարակութիւններու:

✱

Նայիրին Կարսն է, Ձարենցի ծննդավայրը, իսկ «Ներկիր Նայիրի» Կարսի անցուղարձանն են Համաշխարհային Առաջին պատերազմի նախօրեակէն (1913) մինչեւ Կարսի առաջին անկումը՝ 1918ի Ապրիլ: Պատմականօրէն ճիշդ են վէպին թուականները եւ դէպքերու թւումը, բայց անոնց մեկնաբանութիւնն է, որ դուռ բացած է եւ կը բանայ ալլաղան տարակարծութեանց: Միայն է անշուշտ Մարիետա Շահինեանի «Ներկիր Նայիրի» վէպին տուած «Կարսեան էպոս», կամ՝ «Հայոց պատմութեան շրջագործային մեծ էպոսայի տարեգրութեան յաւաքում» բացատրութիւնները (Սեւակ Արղումեան, «Սովետական վէպ», Երևան, «Հայաստան» հրատարակչութիւն, 1967, էջ 162):

Առաջին բաժինին մէջ Ձարենց կը ներկայացնէ «Փաղաքը եւ բնակիչները» խաղաղ օրերուն: Կարսի տեղական հրաշալիքներուն՝ բերդին, Վարդանի կամուրջին եւ Առաքելոց եկեղեցւոյ կողքին, Ձարենց կը նկարագրէ նոր հրաշալիքները, ինչպէս երկաթուղադիմը, հինգ տարեկան շինութիւնը, հիւանդանոցը, ատենոյ, ուսանողան դպրոցը: Այս բաժինին մէջ՝ Ձարենց դարձեալ կը պատկերացնէ Կարսի բնակիչները, անոնց ուստեայ կեանքը, կամ՝ ինչպէս ինք կ'ըսէ, «կեցեալային կալուրիսը, ընդհանուր գոյնը միայն, եւ ա՛յ թէ մանրամասնը — այնպէս, ինչպէս տեսիլ եմ նայիրեան այդ քաղաքը եւ, ինչպէս պատկերացել է նա ինձ, այդ քաղաքը ճանաչողիս» (Ե. Հատոր, էջ 77):

Երրորդ բաժինը — «Գեպի Նայիրի» — կը ներկայացնէ Կարսը՝ Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքին: Այստեղ կը նկարագրուին պատերազմին բերած ետեւեւոր Կարսի մէջ, ժողովուրդին մտածողութիւնը եւ հոգեվիճակը, բանախօսութիւնները, կամաւորական դունդերու կազմութիւնը եւ դէպի ռազմադաշտ ուղղուելը, ռուս զինուորները:

Երրորդ բաժինը — «Ներկիր Նայիրի» — որ, ըստ Ձարենցի, վէպին կարեւորագոյն մասը կը կազմէ, կը ջանայ լուծել այն հարցադրումը, որ կատարուած էր «Յառաջադրանք»ին մէջ, «այսինքն»՝ «Ի՞նչ է Նայիրին»: Այսպէս է, որ կը նկարագրուի պատերազմին յառաջացուցած անորոշութիւնը, պարագլուխները, գլխաւոր հերոսին՝ Մազութի Համոյին տակնուվրայ յուժնը, «ճակատագրական անցքերը, ինչպէս նաեւ Կարսի անկումը, անոր դեպքերն ու անկարողութիւնն ու վախճանը»:

✱

«Ներկիր Նայիրի»ի քննարկած նիւթը, դեղատեստական ու զաղափարական անկիւնէն դիտուած, կը տեսնուի արդէն «Յառաջադրանք»ին եւ «Վերջաբան»ին մէջ: Ձարենց «Յառաջադրանք»ին մէջ կ'ըսէ, թէ օրուան որեւէ պահի ընթացքին, առօրեայ դրացումի կամ հաճոյքի ատեն, «արտիս խորքում, գոյի պէս զգոյշ, կամայական շարժում է նա» (Ե. Հատոր, էջ 10):

Վաղեմի բարեկամի կամ վաղեմի ծանօթի նման, մշուշոտ անցեալի մէջէն կը պատկերանայ անկախ իրեն, երկար կը նայի աչքերուն մէջ: «Ասում է՝ չե՞ս նայում: Մոռացել եմ, — ասում է նա: — Ու ստեղծ է Էլի, քաղաւմ է օրերի մշուշում — կորչում է օրերում» (Ե. Հատոր, էջ 10):

Անկա կը պատկերանայ իրեն շաղկապեալ տեսքով ու կերպարանաւ: «Կը պատկերանայ ընթերցումի ատեն, փայտ ծախողի՝ «ամենատարած» կամ գիւղացիի՝ աչքերուն մէջ, կամ իր հօր՝ Արգաթ աղայի «դեղնած, դեղնափայլ... մատերում»: Կարգ մը հարցադրումներ կատարելէ ետք, Ձարենց կ'ըսէ. «Ինչքա՞ն, ինչքա՞ն անգամ հարցնել եմ եւ ինձ, քէ ի՞նչ է, վերջապէս — Նայիրին: Դուցէ քիչ տարօրինակ թուայ այս հարցը, սիրելի ընթերցող: Բայց դա նշանակում է բնական, որքան այն հարցը, քէ ո՞վ եմք մենք, վերջապէս — նայիր»:

ցինքս: Ի՞նչ եմք մեմք եւ քուք եմք գրեմս: Ի՞նչ եմք եղել երեկ եւ ի՞նչ պիտի լինեմք վաղը» (Ե. Հատոր, էջ 12):

Եւ ամէն անգամ, որ նմանօրինակ հարցերու մասին կը ժողովէր Զարենց, ուրուականի պէս մէկը կ'ըսէ իրեն, ի միջի այլոց. «...Գուցէ տուա է Նայիրին, Նայիրին — չկայ... Գուցէ — յուշ է միայն, — ֆիկցիա, միֆ: — Ուղեղային մորմոք, սրտի հիւանդութիւն...» (Ե. Հատոր, էջ 12):

Զարենց կը յանձնարարէ, որ ընթերցողը ինք գտնէ Նայիրին: Այդպէս է, որ «Յառաջաբան» կ'աւարտի «Մնացածը — վէպում» բառերով: «Վերջաբան»-ին մէջ Զարենց կը վերադառնայ իր նախկին հարցադրումին. «Ի՞նչ է Նայիրին. ո՞րն է Նայիրին»: Զարենց այստեղ ալ պատասխան չի տար: Արդէն «Յառաջաբան»-ին մէջ կ'ըսէր, թէ ընթերցողը իր սիրտին կամ հոգիին մէջ պէտք է որ գտնէ եւ սիրէ Նայիրին: Անշուշտ գեղարուեստական ինչպէս նաեւ գաղափարական մտահոգութիւններով Զարենց ուղղակիօրէն պատասխան չէ տուած այս հարցումին: Գեղարուեստական իմաստով լատ է, որ պատասխան չէ տուած ան իր իսկ հարցումին: Այս երեւոյթը պէտք չէ բացատրել վէպին երգիծական բնոյթով կամ մտայնացման անտարաթեւմբ, ինչպէս կ'ըսէ Յակոբ Մալախեան՝ նկատի ունենալով վէպին առնչութեամբ Զարենցին կատարելիք փոփոխութիւնները՝ «աւելի ուռուցիկ դարձնելու համար բոլորեցինք իր արածները»: Մալախեան կ'եզրակացնէ. «Սակայն իր այլ բազմաթիւ ստեղծագործութիւններում հանձնարեղ գրողը տուեց «...Ի՞նչ է, վերջապէս Նայիրին» հարցի սպառիչ պատասխանը, նկատի ունենալով թէ՛ Նայիրի երկրի անցեալը, թէ՛ նրա ներկայումս ապագան» (Յակոբ Մալախեան, «Ժամանակիդ շուշը դարձիր», 1967, էջ 111):

Այո՛, Զարենց աւելի ուշ տուաւ այդ հարցումին սպառիչ պատասխանը, սակայն իր իսկ կեանքին գնով...

✱

«Հետաքրքիր քաղաք է Ուայրիքում քաղաքը եւ քաղաք խորհրդաւոր ու հետաքրքիր դէմքեր ու պատմութիւններ ունի...» (Ե. Հատոր, էջ 45):

«Երկիր Նայիրին առաւելաբար կառուցուած է նկարագրական ու պատմական հիմքերու վրայ: Յատկանշական են Զարենցի տեղական ինչպէս նաեւ նոր հրաշալիքներու նկարագրութիւնները: «Քաղաքի արեւմտեան ծայրում, վերը, ժայռակուռ, դեղին բլուրի վրայ — խիստ, խոճոռ, որպէս արեւելեան քարէ մի բռնակալ — քաղմել է բերդը» (Ե. Հատոր, էջ 18):

Զարենց կ'ըսէ, թէ այդ բերդը չինքնուրու տեսն, Նայիրի վարպետները հաւկիթի սպիտակուց դորձածած են շաղախի փոխարէն. այս է պատճառը, որ անիկա անխորտակելի է: «Անտիկ է այդ բերդը — ամէնքն այդ գիտեն, — եւ զանազանութիւնն է, մեմք, ստոր, Ուայրիքում դաւաճանութիւնն է այդ բերդը յանձնել եկուոր սրիկաներին» (Ե. Հատոր, էջ 18):

Եթէ պատերազմ ըլլայ, ուսմբեր պիտի տեղան այդ բերդէն. այնտեղէն պիտի իջնէ հրկաթէ բռունցք մը թշուաժի գլխուն վրայ: Թէեւ Նայիրի բնակիչները չինտն են այդ բերդը, բայց, դժբախտաբար, անիկա չի գտնուիր անոնց հակակշռին տակ: «Օրը կը գայ — եւ մրումք (բերդը գրաւող եկուորները) կը գնան: Եւ ճորից, քերդի ամառիկ ամբարձրութիւններից, որպէս նրկաքեայ անեղ մի սպառնալիք — կ'իջնէ, կը յառնէ ահաւաստ, Ուայրիքում ոգին, կորովը, ուժը հազարամեայ — Ուայրիքում աշխարհի... Ու կը վառուի ճորից ամառ խնդուքեամբ, կը ժպտայ խնդագին երկիրը հազարամեայ — երկիրը Նայիրի...» (Ե. Հատոր, էջ 19):

Վարպանի կամուրջը, ըստ Նայիրեան միամիտ բնակիչին, չինուած է Վարպան Մամիկոնեանի կողմէ, որովհետեւ ինչ որ «մեծ է ու գարնամալի, ինչ որ

նայիրեան է ու յաղթական», կը վերա-
գրուի վարդան զօրավարին: Նայիրի
բնակիչներուն համար խորհրդաւոր հը-
րաշք մըն է վարդանի կամուրջը, ահե-
լի գեղեցկութիւն մը: Անիկա կանգնած է
Վիհերու վրայ, «որոնց մէջ ջուրն ան-
գամ վարամուտ է լցուի»: Այնտեղ կ'ապ-
րին ջրային գահաններ, պառաններ, մար-
դազուլիս գոմէշներ, ջրային հսկայ օձ
մը, «որ կամուրջի «տէրն» է, կամուրջի
բարի օգին», եւ երկու ջրահարս: «Անա-
թէ ինչու օչ մի քաղաքացի չի համար-
ձակուում լողաճալ կամուրջի մօտերը»
(Ե. Հատոր, էջ 21):

«Առաջիկայ եկեղեցին ամենամեծ ու
ամենամուխրական հրաշալիքն է, զարգն
է, զարմամբն է այդ հմամնայ քաղաքի
— եւ բացի նրանից չկայ մի ուրիշ աւելի
հմայիչ զարմամբ քաղաքացիների հա-
մար» (Ե. Հատոր, էջ 22):

Ինչ կարեւորութիւն որ կ'ընծայէ հա-
ղին, սիրտը, ուղեղը կամ աչքը մար-
դուն համար, նոյնն է պարագան Առա-
քեցեց եկեղեցին նայիրցիներուն համար: Թէեւ
պարզ, բայց քաղմահրաշ է անի-
կա:

Տեղական այս երեք հրաշալիքներէն
ետք, Չարենց կը նկարագրէ նաեւ Նոր
հրաշալիքներ, որոնք, իրենց կարգին,
մեծ ազդեցութիւն ձգած են նայիրցիներ-
ուն վրայ: Անոնցմէ մէկն է երկաթու-
ղագիծը, — ամենամեծ նորութիւնը, —
որ նայիրեան չէ եւ Յայնիսկ անընտել: Երկաթուղագիծի քաղման օրը խրախ-
ճանք տեղի ունեցած է. եղած են մար-
դիկ, որ զարմանքին ու հիացմունքին
պատճառաւ կորսնցուցած են իրենց խօ-
սելու կարողութիւնը: Ու թէեւ երկու
տասնեակ տարիներէ աւելի կը գործէ ա-
նիկա, բայց տակաւին կը զտնուին մար-
դիկ, որ ո՛չ միայն չեն ճամբորդած կամ
փոխադրուած անով, այլեւ անոր կը նա-
յին շարժուի մի գալստանալի հրաշքի:

Երկրորդ նորութիւնը, որ զարձեւալ
նայիրեան չէ, «հինգյարկանի այն հրա-
կայ շինութիւնն է, որ կանգնած է քա-
ղաքի մէջտեղում, որպէս անուի մի վե-
հութիւն, քարէ ակնածամբ» (Ե. Հատոր,
էջ 32):

Այնտեղ հաստատուած են գաւա-
ռապետը, ոստիկանապետը, զօրակոչա-
յին գաւառական ատենալը, փոստ-հեռա-
ղիքը, պետական գանձարանը: Նաեւ՝
ճառարան յարկում, միջանցքի ամենա-
ծայրը, կարելի է ասել՝ շէնքի ամենա-
յետնկան անկիւնում կայ մի փոքրիկ
սենեակ... Աստուած չանի, ընթերցող,
այդ սենեակն ընկնես. որ ընկար — Ե-
րաստուելիք չկայ» (Ե. Հատոր, էջ 32):

Քաղաքացիները «մութ տեղ» կը կո-
չեն այդ սենեակը, թէեւ անիկա ունի
երկու պատուհան եւ երեք ելեկտրական
լամպ: «Եւ նա չէ՞ արդեօք պատնալը,
որ այդ հինգյարկանի տունը զարմնի է
մի ամենակարգ կենտրոն, կամ, աւելի
լաւ է ասել՝ առանցք, որի շուրջն են
գտնուած քաղաքն ու գաւառը — եւ չեն
կարող չզառնալ» (Ե. Հատոր, էջ 33):

Բայց ասկէ աւելի զօրաւոր կեդրոն
մը կայ, «Հնկերութեան» կեդրոնը: Չա-
րենց հեղեանքով կը խօսի անոր մասին.
որովհետեւ անիկա Դաշնակցութեան
կեդրոնն է: «Նայնիսկ երկխաները գի-
տեն, որ «Երկերութիւնը» կենտրոն է, մի
աւելի ամենակարգ եւ անուի կենտ-
րոն, որ սուրբամբն, շտեմ եւ կայսեր
պիտի տապալէ — այդ ամբողջ, աւելի լաւ
է ասել՝ մարտնչական կամ այդ «Կենտ-
րոնը»» (Ե. Հատոր էջ 34):

Այս նոր ուղղութեամբ շարունա-
կելով հեղեանքը, Չարենց կ'ըսէ, թէ
մինչդեռ հինգյարկանի կեդրոնը կա-
ռուցուած է վախի, բռնութեան, արեան
ու թիւրիմացութեան վրայ, «Երկերու-
թեան» «կենտրոնը քարէ՛ է, գրանիտէ՛
կառուցուած գիտական սոցիալիզմի ան-
յողազող հիմնմանի վրայ: — Ուրեմն
երկու անգամ երկու հաւասար է չարսի
պէս պարզ պէտք է լինի, որ ոչինչ է
հինգյարկանի կենտրոնը, իսկ «Երկերու-
թիւնը» — փաստ, անողոք նշմարու-
թիւն — մերկ նշմարութիւն» (Ե. Հա-
տոր, էջ 34-35):

Նայիրի հրաշալիքներուն մաս կը
կազմեն նաեւ հիւանդանոցը, ատենալ եւ
սէնական դպրոցը:

Քաղաքը ունի նաեւ իր անպաշտօն

կեդրոնը: Այսպէս, եկեղեցական մոմա-
վաճառքի խանութը, որ շաբաթը հազիւ
մէկ կամ երկու յաճախորդ կը մտնէ մոմ
դնելու նպատակով: Բայց այս խանութը
կարելորդ կեդրոն մը կը հանդիսանայ,
որ կը քննարկուին եկեղեցական ու ծը-
խական դպրոցներու վերաբերեալ բոլոր
խնդիրները: Անիկա կը խաղայ քաղաքա-
կան ակումբի մը դերը: Պատերազմի ա-
տեն, հո՛ւ է որ տեղի կ'ունենայ կամա-
ւորներու արձանագրութիւնը:

Նայիրիի երկրորդ անպաշտօն կեդ-
րոնը կը հանդիսանայ «Լոյս» նաւթար-
դիւնաբերական ընկերութեան աշտեղի
ներկայացուցիչին գրասենեակը, որ «մի
խկական քաղաքական ակումբ» է, «նա-
յիրեան գործերի կենտրոն»:

Բազմաթիւ են «Երկիր Նայիրի»ի
գլխաւոր եւ երկրորդական հերոսները,
թէեւ Պարենց կ'ըսէ. «Այս առթիւ նս,
մի անգամ ընդմիջտ, հարկադրուած եմ
ստել, որ սայն իմ այս վէպում չկայ եւ
երեսի չի էլ լինելու եւ ո՛չ մի «հերոս»
— եւ այս տխուր հանգամանքում, կար-
ծում եմ, ո՛չ թէ նս եմ մեղաւոր, այլ՝
նայիրեան այդ քաղաքը, որովհետեւ —
ի՞նչ, ի՞նչ «հերոսներ» կարող են դուրս
գալ, ասեմք, Գեներալ Ալեքից, կամ Հա-
մօ Համբարձումովիչից — Մազուլի Հա-
մօյից... Գուցէ Մեռելի Եմօ՛քը յարմար
«հերոս» լինէր, կամ Կիստաւորի Սիմօ՛-
նը, կամ, վերջապէս — Տիեֆոն Սե-
քօ՛ն...» (Ե. հատոր, էջ 80):

Վէպին գլխաւոր առանցքը կը կազ-
մէ, որով նաեւ գլխաւոր հերոսն է Համօ
Ասատուրովը, կամ Համօ Համբարձում-
ովիչը, որ «Լոյս» նաւթարդիւնաբերական
ընկերութեան ներկայացուցիչն է: «Մա-
զուլի Համօ» կը կոչէին դինք քաղաքին
մէջ՝ իր գործին բերումով: Մազուլի
Համօն կեդրոնական անձնաւորութիւնն
էր Նայիրիին: Ազգային ու հասարակա-
կան խնդիրները այդ քաղաքին մէջ իրենց
լուծումին չեն հասնիր՝ առանց իր կար-
ծիքին: «Երկիր Նայիրի»ի ողջ տարած-
քին վրայ Մազուլի Համօն հեղեանքի եւ

ծաղրանքի կ'ենթարկուի Պարենցի կող-
մէ: «Հրաշ? Էր, զարմանալի զարմանք
այդ Համօ Համբարձումովիչը — Մազու-
լի Համօ...» (Ե. հատոր, էջ 87):

Յեղացի եւ գործունեայ մարդ մըն էր
առ, որ ունէր իր սեփական տունը եւ քիչ
մըն ալ հող: Այս բոլորը թուելէ ետք,
Պարենց կ'ըսէ. «Մազուլի Համօն անդամ
է... «Ընկերութեան» — եւ այն էլ՝ ազ-
գեցիկ անդամ... ԶԷ՛ք հաւատում. —
բայց եւ այդ ամենահաստատ աղբիւրից
գիտեմ: Յայտնի է եւ այն, որ Օտ, Մա-
զուլի Համօն, արտասահմանից «Դո-
շակ» է ստանում եւ գաղտնի կերպով տա-
րածում ժողովրդի ստորին խաւերում»
(Ե. հատոր, էջ 48-49):

Իրօք, Մազուլի Համօն դաշնակցա-
կան էր: Համապատասխանաբար նաեւ
որ տարիներ շարունակ գլխաւոր
գործիչներէն էր Կարօի շրջանին մէջ:
Մազուլի Համօն իր գրասենեակը վերա-
ծած էր անպաշտօն ակումբի մը: Իր տի-
պարին ճամբով Պարենց հեղեանքի կ'են-
թարկէ Դաշնակցութիւնը: Վէպին մէջ
բազում անգամներ կը հանդիպինք այս-
պիսի բաներու եւ դադարեցնելու.
«Սարգսնումն ուղեղ», «կեդրոնամարդ»,
«կեդրոնաւղեղասարդ», «համեմատեա-
լայն ուղեղ», «մազուլի համայնականու-
թիւն», «տիեզերական ուղեղաստեղծ»,
եւ այլն: Այս հեղեանքը իր դադարեցնել-
տին կը հասնի Համաշխարհային Առաջին
պատերազմի ընթացքին, երբ Նայիրիի
մէջ տեղի կ'ունենան քաղաքական ու դի-
ւորական գործողութիւնները: «Ի՞նչ պի-
տի անէր, ասացէք խնդրեմ, նայիրեան
այդ քաղաքը, եթէ չլինէր Համօ Համ-
բարձումովիչը, այդ «Լոյս»ի կառավա-
րիչ Մազուլի Համօն: Կը կարէր, ու-
նաստակ կը լինէր՝ կը քաղուէր սոցիալա-
քեան անսահման խաւարում: Ամէն տեղ
նա՛ էր, ամէն դժուարին դէպքում նա՛
պիտի, միայն նա՛, սայլը ցեխից հա-
նէր» (Ե. հատոր, էջ 91):

Կամ՝ «ամէնքը եւ ամէն ինչ նայիր-
եան այդ քաղաքում ոչ այլ ինչ էր գու-
ցէ, եթէ ոչ Մազուլի Համօյի տիեզերա-
պարփակ ուղեղի եղի արտացոլումը, ու-

զեղային մորմօքը միայն — ուզեղային խաղը» (Ե. Հատոր, էջ 181)։

Իսկ այդ զարմանալի ուղեղը կանգնած էր «հեղեղ ինքն իր վրայ... ուրիշ ոչինչ» (Ե. Հատոր, էջ 185)։

Թշնամի պոքերուն դիմաց նայելին փրկելու Մազութի Համոյին բուր ջանքերը ապարդիւն կ'անցնէին։ Այստեղ ալ հեղեղներ կ'առնուէին Մազութի Համոյի ուղեղը։ Այսպէս. «Կար, գոյութիւն ունէր եւ սնում էր — հեղեղ ինքն իր վրայ — ահա՛ թէ ինչ։ Կար, գոյութիւն ունէր եւ աշխատում էր, անխնայ ու մշտնջենական, ինչպէս ինքը բնութիւնը, կամ, աւելի լաւ է ասել՝ որպէս մի իսկական «պերպետուում-մորիէ»» (Ե. Հատոր, էջ 185)։

Կարսի գրաւումէն անմիջապէս ետք Մազութի Համոն կը կախուի այն երեք հեռագրասիւններէն մէկուն վրայ, որ պատրաստուած էր պատերազմէն դառալի չեղորէն կախելու համար։ Աւելին. (հեղեղները շարունակելով) — տախտակ մը կը փակցնեն հեռագրասիւնին մէջտեղը, որուն վրայ գրուած է Մ. Հ. Ա. Ն. տառերը, որ կը նշանակեն Մազութի Համո՝ Արալի նայիրի. այսինքն՝ Յիսուսի օրհնակով՝ «Յիսուս նազովրեցի թագաւոր հրէից»։ Իսկ «վերաբանէին մէջ Զարեհ կ'աղնարկէ դարձեալ Մազութի Համոյին, ըսելով. «Վաղուց յետէ մեր գրականութեան, մա՛նաւանդ բանաստեղծութեան մէջ չկայ մի բառ, որ աւելի հայտնուէր, քան «նայիրի» գոյականը. բայց, չնայած դրան, մինչեւ իմ առջի այս պոեմումս վէպը, մեր լեզուագիտութեան ամուլ անդաստանում չէր նարում եւ ո՛չ մի Մանուկ Աբեղեան, որ գրադուէր այդ չամիչի պէտ գործածական դարձած բառի քերականական կազմութեամբ, — եւ ես, Հաջու տնրմիւնով ասած՝ «քամի կուլ տըւող» նուաստս էի, որ առաջին անգամ գրադուեցի այդ քերականական հարցով եւ գլխի ընկայ, որ «նայիրի» բառը ոչ թէ գոյական է, այլ — եթէ միայն կարելի է քերականութեան մէջ այսպէս ասել — «մազութի համայնական»...» (Ե. Հատոր, էջ 272)։

Մազութի Համոյի հակադրուող տիրարներէն մէկն է նշան Մարանկոզեանը կամ՝ Մարանկոզ Նշանը։ Այս մարդը ուղեղը ըլլալ «նայիրեան գործերի կենտրոն»։ Մազութի Համոյի փոխարէն։ Իր խանութին մէջ կը ծախէր որսորդական ապրանքներ։ Ակզնական շրջանին, իր խանութը հաւաքատեղի մը դարձաւ, ուր շուայորէն կը հերթափոխէր իր մօտ աշակերտները։ «Մի ամիս միայն Մարանկոզ Նշանի տնտեսական կարողացաւ դիմանալ գործիչ-ընկերների բարձրագոյն գրեթէ մի ամիս միայն նրա խղճուկ խանութը կարողացաւ ճանաչել իր թանկութիւնը» (Ե. Հատոր, էջ 51)։

Անկէ ետք, Մարանկոզ Նշանը ստիպւեցաւ ծախել իր խանութը եւ անցաւ Պուլկոթիա՝ նուիրուելու համար յեղափոխական գործին։ «Նայտառակ փախուտ էր դա իրօք եւ ուրիշ ոչինչ, խայտառակ փախուտ ու չեզոքացում, որ հետեւանք էր, ինչպէս գիտեմք, Մազութի Համոյի հզօր ազդեցութեան, որից նա, այդ խղճուկ վանեցիմ, ճգնում էր խել «նայիրեան գործերի զեկականութեան» առաջնութիւնը» (Ե. Հատոր, էջ 159-160)։

Մարանկոզ Նշանի փախուտէն ետք, անոր խանութը ստանձնեց պէթլիսցի Մանուկը։ Վերջինս հիմնեց «Տիր» հիմնադրութիւնը, որ վերջին նորութիւնն էր նայիրիին, ամերիկեան նորութիւն մը։ Ամէն կերպիւ, այնտեղ կը հասցուէին պատկառելի դիւզապիներ, որոնք կը զբաղէին «հոգեւոր» բախտախաղով, իսկ գիւերները ծխական ուսուցիչներէն ու մանք, կարգ մը նայիրիներ ու ոչալական դպրոցի բարձր դասարանի աշակերտներէն շատերը կը հաւաքուէին դպրոցի թղթախաղի։ Նշան Մարանկոզեանը, համաշխարհային պատերազմի ընթացքին, որ մը, անպատկառելի կերպով կը վերադառնայ «գիւնուած ու փափախուոր...»։ Հետո՛ էլ երեքը-չորսը՝ երեքը, չորսը էլ իրաւ, Մարանկոզ Նշանի մասն, գիւնուած ու փափախուոր» (Ե. Հատոր, էջ 160)։

Անոնց մէջ կը գտնուէր նաեւ Թափառականը: Իր այս վիճակին մէջ, Նըշան Մարանկոզեան զգառնութեան եւ անակնկալի տուտու մը կը հանգիւպի պ. Մարութէ Դրաստամատեանին եւ Կարօ Դարայեանին:

Պ. Մարութէն երեսուն-երեսուներկու տարեկան ծանօթ ուսուցիչ մըն էր ծխական դպրոցին մէջ: Կ'աւանդէր թուարանութիւն եւ ուսաց լեզու: Մեծածխա եւրոպացի մըն էր աւել: Աւարած էր տեղական քաղաքային դպրոցը եւ երկու-երեք ամիս եղած էր Պերլին: Այսուհանդերձ, այս հանգամանքը մութ է, ըստ Ջորճնցի, որ վէպին «Երկրորդ հրատարակութեան ամբիւս» գրութեան մէջ կ'ականարկէ կարգ մը սխալներու, որոնց կարգին նաեւ պ. Մարութէին վերագրուած սխալ տեղեկութիւնները: «Մեզ այնպէս էլ չյայտնուեց նշան, թէ եղի՞ր է նա արդեօք Բեռլինում, ինչպէս ինքն է տւում, եւ, եթէ այո՞ իրերի ի՞նչ երջանիկ թերմումով է, որ նա կարողացել էր մայրիքեան այդ — քռոց մերթի ինձ ասել — բաւականին յետամնաց քաղաքից քռոցիկ — պատկերաւոր ասած — այդքան հեռու» (Ե. հատոր, էջ 8):

Պ. Մարութէն հետամուտ էր նորին: Արամարհանք ունէր հինին հանդէպ: «Մեծ ինքնասիրութիւն ունէր պ. Մարութէն եւ սիրում էր ամէն ինչում զգրման» (Ե. հատոր, էջ 95):

Համալսարանային Առաջին պատե-րազմի ընթացքին, պ. Մարութէն կ'ընդ-վրդի Մարութի Համոյին եւ իր գլխաւորած «Ընկերութեան» դէմ: Կը նկատուէր աւ իրերէ «Բամի կուլ տուող» մը: Հաւածանքը պ. Մարութէին տուած էր Դրաստամատեան մականունը՝ փոխան Դրաստամատեանի: Դուրս կը գրուի ուսուցչական պաշտօնէն: Իսկ իր գործա-կից ընկերոջ՝ Կարօ Դարայեանի սպա-նութենէն ետք, կը հեռանայ քաղաքէն:

Այսու Յովհաննիսեանին ուղղուած 13 Սեպտեմբեր 1924 թուակերի նամակին մէջ՝ Ջորճնցի, ի միջի այլոց, կը գրէ. «Ապա ես կ'ուզեի մի-երկու յօսք ասել այն ուղղումներին մասին, որ անկու եմ ընտ-

յիրիումս. առաջին եւ ամենախոշոր շնու-կումը — դա պ. Մարութէի պատմա-թիւնն է. վէպի իմ մտումն նա գաւառա-ցի հարեցող վարժապետ է, ծնունդ է երեխաներին, եւայլն, II մասում — Դաշ-նակցութեան անարկիւնցիկ հակառակորդ, III մաս — բոլշեւիկ... Այս համաձայնեմք, ինչպէս եւ մի շարք այլ թիրիմացու-թիւններ, առաջ եմ եկել նրանից, որ ես վէպը գրել եմ երկար ընդմիջումներով եւ անմիջապէս մաս-մաս յանձնել տպագ-րութեան» (Ա. Ջորճեան, «Մամբա-գրութիւններ», էջ 514):

Կարօ Դարայեանը, եօթ-ութ տարե-կան հասակէն զրկուած էր Մոսկուայի Լազարեան հեմարանը, իր մօրեղբոր՝ Արամ Անտոնիւի կողմէ: Վերջինը տեսուչն էր ոչնչական գաղութին: Իր աշակերտնե-րը «Բոլշեւիկ» կ'անուանէին զինք՝ անոր փորին պատկառելի մեծութեան պատ-ճառով: Կարօ Դարայեանը ուսումը տա-ւարտելէն ետք, կը մնայ Բաքու, հակա-սակ անոր, որ Արամ Անտոնիւի մեծ ջա-նքը կը թափէր Կարօ բերելու զինք: Արամ Անտոնիւի զգանկաւորութիւն էր իր աշ-նուութեան պատուը մօտիկից մտնակել» (Ե. հատոր, էջ 122):

Ապարդիւն կ'անցնին անոր բոլոր ջանքերը: Արամ Անտոնիւի համոզուած էր, որ իր մօրեղբոր որդին ա՛լ պիտի չվերադառնար Նայիրի: Պատերազմին սկիզբը, Կարսէն քան տարւած քաղա-կայութենէն ետք, «մի գնդացիկ առաւօտ եկաւ Կարօ Դարայեանը այդ քաղաքը եւ կառքը կանգնեցուց... ճիշդ պ. Մարութէի բնակարանին առաջ: Այս վերջին համաձայնեմքը խիստ զարմանալի թուաց ոչ այնքան քաղաքացիներին, որքան իրաւ — Արամ Անտոնիւի աչքին» (Ե. հատոր, էջ 123):

Անկէ՛ կը սկսի նաեւ գործակցութիւ-նը պ. Մարութէին եւ Կարօ Դարայեանին միջեւ: Թէեւ վերջինս նախապէս չէր ճանչնար պ. Մարութէին: Իր գործակից ընկերոջ պէս, իր մականունն ալ փոխ-ւած է Փարայեանի: Իր կարգին, դէմ կ'արտայայտուի Մարութի Համոյին: Իր օտարադուրեւները կը տեսնուի, ուրիշնե-

բու կողքին, յայտարարութեան մը տակ, որ ուղղուած էր Մարտի 2-ին ղեկավարին՝ Ստեփան Կարապետի կողմէ։

Ընկ. Թափառականը Նշան Մարանկոյանին հետ Պուլկարիայէն եկողներէն մէկն է։ Հեղինակը կը ներկայացուի այս տիպարն ալ Չարենցի կողմէ։ Այսպէս. Նշան Մարանկոյանը այնպիսի շեշտով կը ներկայացնէ զայն ալ. Մարանկոյան եւ Կարա Պարսիսանին (այս ալ մեր ընկ. Թափառականը), «որ մոյմիսկ Կարա Պարսիսանը, որ չէր մտնում ա՛յ միայն դրանց, այլև իրան՝ Մարանկոյան Նշանի տիպարը — այժմը յառից ընկ. Թափառականի դէմքին։ Այդ դէմքը, ի դէպս, շատ քիչ էր մտն թափառականի դէմքի. սափառած, կռիւ, աւելի շուտ սայրանային լակէ՛յի դէմք էր դա, քան յառաջիկայի Թափառականի» (Ե. Հատոր, էջ 160)։

Շարունակելով այս տիպարին ներկայացումը, Չարենց կը յայտնէ, թէ «հոգիի փափառ»-ին փոխարէն՝ «անոր դէմքին կը վայելէր «եւրասական» ծագող գլխարկը, նուրբ «պատմական» սպիտակ աւ լայնքը» (Ե. Հատոր, էջ 161)։

Ընկ. Թափառականը իր կողքին կառնած էր պատկառելի գեմք մը, «որը հետագայում խորհրդանշող դարձաւ ամբողջ մի «պետական կազմակերպութեան»։ Զէ՛ր, հագար աւ բիւր անգամ — չէ՛ր սագում այդ գեմքը ընկ. Թափառականին, բայց ընկ. Թափառականը, ինչպէս նա ցոյց տուեց այդ հետագայում, արժանի էր, այո՛, այդ գեմքը կրնային» (Ե. Հատոր, էջ 161)։

Չարենցը պետական կազմակերպութեան խորհրդանշող գեմքի նկատմամբ, կ'անհարկէ տասը հարուածնոց մասնաճիւղայիններէն, Դաշնակցականները մասնաճիւղայիններ կը նկատուէին, բայց ընկ. Թափառականը հեղինակին մըն էր։ Իրօք, Թափառականի տիպարին համար Չարենցը նկատի ունէր հեղինակին ֆետայի Պանդուխտը՝ Միքայէլ Սեբեանը, որ զինուորական կրթութիւնը ստացած էր Պուլկարիայ մէջ։ Առաջին Համաշխարհային

պատերազմի ընթացքին կը վերադառնայ Կովկաս։ Իբրեւ կամաւոր կ'անցնի երգրում՝ Կարսի վրայով։ Կը մասնակցի Սարգարապատի ճակատամարտին՝ վերին Թալինէն իջնելով ու թիկունքէն զարոնելով թշնամին։ Կը մեռնի Սարգարապատի մէջ, 1920ին, վարակուելով տիֆէ (Ա. Ջաբարեան, «Մանօրագրութիւններ», էջ 555-556) (*)։

Չարենց հեղինակի առարկայ կը դարձնէ այս տիպարն ալ՝ ընկերակիցներուն հետ, ինչպէս Դաշնակցականները։ Չարենց կ'ըսէ, թէ «մացիոնալ-դեմոկրատները», այսինքն՝ հեղինակները, «մոյմիսկան հետաքրքրական կեանքի դաշնակցութիւն վրայ «ճնշելու»-ն զարգացնելու հակադրելով՝ նուազում են իրենց հեղինակները» (Ե. Հատոր, էջ 161-162)։

Գնենք ալ Ալուր կամ Այրուշա Ներսիսի տիւր ու թաւալ տեսած պատկանելի նախընթացի մըն էր։ Քաղաքի ամէնէն հարուստն էր ան։ Թէեւ հրամանատար մը չէր, ոչ ալ զինուորական, բայց իր ունեցած դիրքին եւ ազդեցութեան համար ստացած էր այդ յորջորջումը։ «Գնենք ալ Ալուրի դիրքին մասին մօտաւոր գաղափար տալու համար քաղաքը է տեսլ, որ միայն քաղաքային է իշխանութիւնը՝ ամէն անգամ այդ քաղաքին աջակցելով» (Ե. Հատոր, էջ 42)։

Նահանգապետը՝ այսինքն Կովկասի փոխարքան։ Իրականութեան մէջ գնենք ալ Ալուր կը ներկայացնէ, բայց կարսեցիներու վկայութեան, մեծահարուստ Արեւանդը Չարենցի համար (Ա. Ջաբարեան, «Մանօրագրութիւններ», էջ 523-524)։

«Հետաքրքիր անձնատրուքիւմ է Օսեի Նարիմանովը — Օսեի Նարիմանովը կ'իմ հարկաւոր է հասկանալ» (Ե. Հատոր, էջ 43)։

Պ. Օսեի Նարիմանովը հայադարձ պատուար մըն էր։ Գնենք ալ Ալուրի կար-

(*) Տե՛ս նաեւ Թորոքիւմ Թաւրշեանի յօդուածը «Սովետական դաշնութեան» ամսագրին մէջ՝ «Երկիր Նայիր»-ի երկու կերպարի ճշտութիւնը վերջապէս, 1997, քիւ 9, էջ 46-48։

ծիրոյ՝ «եռօրի է, իսկական եռօրի»։ Թէեւ Հայաստանն ծնած էր ան, սակայն այնքան բնութեամբ էր նայիրեան այդ քաղաքին, որ կտրուիս այդանգիցի ըլլար։ Ահա թէ ինչու Նարեկանովը վէճեր, կը ունենէր, ընտանեկան խնդիրներ, ամուսնական անախորժութիւններ եւ այլապէս փոքրիկ դատեր «սիրում է հարքել ո՛չ արպէս պաշտօնեայ, այլ, այսպէս ասած՝ ընտանեքար, կամ, ասելի ճիշդ՝ հայրաբար — որի համար եւ նա ամենաիրաւացի կերպով վայելում է բոլոր բաղաժանցիներէ յարգանքը» (Ե. Հատոր, էջ 43)։

Պատերազմի ընթացքին՝ ան կը դառնայ Նայիրիի Ձինուորական Գերագոյն Ատենոնի անդամ։

Արդէն Կասպարիչը Հիւանդանոցի բժիշկն էր, որ իր գեղեցիկ կնոջ ինքնապատկերէնէն ետք, Ղլազրգիւս վրձակ մը ունէր։ Այդ պատճառով՝ Կասպարիչ ձեռք ջաշած էր մարդասիրական տրամադրութիւններէն եւ ինքզինք նուիրած էր Թըրթախդի։ Հիւանդանոցի պարտականութիւնը փոխանցած էր Հատորակ ծառայ՝ պիթիոցի Արշակին։ Վերջինս, Հիւանդանոցի պատասխանատու նշանակուելով՝ Հնարաւորութիւն ստեղծեց բժշկական օգնութիւն հասցնելու ամէն գիժողի եւ ամէն ժամահակ։ «Ինչպէս որ Արշակն կը կոչէին զինք, որուն Համբաւը կը Հասնէր ո՛չ միայն մինչեւ քաղաքի յետամընաց Թաղերը, այլեւ՝ դրացի բազմաթիւ գիւղերը։ Այս բոլորով Հանդերձ, Բժ. Արդէն Կասպարիչը ալ ձեռքն էր Մագուլի Համոյին։ Այդպէս է, որ պատերազմի ընթացքին դարձած էր Նայիրիի Ձինուորական Գերագոյն Ատենոնի նախագահը, «քաղաքի ու շրջանի ամենաազգեսիկ մարդը. այս, մայրիկ ստողներ կային, որ աւելի ազգեցիկ էին ինք»։ Մագուլի Համոն։ — Բայց մեմք, ի հարկէ, չեմք հաւատում նման երեխայամիտ կարծիքներին» (Ե. Հատոր, էջ 232)։

Միական դպրոցի տեսուչ եւ աւագ ուսուցիչն էր Բիւղանդ Վարդերեսեանը, որ Երեսունի մօտիկ ճեմարանաւարտ մըն էր։ Իր Հայերէնը սորված էր Մանուկ

Արեղեանէն, բան մը, որով կը պարծենար յաճախ։

Ընկեր Սուրէն Վառդեանը եխական դպրոցի ուսուցիչ մը ըլլալով Հանդերձ, «Ընկերութեան» անդամ էր։ Տելեֆոն Սեթոն բաղնիքին մէջ պատահմամբ առնոր կոնսկին վրայ տեսած է «Կապոյտ կապոյտ» գծեր։ Պատերազմէն առաջ, պարզ գործիչ մըն էր ան։ Սակայն, պատերազմի ընթացքին արդէն դարձաւ նըշանաւոր գործիչ, «պատկառելի ամօնաւորութիւն»։ Ինքն է Հեղինակը պ. Մարութէն Գրատաւատեան եւ Կարօ Դարայեանին՝ Փարայեան անուանակոչութեանց։ Իր կարգին, պ. Մարութէն զինք կը կոչէր «նայիրեան մի բթամտութիւն»։ Պատերազմի ընթացքին «նշանակաւեց քաղաքի ու շրջանի միջոցաւեան ու առաջին գործը, որով միջոցաւեան գրառեց ընկ. Վառդեանը, երեսակայն»։ Եւ Կարօ Դարայեանի կորած դիակի արանում էր» (Ե. Հատոր, էջ 211-212)։

Նայիրիի անկումին, Մագուլի Համոյի կողքին, ինքն ալ կախաղան կը Հանար Հեռագրատիւններէն մէկուն վրայ։

«Երկիր Նայիրի»-ն ուղիւստեղ ստեղծարարներ կը գտնուին Լորիս-Մելիքեան փողոցին մէջ։ Անոնք կը ներկայացնեն Հետեւեալ պատկերը։

Տելեֆոն Սեթոն սրճարանատէր էր։ Ամէն մարդ կը յաճախէր իր սրճարանը, որ քաղաքական ակումբ մըն էր գրեթէ։ Այնտեղ կը խօսուէր ամէն նիւթի մասին։ «Տելեֆոն» յորջորջումը կու տային իրեն, որովհետեւ ամէն բանի մասին տեղեկութիւն ունէր։

Պ. Արամարչը Երեսունը անց, սափաբարձաւ Երեսունի մըն է, առանց պիտի եւ առանց մօրուրի։ «Ինչպէս ասեմք, որ գրաւում է առեւտրով»։ Արամարչ կը կոչուի, որովհետեւ Փարիզէն բերուած ցուցանակ մը ունի, որուն վրայ գրուած է ֆրանսերէնով՝ «A bon marche»։ Կը վաճառէ տղամարդու եւ կանանց պատարաստ հագուստներ, արտասահմանէն ներածուած օծանելիքներ, սանաբեր, մըկրատներ։ Յաճախ անդործ է, եւ կը դանդախտ ասոր Համար։

Պր. Արամյանի դրացին է պ. Վասիլը, որ հարազատ աստիճան է: Միջանառակ է ան, լայն թիկունքով: Ունի չիլ ալտեր ու դեղին ծորուք: «Սիրում է անծիլիլիս շրթունքներն այնքան մոտեցնել սափրուողի դեմքին, որ նրա մաշկն փափուկ ցատկով հեռանա» (Ե. Հատոր, էջ 56):

Արամյանը առանձին յարգանք ունի պ. Մարտիկին նկատմամբ, որ մինչև ուսուցչական պաշտոնին հեռացումից, ամեն օր կ'ածիլուէր պ. Վասիլին քով, որուն շրթները գրեթէ կը քսուէին անոր դէմքին՝ անիլիլու աստին:

Կուզակար Սիմոնը դրացին է պ. Վասիլին: Կինտուրի Սիմոն կը կոչուի ան, որովհետեւ քաղաքին մէջ նշանաւոր է իբրեւ «քանչիլի «կինտուրի» պարող: Ամէն Բարեկենդանի Հինգշաբթին, երբ քաղաքի ակումբին մէջ կը ներկայացուի «Վարդանանց պատերազմը», նախըջի ներք կ'երթան անոնք՝ ա'ջ անջան դիտելու ներկայացումը, որքան Սիմոնի պարը:

Ղահվէճի Սեթոն չոր ուրն կը ծախէ: Միջանառակ է, թորչոժած դէմքով, անպիսի եւ անմօրօք, «ճիւղիմու կերպարանք»: Մինչդեռ ուրիշ խանութպաններ մէկ անհակէ աւելի արքանքներ կը վաճառէին, Ղահվէճի Սեթոն մէկ անհակ կը ծախէր միայն: «Անոր խանութը — ամենամի մի արջ է՝ ոգորմիլի անկիւն, ուր մկները միայն կարող են հաւաքուիլ, եթէ միայն նրանք, այսինքն՝ մկները, ընդհանրապէս կարող են հետաքրքրուիլ չոր տարնով» (Ե. Հատոր, էջ 57):

Հաջի իֆէնտի Մանուկօֆը մանուֆախտուրա կը ծախէր: Միեւնոյն ատեն լուսայարօրէն էր: Անգլիերէն գիտնալուն պատճառաւ, կը վաճէր քաղաքացիներուն յարգանքը: Կատարի հայրենասէր մը:

Տատկանշական տիպարներէն մէկն է Ենոք Կարապետեանը, գաղաղազործ: Տուն չունենալուն պատճառաւ՝ իր վրայ կը փակէր իր խանութը եւ կը քանար իր շինած գաղաղներէն մէկուն մէջ: «Այդ բանն ամբողջ փաղաքը գիտէ եւ ան

հա եենց այդ է պատճառը, որ նրան փափուկ անուանում են Մեռելի Ենոք, իսկ երեխաները վախենում են նրանից եւ չեն սիրում անցնել դաղաղագործի խանութի առաջից» (Ե. Հատոր, էջ 76):

Պատերազմի ընթացքին, երբ նախըջի իւրաքանչիւր խանութպան ուրախ էր, որովհետեւ առեւտուր կար, Մեռելի Ենոքն ալ, սկզբնական շրջանին, կարծեց, «որ իր գործը եւս արդակ կը գրանայ, բայց շարաշար սխալուեց. մեռնողները, միշտ է, շատացան աշխարհում, բայց ա'ջ այնպիսիք, որոնք պէտք ունեին դաղաղի» (Ե. Հատոր, էջ 103):

Ահա թէ ինչու «ճանճրոյթից ճանճրացած» կ'երթար Տեյեֆոն Սեթոյի սրահարանը, ուր տոմիւս կը խաղար Գոռ Արութին հետ (Տեյեֆոն Սեթոյի եղբայրը), որ լէր աշխատէր: Երբ վերջինս սկսաւ թէյ ծախել կայարանը, Մեռելի Ենոքը, անկէ մղուելով, սկսաւ դրաղիլ «ճեմի տառապանով»՝ «Երկիրապիտան» ենթարկելէ ետք իր նախկին գրադուր: Բայց երկուքն ալ — Գոռ Արութը եւ Մեռելի Ենոքը — նոյն դժբախտ ճակատագիրը ունեցան. չողեկառքին տակ մնացին անոնք՝ երբ կը փորձէին հեռանալ Նախիթին:

Անշուշտ, ուրիշ տիպարներ ալ գոյութիւն ունին «Երկիր Նախիթի» վէպին մէջ: Բայց անոնց հետ եւ անոնցմէ վեր, իբրեւ գլխաւոր տիպար, ներկայ է հեղինակը, որ կը գործէ, կը մեկնարանէ, կը միջամտէ, կը բորբոքէ, կը գործորոշէ, կը վերադառնայ: Արդէն վէպը կը պատմուի առաջին դէմքով: Այն տպաւորութիւնը կ'ունենայ ընթերցողը, որ կը գտնուի հաւաքովի մը մէջ, եւ ջարենց կը պատմէ նախիթի պատմութիւնը իր ունկնդիրներուն: Այսպէս, «Սիրելի ընթերցող»՝ Ներիթ, որ այս հարցերի պատասխանը չես գտնի այս գրքում» (Ե. Հատոր, էջ 12):

«Սիրելի ընթերցող, քաղնում եմ, որ դու... այո, դու — գտնես Նախիթին» (էջ 13):

«Աստուած յանի, ընթերցող, այդ

սեմետկն ընկնես, որ ընկար — ագատ-
ւելիք չկայ» (էջ 32) :

«Սրտի անհուն քրքրուով ես ճեռնա-
մուխ եղայ Որա (Նախորդ) ձկարագրու-
թեանը, սիրելի ընթերցող, սիրելի է մա-
իմն, որպէս մանկութեան օրօրան, եւ
ծանօթ եմ Որա բնակիչներն իմն, ինչպէս
հինգ մասս, կամ այս գրիչս, որով գը-
րում եմ հիմա» (էջ 77) :

«Գուցէ զու կ'ուզէիր, սիրելի ըն-
թերցող, որ ես, եւրպակամ ամուսնի
հեղինակներին հետեւելով, մամրամասն
վերլուծութեան ենթարկէի «հերոսանե-
րիս» հոգեբանութիւնը» (էջ 79) :

«Մենք պիտի խուսափենք զանազան
ենթադրութիւններ անելուց աւելցնալ
ցուցիչներ համեմուց. պիտի պատմենք
լոկ այն, ինչ որ մեզ յաջողուել է առե-
նել անփական աչքերով կամ լսել մարդ-
կանցից, որոնք մեր աչքին ունեն ճշմար-
տախօսի անկաշառ կերպարամբ» (էջ 208-
209) :

«Բանն այն է, որ *Կարօ Դարայեանը*
եւս, իր եղբրական վախճանից մի քա-
նի օր առաջ, իմ, հեղինակիս, ներկա-
յութեամբ մի անգամ յայտարարեց մի
բաւական բազմամարդ ժողովում, որ...»
(էջ 213) :



«Ներկիր Նայիրի» *վէպին հրատարա-
կութիւնը դուռ բացաւ բազմաթիւ բա-
նալէններու եւ տարակարծութեանց աշ-
խարհի հոսանքներու միջեւ։ Ասկէ՝ նաեւ
զայն գերազնահատելու եւ ստորագնա-
հատելու բոլոր փորձերը։*

Իր միւս գործերուն նման, *Եղիշէ*
Չարենցի այս երկն ալ աւարբեր մեկնա-
բանութիւններու ծայր տուաւ։ *Պէտք է*
ըսել սակայն, որ ծայրայեղութեանց
պատկեր մը կը ներկայացնեն այդ մեկ-
նաբանութիւնները։ Ասիկա կու գայ ա-
ռաւելարար վէպին զաղափարական բո-
վանդակութենէն։ Մա'նաւանդ հակա-
դաշնակցական քննադատներն ու գրակա-
նագէտները անոր մէջ ուղեցին փնտռել
ու տեսնել իրենց փափաքածը՝ իրենց ու-

նեցած վարկածները իբրեւ ճշմարտու-
թիւն փաստելու համար։ Ահա թէ ինչու
դանուեցան մարդիկ, որ ոչ մէկ թերու-
թիւն տեսան «Ներկիր Նայիրի»ին մէջ՝ իբ-
րեւ կառոյց ու խորք։ Եղան ուրիշներ,
որ անոր թերութիւնները նկատեցին մա-
կերեսային, իսկ ոմանք մինչեւ եօթնե-
րորդ երկինք բարձրացանքին վէպը՝ հե-
ղինակին տալով բազմաթիւ մակդիրներ։
Ասկէ՝ նաեւ բաղդատութեան ու համե-
մատութեան փորձը «Ներկիր Նայիրի»ին՝
դուռ-գործոցներու հետ։

Սուրեն, *կը ներկայացնեն այդ*
կարծիքներէն ոմանք, որոնց ընդմէջէն
նաեւ արժեւորումը «Ներկիր Նայիրի»ին։

Կր խօսուի երգիծարան *Չարենցի* մա-
սին, որուն «սահմանափակումն է՝ նե-
թարկուին բոլոր զաղափարական հակա-
ռակորդները, Ս. Արզումանեան կ'ըսէ,
թէ «Ներկիր Նայիրի»ն «ետչ երգիծական
գրականութեան ամենաբարձր ստեղծա-
գործական գործացման եւ նոր ամենա-
նորի մշակման իմաստով անգնահատելի
արժէք է ներկայացնում։ Դա եւ շարու-
նակութիւն է, եւ սկիզբ։ Կամուրջ է դա-
սական ժառանգութեան եւ մորթալմ
գրականութեան միջեւ, դասականի համ-
րացումն է, նորի հիմքը՝ մի որոշ ի-
մաստով՝ ծրագրային նշանակութեամբ։
...Չարենցն ստեղծեց արուեստի մի այն-
պիսի կոթող, որն իր մէջ սինթեզում է
ստիլիական-երգիծական արձակի բոլոր
տարրերն ու յատկանիշները... Նրա քա-
ղաքական ստիլիան շատ տղերսներ ու-
նի Յ. Պարոնեանի «Կամրջներին», «Ազ-
գային քոյրեր»ի եւ այլ ստեղծագործու-
թիւնների հետ» :

Այս հաստատումներուն հիմք կը ծա-
ռայեն անշուշտ *վէպին* հերոսները, ինչ-
պէս նաեւ պատմութիւնը եղանակը։ *Պէտք է*
ըսել սակայն, թէ սրամտութիւնը կը լը-
փոթուի երգիծանքին հետ։ Այո՛, հեղ-
նանք կայ վէպին մէջ, բայց առկա որ-
եւէ մեւոյ՝ «երգիծարան»ի մակդիրը չի
տար Եղիշէ Չարենցին։

Վէպին մէջ գերիշխող է սրամտու-
թիւնը, որ Եղիշէ Չարենցին գրական
յատկանիշներէն մէկն է։ Սրամտութիւն

ներ, երբեմն դառն, գոյութիւն ունի նաեւ Զարնցի բանաստեղծութիւններուն մէջ, բայց որեւէ կերպով «երգիծարան-բանաստեղծ» յորջորջումը չի տրուիր բանաստեղծ Զարնցին:

«Երգիծանքի խարազանը Զարնցն, առաջին հերքին, աւղղում է Մազուքի Համոյի դէմ» (Ս. Աղաբաբեան, յիշուած գործը, էջ 417): Կամ՝ «Մազուքի Համոն Յակոբ Պարոնեանի կողմից ժամանակին ծագրուած «ազգային ջոզերի» հարաբար եղբայրն է» (Յակոբ Սալախեան, յիշուած գործը, էջ 107):

Ի դուր են, սակայն, այս հաստատումն ու բաղդատական փորձը: Ի դուր են նմանօրինակ բոլոր փորձերը: «Ազգային ջոզեր»ը, որ Յակոբ Պարոնեանի «լուսն-գործոցն է, անհայտնեաց երեւոյթ է ո՛չ միայն հայ, այլեւ՝ միջազգային երգիծական գրականութեան մէջ: Նոյնը չէ պարագան Եղիշ Զարնցի «Երկիր Նայիրի» վէպին: «Ազգային ջոզեր»ու իւրաքանչիւր դէմքը անշնչելի հեռք կը ձգէ մեր ուզեղին վրայ: Ժամանակը ո՛չ միայն պիտի չկրնայ խելի որեւէ բան անոր պիտի չէն, այլեւ աւելի պիտի պարծառանքն դայն: Արդէն այդպէս չէ՞ որ անոր հրատարակութենէն հարկւրածեակ մը ետք, «Ազգային ջոզեր»ը կը մնայ անգերազանցելի եւ միշտ փնտռուած: Նոյն պատկերը չի ներկայացներ, սակայն, «Երկիր Նայիրի» վէպի զլիւսուր հերոսը, որ «հարազատ եղբայր» չէ «Ազգային ջոզեր»ու գիմաստներներուն, որովհետեւ հաստատական իմաստով ներկայացուած է Մազուքի Համոն: Գաղափարական հակահաստատութեանց մէջ չենք ուզեր ինչալ ալ պարագային, սակայն, պէտք է ըսել, որ Նորհատեաններու ջանքերով էր, որ Կարսը (Նայիրին) դարձաւ հեռոց մը, ուր պատրաստուեցան հայ յեղափոխականներէն շատերը, որոնք անցան Երկիր, Անոնցմէ են Արամն ու Ռուբէնը (տե՛ս Ռուբէն, «Հայ յեղափոխականներին մէջ», Բ. Հրատարակութիւն, Համազգայինի Վահէ Մէթեան ապարան, 1972):

Միւս կողմէ, Ս. Աղաբաբեան «Երկիր Նայիրի»-ն կը հաւասարեցնէ «Ընկեր Փանջանի»-ն: «Երկրացման ուժով քերուս «Երկիր Նայիրի»-ն կարգ է հաւասարուել տիայն երուանդ Օտեանի «Շնկեր Փանջանի»-ն» «Համապարտարգութիւն ի Մազուքի» (1911) քաղաքական սուր պամփիւտը, ուր Դաշնակցութիւնը իր գործունէութեան ամենատեղում, բայց ամենօրեայ դիմափոխութիւնների շրջանում, արժանացաւ մեծ երգիծարանի մեղադրական ամոզող քղբին» (Ս. Աղաբաբեան, «Ե. Զարնց», էջ 363): Ս. Աղաբաբեան կ'աւելցնէ, թէ «Մազուքի Համոյականութիւն» ու «Փանջանիականութիւն» (...). «Գարնան հասարակական որոշակի խաւերի սոցիալական կերպարանքը բացատրող եւ քաղաքական դիմագիծը բնութագրող հասկացութիւններ, դարձան հասարակ ամուսններ, մտան ժողովրդի խոսակցութեան ու գրոյցների մէջ» (էջ 363):

Ճիշդ չեն այս հաստատումներն այլ Ներկայիս, գրական կամ ժողովրդական մակարդակի վրայ կը խօսենք «Փանջանիականութեան» մասին, բայց խօսք չըկայ «Մազուքի Համոյականութեան» մասին: Այսօր, Սփիւռքի մէջ, մեր ժողովուրդը նոյնիսկ չի գիտեր, թէ ի՞նչ է «Մազուքի Համոյականութիւնը», ոտկայն լսած է եւ տեղեակ է «Փանջանիականութեան» մասին: Կ'երթանք աւելի տալ՝ եթէ «Փանջանիականութեան» մասին կը խօսուի Հայաստանի մէջ, ինչո՞ւ ուրեմն Երուանդ Օտեանի այս գլուխ-գործոցը ցարդ ոչ մէկ հրատարակութեան արժանացած է Հայաստանի մէջ, հակառակ անոր, որ Շ. Օտեանի մը նացեալ բոլոր գործերը հրատարակուած են քաղմութիւն հատորներու մէջ: Ինչո՞ւ չի հրատարակուիր «Ընկեր Փանջանի»-ն, որ կը նմանցուի «Երկիր Նայիրի»-ին:

Գլուխ-գործոցներու հետ «Երկիր Նայիրի»-ի բաղդատականներու շարքը չէ վերջացած սակայն:

Ս. Աղաբաբեան կ'ըսէ, թէ «Երեւելի մի գիրք, որի հետ կայնելի է համեմատել «Երկիր Նայիրի»-ն, դա հաշտաւոր Արմի-

իսանի «վերք Հայաստանի...» վերջում է՝
(էջ 436)։ Ան կ'աւելցնէ տակաւին, որ
երկու գործերը թէեւ բազմաթիւ ընդ-
հանրութիւններ ունին, բայց կայ մի
կէտ, որոնք պէտք է խօսել ոչ թէ գե-
ղարուեստական — գրական ընդհանրու-
թիւններէր, այլ աւելի մեծ կապից՝ որո-
նցութիւնից (էջ 437)։ Ս. Աղաբաբեան
կ'ըսէ դարձեալ, թէ ժամանակներու
տարբերութիւնները որեւէ մեւով չեն
խանգարեր, «որ իրար գան այդ ստեղ-
ծագործութիւնները։ (...)» «Երկու վերջում
էլ, հնդկականներու ծրագրով, պատա-
խանում են հայ ժողովուրդի պատմական
ուղիների՝ ինքնութեան, հարցին։ Եր-
կու վերջում էլ Հայաստանի տուեալ ժա-
մանակի պատմութիւնը դուրս են բերում
համայնարկային պատմութեան ասպա-
րէզ» (էջ 437)։

Ճիշդ չեն նաեւ այս հաստատումնե-
րը։ Եթէ «Երկիր Նայիրի» մէջ կան
կարգ մը հատուածներ կամ պարբերու-
թիւններ, որոնք կը յիշեցնեն ինչպէս
Արտիանի «վերք Հայաստանի»-ն, առի-
կա չի նշանակեր, որ կարելի է համեմա-
տել երկու գործերը։ Յետոյ, արդեօք
«դիւրի նոյնութիւն» կայ երկու գործե-
րուն կամ հնդկականներուն միջեւ։ Արտի-
անը իր վէպը դրած աստի, միտքին մէջ
ունէր ամբողջ հայութիւնը եւ ո'չ թէ հա-
յութեան հատուած մը։ Այդպէս է, որ
մեր ժողովուրդին, ինչպէս նաեւ կենցա-
ղային հարցերու նկարագրութիւնը հա-
րազատ են «վերք Հայաստանի» մէջ,
ուր խօսողը ժողովուրդն է եւ հնդկա-
կը՝ ժողովուրդին մայնափողը։ Նոյնը չէ
պարագան «Երկիր Նայիրի» վէպին, ուր
Ջարենց իր ժամոգութեան մէջ հառ-
ւածականութիւն ունենալով հանդերձ,
քարոզական նպատակներ կը հետապն-
դէ։ Արտիանի միտքերը քարոզի մեւ
չունին, ոչ ալ քարոզական նպատակներ
կը հետապնդեն։ աւելի քան համոզիչ են
անոնք։ Աղասին, «վերք Հայաստանի»
գլխաւոր հերոսը, գեղեցիկ է, ուսեղ,
բարի, մարդասէր, ընկերասէր, ազա-
տութեան պաշտպան։ չարիքի դէմ է ան։
Այս տեսակէտէն նոր Սասունցի Դաւիթ

գարութեան պաշտպան։ Միւս կողմէ,
«Երկիր Նայիրի»-ի գլխաւոր հերոսը՝
Մադութի Համոն այս բարեմասնութիւն-
ներով չի ներկայացուիր մեզի։ Ընդհակա-
ռակն։

Այս բոլորով հանդերձ, «վերք Հա-
յաստանի»-ն եւ «Երկիր Նայիրի»-ն ծրագ-
րային դրականութեան կը պատկանին,
թէեւ Արտիանին համար վէպին փառը
այնքան ալ չի մտահոգեր զինք՝ որքան
Ջարենցի պարագային։ «վերք Հայաս-
տանի»-ն, ինչպէս նաեւ անոր հնդկական կը
նմանին լեզուն աւագանի մը, որմէ ելք կը
փետուեն ու յանկարծ կը խայթին առա-
տութեամբ։ Ահա թէ ինչու Արտիանը
յաճախ նկատի չէ ունեցած վէպին պա-
մանները։ Արտիանն ու Ջարենցը դի-
մանութիւն կ'ընեն ընթերցողին հետ։
Արտիանի պարագային այրած սիրտին
յորդումը աւելի տպաւորիչ է դիմանու-
թեան մէջ, քան Ջարենցինը։ Անշուշտ
արուեստի տկարութիւն մը պիտի բլլար
առիկա։ Բայց ինչպէս Արտիանի մօտ
առիկա առատարանութիւն է, հեղեղ մը
անկեղծ հայրենասիրութեան, որ յառ-
կարծ յորդած է եւ որ անխօս մնալու դա-
տապարտուած ժողովուրդին անակնկալ-
րէն լեզու առած ու, հետեւաբար, ա-
ռատօրէն խօսող արտայայտութիւնն է։
Օչականի հաստատումով, հոմերական
մըն է Աղասին, որուն տիպարը հարա-
զատ է մեր ժողովրդական հերոսներու
տիպարին։ Մեր իտէալին մարմնացումն
է Աղասին, քնքուշ, աշխատանքի եւ առ-
նկարագրութիւն կայ «վերք Հայաստա-
նի»-ն մէջ. պարզին մէջ վսեմը կայ այդ
դործին մէջ։ Արդեօք այս հաստատու-
մէնը լիովին կը պատշաճին Ջարենցի
«Երկիր Նայիրի»-ին։ Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ
ժամանակի տարբերութիւնները որեւէ
մեւով չեն խանգարեր, որ իրարու գան
երկու ստեղծագործութիւնները։

Տակաւին։

Ս. Աղաբաբեան կ'ըսէ դարձեալ, թէ
«ես իմ անուշ Հայաստանի բանաստեղ-
ծութիւնը շնորհով ու ոգով այնքան հա-
րազատ է «Երկիր Նայիրի» վէպին, որ
իրիւր բնաբան կարող է դրուել մրա մա-

կատին կամ էլ մի երկրորդ առաջարկում՝ մուտք լինել նրա համար» (էջ 366)։

Եթէ ճիշդ ըլլար այս հաստատումը, այն ատեն ինչո՞ւ քսանական եւ երեսունական թուականներուն եւ անկէ ետք՝ մեղադրեցին ու դատապարտեցին Չարենցը իբրեւ ազգայնականութեան գաղափարակիր՝ իբրեւ «սպանեցուցիչ» ապացոյց նկատի ունենալով «եւ իմ ամուլ Հայաստանի» բերդացած բանաստեղծութիւնը։ Այս առընչութեամբ, ոչ մէկ ակնարկութիւն եղաւ «Երկիր Նայիրի»ին նկատմամբ՝ իբրեւ մէկ արտայայտութիւնը Չարենցի ազգայնականութեան։ Յետոյ՝ ինչո՞ւ Չարենց հետադային (իբրեւ իբրեւ վախճանը դուշակելով) դիտարկեցաւ որ ու հրապարակով թաղեց իր բանաստեղծութիւններէն շատերը — որոնք «ազգայնական թոյն» կը պարունակէին, որոնց կարգին նաեւ «եւ իմ ամուլ Հայաստանի» — եւ չթաղեց «Երկիր Նայիրի»ն, որ, ինչպէս կ'ըսուի այսօր, իր շունչով ու ոգիով աշխարհ հարգատէ՛ր այդ բանաստեղծութեան։ Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ «եւ իմ ամուլ Հայաստանի»ն իբրեւ թնաբան կրնայ գրուիլ «Երկիր Նայիրի»ին նման վէպի մը ճակատին, կամ ալ՝ «մի երկրորդ առաջարկում՝ մուտք լինել նրա համար», երբ իր հուշեմքներ հակ է վէպի գաղափարներուն։

Հայ գրականութեան կարգ մը գլուխգործոցներու հետ հաստատեցնելով հանդերձ, «Երկիր Նայիրի»ին միայն կը տեսնուին Սայրիկով Ելեգիին, Անտրէյ Բեկիի եւ, մասնաւորապէս, Գոգոլի ազդեցութիւնները (Ս. Աղաբաբեան, «Երկրէն Չարենց», էջ 434-435)։

Ո՞ր է «Երկիր Նայիրի» վէպին տեղը խորհրդահայ գրականութեան մէջ, ըստ խորհրդահայ գրականագէտներու եւ չարենցագէտներու։

«Երկիր Նայիրի» վէպով ժամանակագրական մարտերու սկսուեց մեր (խորհրդահայ) արձակի պատմութեան մէջ. «Երկիր Նայիրի»ն այն վէպն էր,

գրանիտէ հիմնաքար, որի վրայ բարձրացաւ սովետական վիպագրութիւնը» (Ս. Աղաբաբեան, էջ 128)։ Նոյն քննադատը կ'ըսէ դարձեալ նոյն էջին վերայ. «Արձակում եւ Չարենցը եզօր ու շունչայից է, խոր ու ամենատես։ Արձակը մոյլակա նրա գործի մեծութեան» խորհրդանշանն է»։

